



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3629



2018

0.0

2002



Հայոց
ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Խ. 20

ՀԱՅ

ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ժ. Տ.

աշխատասիրութիւն

Գ. Տ. Ա. Ե. Ա. Ե.

ԵՐԿՐՈՐԴ ԹԻՎ:

1869

ԹԻՖԼԻՍ

Հ. Ենթական Եկա Եկա. Տպարանութը.

№ 12.1

Город Баку
Сентябрь 1918 г.

491.99-8

Ը-43

ԷՆԹԵՐՅԱՐԱՆ

Հ Ա Յ

ԵՐԵԿԵՐԵՐԻ ՀԱՄԱՐ

աշխատասիրութիւն

Գ. Տ. Ա. Եկ Ա. Ե.

Երկրորդ տիպ:

1 8 6 9

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Дозволено Цензурою. 30 Августа 1869 года. г. Тифлисъ.

45234-чк

30116-63

ՅԱՆԿ

ԱՐԵԱ:

Ուսումնարան	1
Երեխան գաշտումը	8
Խաղացող չները	9
Օրինաւոր գործածած փողերը	10
Բարեսիրտ երեխայ	11
Տիրութիւն	12
Ինչի համար է հարկաւոր փողը	13
Կարեկից աղջիկ	15
Պապն ու թոռը	17
Անհնաղանդ աղջիկ	18
Շանսալարհորդ	19
Քաղաքավարութիւնը ամենի համար դարդ է	20
Երկու ինձորի ծառ	21
Մեխակներ	22
Տանձի ծառ	23
Լաւ անունը հարստութենից առաւել է	25
Գիւղացին և նապաստակը	26
Ծտերը և կաքաւը	27
Երկաթի կտոր	27
Ծերը և երեխաները	28
Զին և էջը	29
Թանկազին խոս	30
Ազուաւ	31
Էջը և սոխակը	32
Ազուէսը և կռունկը	32
Ծերն ու երեխաները	34
Մարմնի արաւաների վրայ չպէաք է ծիծաղիլ	34
Շներ	36
Բաղեր	37
Ցիծեռնակներ	36

Երեխան և շերամը	40
Մեղուն և ճանճերը	40
Տաք և սառն արիւն ունեցող կենդանիները	41
Ինչով են զանազանվում բոյսերը կենդանիներից	43
Ինչով են զանազանվում բոյսերը հանքերից	44
Արեղակ	44
Խելօք ճիճու	46
Տարուան եղանակները	48
Ամառուան շոգեր	49
Արեղակի փայլումն ու անձրելը	51
Ծիտն ու երեխան	51
Բարի հայր	52
Եկեղեցի	53
Հաւատարմութիւն	54
Մարդու բարեկամները	55
Ճշմարիտ բարեղործութիւն	56

Լուսացաւ, լուսացաւ	58
Արեղակ արեղակ դուս արի	58
Եպուց կիրակի է	59
Ինչու կուկաս դուն, զառնիկ	59
Մեղնից շատ առաջ կար մի թաղաւոր	60

Հայկ	62
Արայ դեղեցիկ	63
Վահազն	64
Արդար	64
Արտաշէս երկրորդ	66
Արտաւազդ երկրորդ	67
Տրդատ թաղաւորը և Գրիգոր Լուսաւորիչը	68
Հայոց տառերի զանելլը	71

Վարդանանց պատերազմը	72
Աշուա ողորմած	75
Լոռն երկրորդ Կիլիկիայի Հայոց թագաւորը	76
Հայոց այժմեան վիճակը	77
<hr/>	
Եփեանակ, ծիծեանակ	80
Հեռացել եմ իմ մայրենի աշխարհից	81
Մայրենի լեզու, մայրենի բարբառ	82
<hr/>	
Գիրք Ճննդոց. գլուխ Ա. 1—29	84
» գլուխ Բ. 1—4. 7—10 & 15—25.	86
» գլուխ Գ. 1—24	88
» գլուխ ԻԲ. 1—15	90
Գիրք առակաց. գլուխ Գ. 1—35	91
» գլուխ Ժ. 1—32	93
Արբոյ Աւետարանի Յիսուսի Քրիստոսի որ	
Ըստ Մատթէոսի. գլուխ Ա. 18—25	95
« գլուխ Գ. 1—17	96
որ ըստ Մարկոսի. գլուխ Ժ. 1—25	98
որ ըստ Մատթէոսի. գլուխ Ի. 1—66	100
« գլուխ Խ. 1—20	104



ԵՆԹԵՐՑԱՐԱՆ

ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ:

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ.

Երկուչքամբի առաւօտը Գէորգին ու Աղեքսանդրը
վաղ վերկացան. աղօթք արխն ու քիչ հաց ու պանիր
կերան: Վաղուց մնում էին այդ երեխաները, թէ երբ
պէտքէ վերջապէս ուսումնարան գնան սովորելու: “Այն-
պէս կացէք, ինչպէս որ կրվայելէ խելօք և լաւ երեխա-
ներին, լսէցէք ձեր վարժապետին և լաւ ուշք ու մրտ-
քով սովորեցէք, առաց մայրն իր այդ երկու որդքերանց
Ճանապարհ զցելիս: Հայրը տարաւ Գէորգին ու Աղեք-
սանդրին մէկ մեծ առն: Երբ որ ներս մտան, դրանց
առաջն եկաւ մէկ մարդ, որին ասում են վարժապետ և
քաղցրութենով ընդունեց նրանցը, իմացաւ որ հայրը
իր որդքերանցը բերելէ ուսումնարան դիր սովորելու ու
խելօք մարդիկ դառնալու և շատ հաւանեց, ձեռը քը-
սեց նրանց զվարին ու տարաւ մէկ սենեակում (օթա-
խում) նստեցրուց երկուսին միասին: Այնանդ լիքն էին
Գէորգի ու Աղեքսանդրի հասակի երեխաներով, որոնք
աւրախացան իրանցն երկու նոր ընկերներ աւելանալու
փայ:

Դեռ վաղ էր ու վարժապետը չէր դաս տալիս առ
շակերտներին: Երեխաները վարժապետի դուրս գնալոց
յետոյ մօտ էլան Գէորգի ու Աղեքսանդրի զլիսին ու ամեն-
քը սկսեցին հարցնել, թէ ճէմ որդիքն էն, քանի՞ առ-
քիկան էն, Թրանդ են կենում, անուններն ինչ է ու այս-
պիսի էլի շատ բաներ: Գէորգն ու Աղեքսանդրն այս առ-
աջին անգամն էին աեւմում այսքան երեխաներ միա-
սին ժողոված ու սովոր չեին այդքան հարցմունքներին
միասին պատ սոխան տալու, այդ պատճառով էլ շփոթ-
վեցան, կարմրեցան ու չեին խմանում, թէ ու մը պա-
տասխան տան, ումը չէ: Գլխներին մօտ էլած աշակերտ-
ներից մէկ քանինոր մինչև անդամ ծիծառեցան էլ այդ
երկու եղայլների վրայ:

Երբ որ Գէորգն ու Աղեքսանդրը քիչ սովորեցան
աշակերտների հետ վարփելը, սկսեցին դէս ու դէն մը-
տիկ տալ իրանց չըրս կողմը, տեսան որ այն մենեակը,
որի մէջ որ էին, բաւական մեծ սենեակ է, պատերը խա-
ռակ ներկած, սենեակի մէկ քննչու մը կախէարած մէկ
պատիկը. ղրանից քիչ այս կողմը ղրած է պատի տա-
կը մէկ սեղան և մէկ ալթու. սեղանի վրայ կան՝ թա-
նաքաման, աւազաման ու զրիչներ: Գէորգի ու Աղեք-
սանդրի մօտ նստող աշակերտները հասկացրին սրանց,
որ այդ վարժապետի նստելու տեղն է: Իրանք աշակերտ-
ները նստած էին երկար աթոռների վրայ ու տաաջնե-
րին զրած էին մէկ այնքան էլ երկար սեղաններ. մին-
չև անգամ ամեն մէկ սեղանն ու աթոռը միմեանց կը-
պած էին: Սեղանների վրայ կային շինած թանաքաման-
ների զնելու տեղեր, իսկ մէջը մնդուկների նման բաց էին
քոքերի ու զտակի զնելու համար: Մինչև վարժապետի

դասը մէկ աշակերտ, որ միւսներից աւելի մլչ և խելօք
էր երեսւմ, կանգնած էր ոտի վերայ ու խնդրումէր
բարձր խօսող աշակերտներին ցածրացնել ձայնը, կամ
թէ պատրաստել դասը, որ վարժապետի հարցնելիս զիւ-
ակնան ու երեսը պարզ դուրս դան:

Յանկարծ դրսից զանդակի ձայն լսվեցաւ ու բոլոր
երեխաները զնացին հանդարտ իրանց տեղերը նստեցան:
Մէկ աշակերտ, որ շատ բարեկամացաւ Գէորգի հետ ու
մօան էր նստած, հասկացրուց նրան, թէ ոյդ զանդակի
տալը վարժապետի դալու նշանն է, այդ պատճառովէլ
ամենքը, որ լսն զանդակի ձայնը թէ չէ, պէտք է իր-
անց տեղը գնան նստեն հանդարտ ու պատրաստվին դաս
ասելու: Մէկքիչ ժամանակից յետոյ սենեակի դուները
բացելան ու ներս եկաւ զիրքը ձեռին վարժապետը. բա-
րովեց աշակերտներին, աշակերտներն էլ նրան տեսան թէ
չէ, ամենքը աեղեցը վերկացան, քաղաքավարի կերպով
բարովեցին վարժապետին ու յետոյ միտսին դարձան պատ-
կերի կողմը և աշակերտների մէկը բարձր ձայնով և հան-
գարտ ալօթք ասայ ու խնդրեց մեր ստեղծող Աստու-
ծուց, որ իրանցը շնորհը տայ լաւ սովորելու և խելօք ու
բարի մարդ դառնալու, որ կարողանան Աստուծու բոլոր
հրամանները կատարել:

Աղօթքի ժամանակը Գէորգն ու Աղջքանդը միւսա-
ների պէս ոտի վրայ կանգնեցան ու տաք սրտով խնդ-
րումէին Աստուծուց, որ օքչնէ սրանցը և շնորհը տայ
լաւ սովորելու: Աղօթքից յետոյ ամենքը նստեցան ի-
րանց աեղեցը, իսկ վարժապետը դուրս կանչեց իրա մօտ
այս նոր աշակերտներին: Ես հարցրուց դրանց անուն-

ները, թէ քանի՞ տարեկան են, թէ դիտե՞ն կարդալ ու գրել, թէ ով են դրանց ծնողները և թէ որտեղ են կես նում: Յետոյ այդ երկուսին կարդալ տվեց մէկ զբքից, անդիր մէկ երկու աղօթք ասացնել տվեց և տախտակի վրայ էլ գրել տվեց մէկ երկու առղ: Գէորդը զիտէր կարդալ, լաւ իմանում էր աղօթքները և բաւական լաւ էլ գրում էր: Վարժապետը այդ բանին շատ ու րախացաւ: Աղէքսանդրն իր եղբօրից թոյլ էր թէ կարդալում ու թէ գրելում: Վարժապետն այս երկու աշակերտի անուններն էլ գրեց մէկ զբքի մէջը, որտեղ զրած էին միւս բոլոր աշակերտների անունները և որին ասում են ցուցակ:

Վարժապետը յետոյ ասաւ Գէորդին և Աղէքսանդրին, թէ ես շատ ուրախեմ, որ դուք դոնեա կարդալ ու գրել դիտէք փոքր իշատէ, երեսումէ որ դուք ձեր տանը ժամանակը գուր չեք անցկացրել: Շարունակեցէք լաւ սովորել այստեղ երած ժամանակը, ու շք ու մոքով լսեցէք միւս աշակերտների կարդացածը, լսեցէք նմանապէս, թէ ինչ եմ ես հարցնում և ինչպէս եմ հասկացնում, մտածեցէք ձեր կարդացածի վրայ և մէկ խօսքով ամեն բան, ինչ որ լինումէ այստեղ մի թողարկը առանց ուշադրութեան:

Դասը սկսվեց կարդալուց: Վարժապետը պահանջում էր, որ աշակերտներն ասեն իրանց դասը բարձր և հանդարտ. երբ որ աշակերտներից մէկը սխալվում էր, վարժապետը ուրախութենով ուղղում էր նրա սխալը. բայց ինչպէս երեսում էր վարժապետին միենոյն բանի

Երբորդ և չորրորդ անդամ՝ ուղղելը դուրսկան չեր։ Ամեն
դժուար բառը վարժապետը խկոյն մեկնում էր և շատ
ուրախանում էր, որ իրան հարցնում էին աշակերտները
չըհասկացած բառերը։

Երբ որ աշակերտներից մեկը կարդաց մեկ քանի
տող, վարժապետը հարցրուց և պահանջեց, որ այդ
կարդացածն իրա բառերով ասէ։ Ավոր լսում էր և կար-
դում էր ուշադրութենով, նա լսւ էր պատասխան տա-
լիս. բայց ովոր չեր լսում, նա չեր խմանում թէ ինչ
ասէ։ Գիտացողներին վարժապետը գովում էր, բայց չը
զիտացողների վրայ բարկանում էր։ Երբ որ կարդալը վերա-
ջացրին, աշակերտները հանեցին իրանց տետրակիները և
գրիները։ Վարժապետը գրեց մեծ սև տախտակի վրայ
մեկ քանի հարցեր և հրամայեց աշակերտներին, որ պա-
տասխանները գրեն իրանց տետրակիների վրայ։ Գեորգը
և Աղեքոանդըն իրանց հետ թուղթ և գրիչ չեն բե-
րել, այդ պատճառով էլ նրանք չըկարողացան դրել։ Ա-
շակերտներից մեկը մեծ տախտակի վրայ էր գրում պա-
տասխանները կաւիճով (մելով)։ Վարժապետն ուղղեց
մեկ աշակերտի գրածը և հրամայեց որ ամենքն այնպէս
ուղղեն։ Գովեց այն աշակերտներին, որոնք որ խտակ
ունէին պահած տետրակիները և գրքերը, բայց նեղացաւ-
այն աշակերտների վրայ, որոնք որ կամ տետրակը կա-
րած չունէին կամ դիրքը կեղտառելէին։

Երբ որ դրելը վերջացրին, վարժապետը հարցրուց
նրանց այն օրուան դասը։ Մէկ առակ էր այն օրուան
դասը։ Շատերը շատ լսւ պատասխան տվին անսխալ,

պարզ և բարձր և ամեն բառ մեկնումէին, ինչոր վարժապետը հարցնումէր: Արևումէր, որ աշակերտները լաւ լսելէին վարժապետի ասածը և լաւ էլ սերտելէին անդիր առակը: Այդպիսու լաւ դաս ասող աշակերտներին վարժապետն ասում էր աշխատասէր: Բայց այն պիսի ծովը էլ կային, որոնք որ ոչինչ չէին գիտի: Գէորգն ու Աղեքսանդրը վարառւրդ արին, որ այն աշակերտները չէին խմանում դասը: Որոնք ու շաղրութեանով չէին լսում վարժապետին:

Պէտք ժամանակից յետոյ զանգակի ճայն եկաւ: Նոր աշակերտները չիմացան էլ, թէ ինչպէս շուտով վերջացաւ դասը: Շատ նոր բան իմացան նրանք և որովհետեւ լաւ ուշը ու մոքով էին լսել վարժապետի ասածը, այն պատճառով էլ շատ հեշտ էր երեւում նրանց դասի պատրաստելը: «Ահա! ի՞նչ է նշանակում դասատան մէջը ուշաղրութիւնը, ասացին Գէորգն ու Աղեքսանդրն իրանց մոքումը և ահա! ինչի՞ համար է ուղղում մեր վարժապետը, որ մենք ուշաղրութենով լսենք նրա ասածը»:

Պատից յետոյ վարժապետը կանչեց իրա մօտ գէտորդին ու Աղեքսանդրին և հաբցրուց, թէ ի՞նչ վարառւրդ արին նրանք դասի ժամանակը: Գէորգն ու Աղեքսանդրը պատմեցին նրան իրանց տեսածն ու լսածը: Վարժապետը զովեց երեխաներին, որ ուշը ու մոքով են լսել ամեն բան և ասաց նրանցը, թէ ամեն ժամանակ այնպէս ուշաղրութենով կըլսեն իրա ասածը, շատ կարճ ժամանակումը կարող են լաւ աշակերտ դասնալ:

Սիւս դասին եկաւ քահանայ: Նա պատմեց երեւ
խաներին մեր Փրկիչը Յիսուս Քրիստոսի ծնվելը, թէ ինչւ
ոլէս Աստուծու Հրեշտակն իմաց արաւ հովիւներին
Նրա ծնվելը, թէ ինչպէս այն հովիւները դնացին, ահա-
սան ախոռի մէջ Սուրբ Կոյս Մարիամին, Յովուէլին և
Երեխային: Գէորգն ու Աղեքսանդրը մեծ ու շաղրութե-
նով լսումէին քահանայի պատմածները: Արրազան պատ-
մութեան դասից յետոյ վայելչագրութեան դասն էր: Գէ-
որգի և Աղեքսանդրի ընկերներից մէկը տվեց նրանցը
մէկ թերթ թուղթ և մէկ մէկ հատ դրիւ: Նրանք թէ-
ոլէտ շատ լաւ էլ չէին գրում, բայց վարժապետը տես-
նելով նրանց աշխատութիւնը, ասաց որ շուտով կա-
րող են լաւ դրել:

Վերջին անգամն ածին վանդակը և գտաներն էլ աւ-
արտվեցան: Աշակերտները շաապով վեր քաղեցին իրանց
դրբերն ու սեւրակները, դարսեցին հարգերի մէջը և
զնացին իրանց աները: Գէորգն ու Աղեքսանդրն էլ ի-
րանց հարեւան աշակերտների հետ դնացին դէպի իրանց
տունը: Տանը ապասում էր նրանց մացը ճաշի: Նստե-
ցան հաց ուտելու և այն օրուան աշխատանքից յետոյ
շատ դուր եկաւ նրանց հացը: Երեկոյեան մայրը հար-
ցրուց նրանցը, թէ ի՞նչ շինմցին նրանք դաստան մէ-
ջը, ի՞նչ ասացին վարժապետները և ի՞նչ դասեր տվին
նրանցը միւս օրուան համար: Մայրը խոստացաւ նրան-
ցը որ հենց միւս օրը կառնէ նրանց համար հարկա-
ւոր դրբերը զրիչները և թուղթը: Խոմերը վառեցին
թէ չէ, երեխաները նստեցան դասը պատրաստելու: և
կէս ժամումը բոլորավին դիտեին դասը, որովհետեւ շատ
լաւ լսելիին իրանց վարժապետների ասածը:

Գեհորդն ու Աղեքսանդրը մէկ շաբաթ գնում էին
դասատուն և սովորում էին վարժապետների տված դա-
սերը: Կիրակին որ եկաւ, նրանք շատ ուրախ անցկա-
ցրին օրն այն մէկ շաբաթուան աշխատելուց յետոյ: Շատ
ուրախ էին երեխաները զեռ շաբաթ երեկոյեան, երբ
իմացան որ միւս օրը չըպէտք է գնան ուսումնարան-
այն պատճառով ուրախացան, որ ողջ օրը կարող էին
տեսնել իրանց մօրը: Երկուշաբթէ առաւօտը, թէպէտ
մէկ քիչ ծանր էր թվում ուսումնարան գնալը, բայց
գեհորդն ու Աղեքսանդրը, որովհետեւ խելօք երեխաներ էին,
շուտով գնացին իրանց դասի. նրանք սովորեցան շու-
տով այն բանը, որ ամեն օրինաւոր մարդ պէտք է աշ-
խատանքից առաջ հանդստանայ և հանդստանալուց յե-
տոյ նոր էլի աշխատէ:

ԵՐԵԽԱՆ ԴԱՇՏՈՒՄԸ:

Մէկ փոքր երեխայ կար: Հայրն ու մայրն ուղարկեա-
նին նրան ուսումնարան: Շատ սիրուն առաւօտ էր: Արեգա-
կը նոր դուրս էր եկել ու աշխարհը լուսաւորում, թըռ-
չունները ուրախ ուրախ երգում էին իրանց գեղեցիկ եր-
գերը, երեխայի սիրոը փոխվեցաւ, այս բաները որ տեսաւ,
կամեցաւ խաղալ ու չըգնալ ուսումնարան: Այս կողմն այն
կողմը մարիկ տվեց, տեսաւ որ մեղրաձանձը թռչոտում է ծա-
ղիկների վրայ: — Մեղրաձանձ, ասաց երեխան, արի՛, խա-
ղանք միասին: - Ձէ՛, պատասխան տվեց մեղրաձանձը. խաղա-
լու համար ժամանակ չունիմ, ես մեղր պէտք է ժողովեմ:

Անցկացաւ երեխան ու մէկ շուն տեսաւ: — Ա՛յ
շուն, ասայ նրան երեխան, արի՛ փոքր ինչ խաղանք: - Ձէ՛,
պատասխան տվեց շունը, ևս ժամանակ չունիմ, պէտք է

զնամ՝ իմ տիրոջ տունը պահեմ, որ գողերը ներս չը
մտնեն:

**Փոքր ինչ որ հեռացաւ այն տեղից, երեխան մէկ
թռչուն տեսաւ, որնոր կտուցով խոտ էր տանում: —
Թռչուն, ասաց նրան երեխան, թռչող այդ խոտերը, զը-
նանք, խաղանք: — Զէ՛, պատասխան տվեց թռչունը, ես
հիմա խաղալու դլուխ չունիմ. դեռ շատ խոտ, բռւրդ
ու ցեխէ հարկաւոր իմ բունը շինելու համար:**

**Երեխային պատահեցաւ յետոյ մէկ եղը: — Ա՛յ սի-
րուն եղը, ասաց երեխան, արի՛ փոքր ինչ խաղանք: —
Զէ՛, պատասխան տվեց եղը, խաղալու ժամանակ չունիմ,
ես պէտք է զետինը վարեմ, որ յետոյ մարդիկը ցորէն
ցանեն և ուտելու հաց շինեն իրանց համար:**

**— Ուրեմն, ոչով չէ կամենում խաղալ ինձ հետ,
ասաց ինքն իրան երեխան, երեխի ինձ համար էլ լաւ չէ
ժամանակ կորցնելը, հիմա ամենքը բան են շինում, ես
ինչի՞ եմ ծուլանում. ասաց ու զնաց ուսումնարան:**
ԱՌԱԾՆԵՐ.

Ով կըխաղայ, նա կըկաղայ:

Այս օրուան դործն եղուցվան մի՛ թողնի:

ԽԱՂԱՑՈՂ ՇՆԵՐԸ:

**Տիգրանը կանգնած էր պատուհանի մօտ և մտիկ
էր տալիս դուրսը բակումն իրանց մեծ շանը: Այս մեծ
շան մօտ եկաւ մէկ փոքր շունն ու սկսեց հաջել նրա
վրայ, բռնում էր նրա ոտները, ականջը, պոչը, մէկ խօս-
քով շատ անհանդիստ էր անում մեծ շանը: — Համ-
րերէ փոքր ինչ, ասաց Տիգրանը, դա կը ցոյց տայ քեզ:
Բայց փոքր շունն էլի իրանն էր անում և մեծ շունը
հանդարտ հանդարտ մարիկ էր տալիս նրան:**

— Տեսնում ես, ասաց Հայրը Տիգրանին, մեր մեջ շուշը քեղանից բարի է։ Երբ որ քեզ հետ սկսում են խաղալ քո փոքր եղբայրներն ու քոյրերը, միշտ այնպէս է, վերջանում բանը, որ դու նրանց վրայ բարկանում ես ու անպատիւ ես անում։ Բայց մեր շունը զիտէ, որ մեծի ու ուժեղի համար ամօթէ փոքրերին ու թոյլերին ձեւոք տալին ու անպատիւ անելը։

Առաջ.

Վատ ասողին լաւ լսող։

ՕՐԻՆԱԿԻՈՐ ԳՈՐԾԱԾԱԾ ՓՈՂԵԲԼ։

Պէտք աշխատասէր դարրին, թէպէտ շատ լաւ աշխատանքի մէջ էր, բայց չափաւոր էր ապրում, թէ ինքը և թէ նրա որդիքը ու կինը հասարակ շորեր էին հագնում ու շատ հասարակ կերակուրներ ուտում։

— Ի՞նչ ես անում քո փողերը, հարցրուց այս դարրնին մէկ անգամ նրա հարեան վաճառականը։

— Ի՞նչ պէտք է անեմ, պատասխան տվեց դարրինը, փողերիս էէսը շահով եմ տալիս, կիսովն էլ պարտքերն եմ վճարում։

« Ի՞նչ ես ասում, կարապետ, խօսքը կորեց վաճառականը, ես իմացելեմ, որ դու ոչ պարտքեր ունիս, ոչ էլ շահով տված փողեր։

— Ասալիում ես, պատասխան տվեց դարրինը, ես երկուսն էլ ունիմ։ Ահա պատմեմ, դու լսէ։ Այն փողերը, որն որ ես տալիս եմ իմ ծեր հօրն ու մօրը, իմ պարտքն է, որ վճարում եմ և այն փողերը, որ միսում եմ որդիքերանցս ուտում տալու վրայ, իմ շահով տված փողն է։ Երբ որ ես կըծերանամ և որդիքս էլ հասակը

կը մանեն, այն ժամանակը կըստանամ ես ոչ թէ միայն
դրանց վրայ միսած փողերս, այլ շահն էլ հետը, ո-
րովհետեւ զիտեմ որդիքս կը կարռանան իրանց պարու-
քը վճարել: Ինչպէս իմ ծնողները փող չխայեցին իմ
ուսումի համար, ես էլ նմանապէս չեմ խնայում որդ-
քերանցս համար: Եւ որովհետեւ ես իմ պարտականու-
թիւն եմ համարում ծնողներիս միսածը վճարել, այն-
պէս էլ, յոյս ունիմ, որդքերանցիցս ստանալ իմ վար-
ձըն այն ժամանակ, երբ որ նրանք կատարեալ մարդիկ
դառնան և դորջի կանգնին:

Ա.Ա.ԾՆԵՐ.

Պարտքը տալով, մեղքը լալով:
Ապրի որդատէրը, չապրի դրամատէրը:
Ասելեն առ ու տուր, ոչ թէ առ ու կուլ:
Որդին որ բռնումը ձուաձեղ շինէ, մօր պարտքե-
րըն էլ չի կարող դուրս դալ:

ԲԱՐԵՍՒԻՐՏ ԵՐԵՒԱՅ:

— Ձրօրհնէքի օրը, ձաշի ժամանակը, մէկ հարուստ
վաճառականի որդի, Պետրոս անունով, խօսումէր զուր-
սը իրանց հարեան, խեղճ դիւղացու որդու հետ: Կա-
ռան դուրս եկաւ ու Պետրոսին ձաշի կանչեց:

— Գնաս բարով, ասաց Պետրոսին իր աղքատ ընկե-
րը, ես այստեղ կըսպասեմ քեզ:

“Բայց մի՞թէ դու չես գնալ հաց ուտելու, հար-
ցրուց Պետրոսը:

— Ոչինչ չունինք ուտելու մեր տանը, ախ քաշելով
պատասխան տվեց գիւղացու որդին:

Պետրոսը գնաց իրանց տուն, փաթաթվեցաւ հօ-

ըլ և ասայ — սիրելի հայր իմ, խնդրումեմ ասէք ինձ,
ինչ արժէ այն շորերը, որ խոստացաք ինձ համար առա-
նելու: — Երեսուն մանէթ, պատասխան տվեց հայրը:

— Աիրելի հայր, ես խնդրումեմ, եթէ կարելի է շո-
րերիս փոխանակ փողերը տաք ինձ, որովհետեւ շատ
հարկաւոր է, իսկ շորեր ես շատ ունիմ:

Հայրը որդութիւնը դիտենալով համաձայնեցաւ: Պետրոսը ստացաւ փողերը թէ չէ, ճաշը չը կերած
դուրս վազեց, տարաւ այն փողերը և տվեց իր խեղճ ըն-
կերոջ ծնողներին:

ԱՄԱԾՆԵՐ.

Մեր հինգ մատն էլ մէկ հաւասար չէ սաեղծել
Ասուած:

Տուր ոսկէ գոտիկաւորին, մի՛ քննիր:

Կուշոը քաղցածին կամաց կըբրդէ:

Ապրիլ կայ երկաթ է, ապրիլ կայ արծաթ է:

ՏԻՐՈՒԹԻՒՆ:

ՍԱՐԳԻՍ: Ստեփան, ինչ էիր շինում երեկ:

ՍՏԵՓԱՆ: Ոչինչ, ես շատ ախուր էի:

ՍԱՐԳԻՍ: Ինչի՞ էիր ախուր:

ՍՏԵՓԱՆ: Մենակ էի մնացել, այն պատճառով:

ՍԱՐԳԻՍ: Ուրեմն զու ինքդ ես էլլ քո տիրութեան պատճառը մենակութեան ժամանակը:

ՍՏԵՓԱՆ: Ի՞նչ շինեմ ես մենակ մնացած ժամա-
նակս: Ի՞նչպէս անցկացնեմ ժամանակը:

ՍԱՐԳԻՍ: Ժամանակի անցկացնելու հետ քո կեան-
քըն էլ հետն է անցկենում: Ի՞նչի ես ուզում զուր
աեղը անցկացնել ժամանակը, անբան, անդործ. չ՞ս դի-
տի, որ մեր կեանքը շատ կարծ է:

ՍՏԵՓԱՆ: Ի՞նչ անեւ, երբեմն ժամանակը շատ երականում է:

ՍԱՐԳԻՍ: Այդ բանի պատճառն այն է, որ մենք չենք խմանում ժամանակի օրինաւոր գործածելը:

ՍՏԵՓԱՆ: Ի՞նչ ես ասում, խնդրեմ ասա ինձ տեսնեմ, ի՞նչ շինեմ ես այն ժամանակը, երբ որ միայն տառնը նստած եմ և սիրտս չէ տալիս բան շինել:

ՍԱՐԳԻՍ: Վեր առ մեկ գործ և պարապի՛:

ՍՏԵՓԱՆ: Շատ բարի, եթէ սէր ունենամ բան շինելու:

ՍԱՐԳԻՍ: Բանը սկսելն է: Որքան կարողես շուտով և սրտով սկսէ բան շինելը. իհարկէ առաջ փոքր ինչ կընեղանաս: Բայց ոչինչ: Սիրտդ մի կոտրի՛: Քանի երակար պարապիս, այնքան կըթեթևնայ գործդ և այնքան լաւ կըշինես: Այդպէս գործով պարապելու մն այնպէս կանցկենայ ժամանակը, որ դու էլ չես խմանալ: Բացի այն որ գործ շինեցիր, սիրտդ էլ կուրախանայ: Գու փորձէ և կըտեսնես, որ ծշմարիտ եմ ասում քեզ: Տիրութիւնը միայն աշխատանքով և գործ շինելով կարելի է փախցնել:

ԻՆՉԻ ՀԱՄԱՐ Է ՀԱՐԿԱԽՈՐ ՓՈՂԸ:

ԱՅԻ ուսումնարանումը բաւական հառակով աշակերտ կար, որն որ շատ սաստիկ փող էր սիրում: Ուսումնարանումը նա միշտ փողերի վայ էր մտածում և խօսում: Շատ անդամ նա փողեր էր բերում ուսումնարանումն իրա ընկերներին ցոյց տալիս: Վերջն այս փոքրիկ ժամանակ զանազան բաներ էր ծախում: Ամեն բան նա պատրաստ էր ծախելու, նրա խելքն ու միտքը փո-

զումն էր: Այս աշակերտի վաղասիրութիւնն իրա վարչապետին էլ յայտնի էր:

Մէկ տօն օր կանչեց վարժապետն այն աշակերտին և առաւօար դուրս գնացին նրանք անտառների ու գաշտերի կողմը մանդալու: Կէսօրին նրանք նստեցան ծառի տակը հանդստանալու: «Ես քաղցածեմ, առաց աշակերտը: — Այսակը ոչինչ չը կայ, ոպատափան տվեց վարժապետը, գնանք մէկ ուրիշ կողմը:»

Դառաւ երեկոյիան հինգ ժամը: Ճանապարհին անսան նրանք մէկ հին մատուռ: Մատուռի դռանը նստած էր մէկ աղջատ և ողօրմութիւն էր ուղում: Աղքարը ուրած ունէր իրա մօտ իրա պարկը, որի մէջը մէկ քանի կտոր հաց կար: Վարժապետը տվեց աղջատին մէկ քանի կոպէկ, մոխիկ տվեց աշակերտին և հարցրուց թէ ողու ոչինչ չես տալ աղքատին:»

— Ես իմ բոլոր վաղերը դրան կը տամ, առաց աշակերտը, թէ դա ինձ մէկ կտոր հաց կտայ: Այս խօսքերն որ լսեց աղջատը, վերառաւ իր պարկը, տվեց եւրեխային և առաց թէ ավերառ, որդի, թէ քաղցածեաւ ներ, ինչքան էլ կամենաս, ես փող չեմ ուզի քեզանից. Ես զիահմ, փորձելեմ թէ ի՞նչ զժուար բան է քաղցածութիւնը: Արեխայի աչքերն արտասունքով լքցվեցին. թէպէտ շատ քաղցածէր, բայց ամօթից չուզեց ուստել հացը:

Յետոյ վարժապետը վերառաւ տարաւ աշակերտին դէպի առւն: Ճանապարհին վարժապետը հանդարտ հանդարտ առաց իրա աշակերտին: — Իմիւ տեսնումես, որ զի, թէ ինչի համար է հակաւ օր վիզը: Ի՞նչ օդուտ, որ փողերդ պահած ունենաս մնդուկումդ կամ ծոյաւ-

զումն էր: Այս աշակերտի վողասիրութիւնն իրա վարժապետին էլ յայտնի էր:

Մէկ տօն օր կանչեց վարժապետն այն աշակերտին և առաւօտը դուրս գնացին նրանք անտառների ու գաշտերի կողմը մանգալու: Կէսօրին նրանք նստեցան ծառի տակը հանդստանալու: ԱՅս քաղցածեմ, ասաց աշակերտը: — Այսակեղ ոչինչ չը կայ, որպատճան տվեց վարժապետը, գնանք մէկ ուրիշ կողմը:

Դառաւ երեկոյիան հինգ ժամը: Ճանապարհին տեսան նրանք մէկ հին մատուռ: Մատուռի դռանը նստած էր մէկ աղքատ և ողօրմութիւն էր ուղում: Աղքատը դըրած ունէր իրա մօտ իրա պարկը, որի մէջը մէկ քանի կտոր հաց կար: Վարժապետը տվեց աղքատին մէկ քանի կողէկ, մոխի տվեց աշակերտին և հարցրուց թէ ազու ոչինչ չես տալ աղքատին: Դ

— Ես իմ բոլոր փողերը դրան կը տամ, ասաց աշակերտը, թէ դա ինձ մէկ կտոր հաց կտայ: Այս խօսքերն որ լսեց աղքատը, վերառաւ իր պարկը, տվեց եւրեխային և առաց թէ պիերառ, որդի, թէ քաղցածես: Անը, ինչքան էլ կամենաս, ես փող չեմ ուզի քեզանից. Ես զիահմ, փորձելեմ թէ ի՞նչ զժուար բան է քաղցածութիւնը: Արեխայի աչքերն արտասունքով լքցվեցան. թէպէտ շատ քաղցածէր, բայց ամօթից չուզեց ուտել հացը:

Յետոյ վարժապետը վերառաւ տարաւ աշակերտին դէպի առւն: Ճանապարհին վարժապետը հանդարտ հանդարտ ասաց իրա աշակերտին: — Իմի տեսնում ես, որ զի, թէ ինչի համար է հակառը փողը: Ի՞նչ օղուտ, որ փողերդ պահած ունենաս մնցուկումի կամ ծոցու-

ՇՈՒՇԱՆ: Մէկ չար երեխային:

ՄԱՅՐ: Որ էլ չարութիւն չահէ՞:

ՇՈՒՇԱՆ: Հրամերես, մայր իմ, որ էլ չարութիւն
չանէ: Մայր իմ, թռչուններն էլ Աստուծունը չեն:

ՄԱՅՐ: Իհարկէ, որդի, թռչուններն էլ Աստուծու
առեղծածեն, ուրեմն նրանք էլ Աստուծունն են:

ՇՈՒՇԱՆ: Բայց այն չար երեխան բռնելէր մէկ փոռ
քրր թռչուն և ուզում էր ծախել: Խեղճ թռչունը
լալիս էր, ծվաւմ էր, բայց երեխան կտուցը հուպ էր տաւ
լիս և սուսկացնում: Երեխ այն երեխան վախենում էր,
որ Աստուծած չիմանայ նրա ձայնն ու իրան ըրպատժէ:

ՄԱՅՐ: Ցետոյ գու ի՞նչ արիր:

ՇՈՒՇԱՆ: Ես երեխային փող բաշխեցի, վերառայ
թռչունն ու թողի: Աստուծած իհարկէ կըհաւանէ իմ
արածը:

ՄԱՅՐ: Իհարկէ կըհաւանէ քո կարեկցութիւնը:

ՇՈՒՇԱՆ: Շատ կարելի է, որ այն երեխան կարիք
անէր և այն պատճառով ծախեց թռչունը:

ՄԱՅՐ: Ես էլ այդպէս եմ կարծում:

ՇՈՒՇԱՆ: (իր քոյր Մարթային) Ուրեմն շատ լու
և արել, որ իմ բոլոր փողերս ավի նրան:

ՄԱՅՐԻԱ: (իրա մօրը) Գիտէ՞ք մայր իմ, մենք վէճ՝
ունենք Շուշանն այն երեխային տվեց իր բոլոր փողեւ
րը, մէկ չըհարցրեց թէ ի՞նչ արժէ թռչունը: Ես ասում
եմ, որ զինը պէտք է հարցրել էր անպատճառ:

ՇՈՒՇԱՆ: Մեղանից որի՞ վէճը ուղիղ է, մայր իմ:

ՄԱՅՐ: Գու բոլորովին ուղիղ չես, որդի: Եթէ յետոյ
մէկ ուրիշ երեխայ էլի էր սպառացել քեզ էլի
թռչունը ձեռին, ի՞նչ պէտք է անէիր. կուզէիր էլի թռուն
աղատել, բայց փող չէիր ունենալ:

ՇՈՒՇԱՆ: Այն ժամանակ ես քեզանից կուղելի,
մայր իմ:

ՄԱՅՐ: Ես էլ որ չելի ունեցել:

ՇՈՒՇԱՆ: Յետոյ չեմ գիտի:

ՄԱՅՐ: Պէտք է չափաւոր լինիս, որ կարողանաս առ
և ելի բարերարութիւն անել: Պէտք է դինը հարցրել ի՞ր
ու այնպէս էիր առել թոշունը: Ի՞նչ տեսակ թոշուն
էր այն թոշունը:

ՇՈՒՇԱՆ: Ես չըհարցրի, մայր իմ: Զէ՞ որ դուք առ
սացիք ինձ, որ հարկաւոր չէ հարցնել և խմանալ նրա
անունը, ումնոր բարերարութիւն ենք անում: Այնպէս չէ՞:

ՄԱՅՐ: (Ուրախանալով համբուքում է Շուշանին)
Այդպէս է, իմ հոգի:

ՇՈՒՇԱՆ: Որ տեսել էիր թոշունին թողած ժամա-
նակը, խեղջն ուրախութենից չըկարողայաւ թոշել: Ես
այն չար երեխային խնդրեցի, որ էլ թոշուն չըբռնէ,
մեղք է:

ՄԱՅՐ: Միշտ իմ սիրելի այդպէս բարի և կարեկից
կացիր: Աստուած էլ քեզը մնանալ, այլ մէկին տաս-
նով կը վարձատրէ:

Առանցներ.

Պատիկ է ու չստիկ է:

Ինքը չկայ թիղու կէս, արարմանքը դաղ ու կէս:

ՊԱՊՆ ՈՒ ԹՈՒԾ:

Այս ծեր մարդ կար մէկ քաղաքումը: Այնպէս
ծերացել էր, որ ոչ աչքն էր կարում և ոչ ծնիւերումն
ուժ էր մնացել, խեղջի ականջներն էլ ծանրացել էին:
Ճաշին կերակուր ուտելիս ծերը չէր կարողանում գդալի
օրինաւոր բերանը դնել, ամեն անդամ կեղտոտում էր

սեղանը: Այս ծեր մարդու որդին ու հարսը (որդու կիւնը) միշտ զգվելով էին մատիկ տալիս նրան կերակուր ու տելիս ~~վերջը~~ նրանք չըհամբերեցին, այն ծերին առանձին տեղ տվին անկիւնումը հայ ուտելու համար: Նա անկիւնումը նստած մէնակ հայ էր ուտում, միւսները սեղանի վրայ: Մէկ անգամ հայ ուտելիս ծերի ձեւոիցը վեր ընկաւ կաւէ ամանն ու կոտրվեցաւ: Շատ անպատիւ խօսքեր ասաց հարսն այն ծերին, բայց նա համբերեց, պատասխան չըտվեց: Յետոյ կաւէ ամանի տեղ փայտէ աման առան ծերի համար և նրանով էին կերակուր տալիս խեղձին:

Մէկ քանի օրից յետոյ այն ծերի ութը տարեկան թոռը նստած էր գուրսը և փայտ էր տաշում:

Սրա ծնողները հարցրեցին, թէ ի՞նչ ես շինում, որդի: Նա պատասխան տվեց, թէ ես փայտէ աման եմ շինում իմ հօրն ու մօր համար, որ նրանցը ծերացած ժամանակը նրանով կերակուր ուտեցնեմ: Երեխայի հօրըն ու մօր վրայ մեծ աղդեցութիւն ունեցան այս բառաերը, նրանց լացն եկաւ և այն օրից յետոյ ծեր մարդուն միշտ իրանց հետ անբաժան ունէին թէ ձաշին և թէ մեն ժամանակ և շատ պատուով էին պահում մինչև մահը:

Ա.Ա.Օ.Ը.

Քանի պատիկ էին մեծիցն էի վախճանում, երբոք մեծացայ՝ պատկից:

Ա.Ն.Հ.Ա.Զ.Ա.Ն.Դ. Ա.Պ.Ձ.Լ.Կ:

Մէկ տան մէջ կենում էր մէկ որբեայրի կին: Նա մէկ սիրուն աղջիկ ունէր, անունը Մարիամ: Մէկ առաօտ մայրը պէտքէ գուրս գնար տանիցը: Գուրս գնալիս

նա տսաց իրա աղջկան, թէ սորդի, այս մնտուկին ձեւ
որ ըլտաս, բանալիքն այստեղ եմ թողնում այն մտքով,
որ ուզումեմ փորձել քո հնագանդութիւնը, տեսնեմ
կը կատարես խօսքս, թէ չէ՞ Մարիամը, թէ ինչ էք
հրամայում, մայր իմ, ևս կը կատարեմ ձեր հրամանը,
միամիտ կացէք՞ս: Մայրը որ դուրս գնաց թէ չէ, աղջ-
կայ սիրալ սկսեց թութուալ: Բաղանիքն այնտեղ, սրն-
տուկն էլ այնտեղ, ի՞նչ կարելի էր համբերել և ըս-
տեսնել, թէ ինչ կայ մնառւկումը:

Զը համբերեց: Մնառւկը բացարաւ թէ չէ, մէկ թըս-
չուն դուրս թռաւ այն տեղից, այս կողմն այն կողմն ըն-
կաւ, ինչ որ կար սեղանի վրայ, բոլորը վերածաւ, կո-
տրտեց, պատուհանը կոտրեց ու թռաւ: Մարիամը մնաց
տարակուսած, բայց էլ ի՞նչ կօգնէր:

ԱԹԱՅ.

Ասողին էլ լսող պիտի:

ՃԱՆԱՊԱՐՀՈՒՅԻ:

Մէկ հարուստ մարդ քաղաքիցը հեռու ճանա-
պարհի վրայ շատ մեծ ու գեղեցիկ պալատի նման
տուն ունէր. այդ շինութիւնը զարդարելու վրայ ոչինչ
չէր խնայում, բայց աղքատներին ողորմութիւն չէր տալիս:

Մէկ անգամ մէկ խեղճ՝ ծեր մարդ դադրած եկաւ-
այդ շինութեան մօտ ու էլ ուժ չունենալով իր ճանա-
պարհը շարունակելու, խնդրեց այն հարստին որ իրան
իրաւունք տայ այն զիշերն այնտեղ քննելու: Հարուստը
հպարտութենով այն աղքատին պատասխան տվեց, թէ
իր առւնը ոչ իջևան է և ոչ էլ հիւրանոց: Ծերն ա-
ռաց որ ուզումէ երեք բան հարցնել այն հարստին և
խնդրեց որ նա պատասխան տայ:

Մեծատունը համաձայնեցաւ:

‘Օերը հարցրեց — Ովկէր քեզանից առաջ այս սառ
նը կենում:

“Իմ հայրը, պատասխան տվեց մեծատունը:

— Փո՞ք հօրից առաջ:

“Իմ պապը:

— Իսկ քեզանից յետոյ ովկէտքէ կենայ այս տանը:

“Յոյս ունիմ որ իմ որդիքը:

— Ուրեմն, ասաց ծերը, եթէ դուք ամենքդ էլ այս
տեղ բնակվելէք և կըբնակվեք մէկզմէկուց յետոյ մէկ քա-
նի տարի, ապա հիւրեր չք դուք. ձեր տունն էլ իս-
կառէս հիւրանոց է և իջևան. մի՛ փշտիկ անմեղ տե-
ղըն այս տանդ զարդարանքի վըայ ահազին փողեր, որ
քեզ համար կարձ ժամանակուայ բնակարան պէտք է
լինի, այլ օգնութիւն տուր չունեցողներին ու աղքատ-
ներին, Աստուած էլ քեզ կը վարձատրէ այն կեանքու-
մը: Մեծատունն ամաչեց, տեղ տվեց այն գիշերը ծե-
րին քնելու և այնուհետև օգնութիւն էր տալիս չքա-
ռորներին:

ԱՌԱՋ.

Հիւրն եկաւ, հիւրը գնաց, տեղը դատարկ չը մնաց:

ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԻՒՆՆ ԱՄԵՆԻ ՀԱՄԱՐ ԶԱՐԴԻ Է:

Մէկ իշխանի որդի պատահեցաւ մէկ ուրիշ իշ-
խանի որդուն և երկուսը միասին խօսումէին: Այս ժա-
մանակ նրանց մօտով անցկացաւ մէկ խեղճ գիւղացի
և շատ քաղաքավարի կերպով զլուխ տվեց նրանց: Իշ-
խաններից մէկը պատասխան տվեց նրան նմանապէս զը-
լուխ տալով:

Միւս իշխանը նեղանալով ասաց իւր ընկերոջը .
— Դուք, իշխան, այնքան տեղը Ձեր պատիւը յած դցեւ
ցեք, որ պատասխան տվիք մէկ խեղձ ու չնչին գիւղացուն:

— Ինչի՞ պատասխան չըտամ, ասաց առաջինը, ես
չեմ ուզում, որ մէկ գիւղացի, որ բոլորովին լուսաւու
րութիւն չունի և չէ կրթված, ինձանից աւելի քաշ
զաքավարի լինի:

ԱՌԱՅ,

Ծառը քանի որ բար (պտուղ) շատ աւնենայ, գըւ
լուիր կախ կըզցէ:

ԵՐԿՈՒ ԽՆՉՈՐԻ ԾԱՌ:

Մէկ այգեպան երկու որդի ուներ: Մայիս ամսին
նա ընծայեց նրանց մէկ մէկ խնձորի ծառ: Երկու ծառ
ուըն էլ մէկ տեսակիցն էին և շատ նման էին միմեանց
թէ բարձրութենով և թէ գեղեցկութենով: Միայն մի-
մետնցից շատ հեռու էին տնկած այն ծառերը:

“Որդիք, ասաց այգեպանն իր որդքերանցը, ձեզ լիւ
նին այս ծառերը. բայց զիտացէք, որ շատ աշխատանք
ու հողս պէտքէ քաշէք այս ծառերի կարգով պահեւ
լու համար:”

Մեծ որդին շատ աշխատասէր և խելօք տղայ էր:
Ստացաւ ծառը թէ չէ, այն օրից սկսեց աշխատանքը:
Ինչ որդունքներ կար ծառի վրայ բոլորը հեռացրուց,
ծառի տակի հողը փափկացրուց, որ աւելի լաւ անց-
կենայ ջուրը դէպի նրա արմատը. մէկ խօսքով ինչ որ
զիտէր ու կարողացաւ չըխնայեց իրա խնձորի ծառի
համար: Բայց փոքր որդին շատ ծոյլ էր: Նա բոլորովին
մոռացաւ, թէ իրան խնձորի ծառ են պահտվել: Մաս-

շիսը, Յունիսը, Յուլիսն և Օգոստոսն անցկացաւ, Աեղաւտեմբերին միտն եկաւ իրա ծառն և շտապով գնաց պըտուղներ քաղելու, որովհետեւ միւսներն էլ այդ ժամանակը պատուղներ էին ժողովում ծառերիցը: Բայց խեղձը տեսաւ, որ մէկ հատ խնձոր էլ չըկար իրա ծառի վըայ. որը որդունքներն էին կերել և որն էլ քամին էր չըրացրել ու վերածել: Տիրած գնաց նա իրա եղօր ծառը տեմնելու, տեսաւ և զարմացաւ: Ծառը բաւական մեծացել էր և գեղեցիկ կարմիր խնձորներով զարդարվել: Շատ նեղացաւ փոքր որդին, նրա նախանձը շարժեցաւ և գնաց հօրը գանդատվեց, թէ. «իմ սիրելի հայր, ինչի՞ էր իմ եղօրը սիրուն պատուղներով լիքը ծառը տվել և ինձ անպիտան, անպտուղ ծառը»:

Ես, իմ աչքիս լոյս, երկու սիդ էլ մէկ աեսակ ծառ ուեր և ամիել, պատասխան տվեց նրան հայրը, բայց ովինչ անէ, որ դու ծուլացար, ծառիդ համար հոգս չըքաշեցիր. բայց եղբայրդ այս չորս հինգ ամիսը հանգստութիւն չէ ունեցել, ամեն օր իր ծառի վըայ էր մըտածում: Այդպիսէ ինչ որ կրցանես, այն էլ կըհնձես»:

Ա.Ա.Ա.Ը.

Մարդ մէկ ձեռը տան վըայ պէտք է ունենայ:

Մ Ե Խ Ա Կ Ն Ե Բ:

Ա Մայր իմ, առաջ Աննան իրա մօրը, խնդրեմ ինձ, Գէորգին ու Սարգսին մեխակներ բախշէք մեր փոքրիկ պարտիզումն էլածներից, մենք ինքներս կաշխատենք և կըհոգանք այն ծաղիկների համար: Մայրը լսեց իր փոքրը աղջկայ խնդիրքը և տվեց իրա երեք որդքերանցը բաւական մեխակներ: Շատ ուրախացան երեխաները և

միմետնց ասում էին, թէ առեսնենք, ի՞նչպէս կըքաց լինին
մեր մեխակները:

Մեխակների կոկոմները դեռ նոր էին երևում: Բոյց
Արդիսը, շատ անհամբեր լինելով, կամեցաւ որ իր մեշ
խակներն ամենից առաջ բաց լինին: Անդագար զնում
էր իրա ծաղիկների մօտ, բռնում էր կոկոմներն ու ճըղս
քում, բաց էր անում, որ տեսնէ, թէ ինչ կայ մէջը:
Սէկ երեկոյ էլ, որ բացաբաւ կոկոմը, տեսաւ որ ծաղիկ
թերթերի ափերը կարմրելն: Սիւս օրը շուտով վաս
պեց պարակը, տեսնելու թէ արդեօք քաց են էլլէ մեշ
խակները, թէ չէ: Տեսաւ որ շատ ծանր է բանն առաջ
գնում: անհամբերութենով վիր առաւ, բաց արաւ ու
ժով կոկոմը և երեւցան թերթերը: Ուրախ ուրախ
կանչեց յետոյ իրա եղրօրը և քրոջը, թէ անկէք, եկէք,
շուտով, իմ մեխակները բաց են էլլէ: ո

Գինացին Աննան և գեղորդը և շատ զարմացան, որ
այդպէս շուտ բացվելէ իրանց եղրօր մեխակը: Բոյց ա-
րեն եկաւ թէ չէ, Սարդսի մեխակները զլուխները քաշ
զցեցին և թառամեցան:

ԱՌԱՋՆԵՐ.

ՈՒ Չ ու Կաւշ:

ՈՒ որ տօնն չէ շինել, բոձիքը բանովի դիմէ:

ՏԱՆՉԻ ԾԱՌ:

Մէկ ծեր մարդ նստածէր մեծ տանձի ծառի տա-
կը, շուաքումը, իրա տան առաջ: Նրա թուները տանու-
ձերը քաղում էին և ուտում: Շատ քաղցր և ջրալի
էին տանձերը:

Պապն ասաց իրա թռուներին: — Ես ովհաքէ պատ-

մեմ ձեզ, թէ ինչպէս է դուրս եկել այս ծառն այստեղ։
“Յիսուն տարի առաջ ես մէկ անգամ կանգնածէի այս
“տեղ, այս ծառը չը կար այն ժամանակը։ Տեսրած դէմ-
“քով գանգատվում էր իմ հարեանին իմ խելքու-
“թեան մասին։ Ես ասում էի այն ժամանակը, թէ աի-
“երանի կը լինի ինձ, որ մէկ հարիւր մանէթ ճարեմ,
“այն ժամանակը բալրբավին հանդիստ կը լինեմ։”

“Հարեանս խելօք մարդ էր, այս խօսքերը որ լսեց,
ասաց ինձ.— հարիւր մանէթի ճարելը շատ հեշտ է,
և թէ միայն կարսղանաս լաւ դործի կանգնել։ Կանգնած
աեղդ հարիւր մանէթից աւելի կայ թաղած, աշխա-
տէ՛ և հանէ՛։”

“Ես այն ժամանակն անփարձ էի, այն պատճառով
“մէկ ողջ զիշեր սկսեցի փորել այն տեղը, փորեցի, բայց
“մէկ մանէթ էլ չըդտայ։”

“Միւս օրը հարեանս տէսաւ իմ փորած տեղը։
“Մեծ փոս էր, շատ խորը, տէսաւ թէ չէ ծիծաղեցաւ։
“Ես չէի իմարթում, ասաց նա, թէ դու այդպէս յիմար
կը լինես, բայց ոչինչ, մնաս չունի, կորած չէ աշխա-
տանիք։ Ես կը բաշխիմ քեզ մէկ տանձի ծառ, տնկէ՛
այն փոսումը և մէկ քանի տարուանից յետոյ մանէթ-
աներն իրանց իրանց կը գան քեզ մօտ։”

“Տանձի ծառը տնկեցի, մեծացաւ և սցսպիսի դե-
պեցիկ ծառ դառաւ։ Այսքան տարուան մէջ ես շատ
պտուղներ եմ քաղել, ոչ թէ մէկ հարիւր մանէթի,
այլ մէկ քանի հարիւր մանէթի։”

“Հարեանս միշտ ասում էր ինձ, թէ աշխատան-
քով և խելքով է ստացվում հաստատ արդիւնքը։”

ՂԱԻ ԱՆՇՈՒՆՅ ՀԱՐՍՑՈՒԹԵՆԻՑ ԱՌԱԽԵԼ Է:

Մէկ գիւղումը կենում էր մէկ խեղճ մարդ, առնունը Մարկոս: Նրա կինը վաղուց մեռելէր և մէկ փոքր որդի էր թողել նրա համար: Գնումէր այս Մարկոսն ամէն օր աշխատումէր, փող էր վերառնում և կառավարվումէր իրա որդու հետ միասին. բայց մէկ անգամ բանելիս խեղճ Մարկոսը մրսեցաւ ու մէկ շաբաթ պառկեցաւ անկողնումը: Մէկ շաբաթից յետոյ Մարկոսի տանն էլ կերակուր չըկար, երեխան մնումէր քաղցած, ծարաւ: Մարկոսը ստիպվածէր ողորմութիւն ուղել զիւղումը, որ կառավարվէր, որովհետեւ դեռ բանել չէր կարող: Հիւանդ, տիրած Մարկոսը դուքս եւ կաւ իրա խղճթից ողորմութիւն ուղելու: Բայց շատ ամաչումէր և վախենումէր այս բանիցը:

— Ա՛ն ի՞նչ դժուար է ողորմութիւն ուղելը, ասում էր ինքն իրան Մարկոսը: Տուն յետ դառնալիս ոտին մէկ բան դիպաւ և փողի ձայն հանեց: Կուցաւ և տեսաւ, որ փողով լիքը պարկ է ընկած գետնի վրայ: Ուրախ ուրախ վեր առաւ պարկը և շտապումէր տուն: «Ճիմի, ասաց նա ինքն իրան, փառք Աստուծու, էլ քաղցածութենիցն ու ծարաւութենիցն ահ չեմ ունենալ, ամեն բան կառնեմ, կը քցնեմ տունս ու հանգիստ կապրիմ:» Բայց յետոյ խղճմանքն իրան տանիջեց, թէ «այ մարդ, այդ փողերը քո աշխատած են, որ ուղումէս տիւրանալ դրանց. դու պէտքէ յետ տաս այդ փողերն իրա տիրոջը:» Մարկոսը պարկը մինչեւ անգամ չըբացարած, տւաւոտեան շուտով վաղեցաւ զիւղի տանուաիրոջ մօտ և յայտնեց թէ փողէ դտել: Հարց ու փորձ արին և փողերի տէրը դտնվեցաւ: Մէկ հարուստ վաճառական

էր, որն որ բերելէր այն փողերը ոչխարներ առնելու։
Ճատ ուրախացաւ հարուստ մարդը Մարկոսի բարի մար-
դութեան վրայ և բաւական փող բախշեց նրան։ Բոլոր
զիւղն իմացաւ Մարկոսի արարմունքը և ամենքն իրանց
ձեռից եկածը չէին խնայում Մարկոսին օգնելու համար։

Առաջներ.

Խղճութիւն ու դխճութիւն։

Խեղճ որ չես էլէլ, խեղճ հարեան խոմ ունեցել ես։
Հալալ ապրանքը դայլը չի տանիլ։

ԳԻՒՂԱՑԻՆ ՈՒ ՆԱՊԱՍՏԱԿԸ:

Մէկ խեղճ զիւղացի մէկ օր անցերկենում դաշ-
տի վրայ և տեսաւ այնտեղ մէկ թփի տակը նապաս-
տակ։ Ուրախացաւ և ասաց այս նապաստակը որ կը-
սպանեմ, կըծախեմ երեք ապասով, յետոյ այն փողե-
րովը մէկ խոզ կառնեմ։ Խոզը տասնուերկու հատ որ-
դի կունենայ։ Խոզի որդիքը կըմեծանան և յետոյ ա-
մեն մէկը տասներկու որդի կըբերէ։ Զմեռուան համար
կըմորթոտեմ խոզերս, կըծախեմ և այն փողերով մէկ
տուն կառնեմ ինձ համար։ Քիչ ժամանակից յետոյ կը-
պակվիմ, կիմաս երկու որդի կըբերէ, մէկի անունը կը-
գնեմ Տիգրան, միւսինն Արշակ։ Որդիքս գետինը կըվա-
րեն, կըհնձեն և ես իմ տան պատուհանից բարձր ձայ-
նով կասեմ նրանց Տիգրան, Արշակ, որդիք, աշխատե-
ցեք, օրինաւոր մահկարէք մշակներին։»

Այնպէս բարձր գուաց զիւղացին, որ նապաստա-
կը վախեցաւ և փախաւ։ Գիւղացու տունն էլ զնաց և
էլինն ու որդիքն էլ հետը։

Առաջներ.

Դեռ չըծնած երեխին շոր մի՛ կարիլ։

Անջուր մի՛ բորիկանալ։

ԾՏԵՐԸ ԵՒ ԿԱՔԱՒԸ:

Գիւղացին ցանցով ծտերը բռնեց իր գաշտի վրայ
և ասաց նրանց, անսպիտաններ, եկելքը իմ գաշտը սի-
սուն ուտելու, ես կըցոցտամ ձեզ: Երկար չեմ խօսի
ձեզ հետ, կըմորթեմ ամենքիդ և կեփեմ: Բայց զու-
կաքաւ ո՞ր տերից ընկար այստեղ:

—Պարոն զիւղացի, պատասխան տվեց ցանցի տակից
կաքաւը, ահա! ասեմ քեզ ձշմարիտը. ես թռչումէի
պս ծտերի հետ և հաւատացնումեմ քեզ, որ քոնիս-
սեռիդ ձեռք չեմ տվել: Թողի ինձ, ես քեզ մնաս ար-
գող չեմ բոլորովին: Միթէ ինձ եւ այս զոլ ծտերի
պէս կըմորթես:

—Իհարկէ քեզ եւ կըմորթեմ մեղաւորը դու ինքդ
ես, ով ինչ անէ. ինչի՞ եւր այս զողերի հետ ընկե-
րութիւն անում:

ԱՌԱԾՆԵՐ.

Գողն և զողակիցն ՚ի միում պատժի են:

Ամեն փորձանքին մէկ մէկ խրատ:

ԱՐԿԱԹԻ ԿՑՈՐ:

Մէկ զիւղացի դնումէր զիւղեցը քաղաք իր փո-
քը որդի Ստեփանի հետ: Տես, ասաց հայրը, ահա ճա-
նապարհի վրայ բաւական մեծ երկաթի կտոր է ընկած,
վեր առ, պահէ:

«Ե՛հ, հայր իմ, արժէ այդ անպէտք բանի համար
կռանալը:

Հայրը պատասխան ըստվեց և ինքը վերառաւ այն
երկաթը: Ճանապարհին նա այն երկաթը ծախեց դարբ-
նի վրայ մէկ քանի կոտեկով և այն փողերով բալի առաւ:

Գնացին առաջ: Ամառուայ շոգը շատ նեղացրուց
նրանց: Ճանապարհին ոչ տուն կար, ոչ անտառ և ոչ
աղբիւր: Ստեփանը շատ ծառաւ էր և հազիւ թէ կա-
րողանումէր գնալ իր հօր հետ:

Հայրն այն բալերից մէկը վերդցեց ճանապարհին:
Ստեփանն ուրախ ուրախ վեր թոցրուց գետնիցը և կե-
րաւ: Փոքր ինչ զովացաւ նրա բերանը: Քիչ անցկացաւ,
հայրն էլի մէկ բալի վեր զցեց: Ստեփանը նմանապէս
վեր առաւ, կերաւ:

Այսպէս արաւ հայրն երեսուն, քառասուն ան-
գամ: Երբ որ բալին հատաւ, հայրն ասաց որդուն ծի-
ծաղելով, թէ տեսնումէս, որդի՛, եթէ երկաթի կտու-
րի համար մէկ անգամ կռացելէիր, այսքան անգամ
չէիր կռանալ բալուհամար: Այս քեզ խրատ, որ միւս-
անգամ չըծուլանաս:

Առաջնոր:

Եռտ աղքատը լսւ է, քան թէ կամաց փեշաքաբը:
Ով ալարի, ոչ դալարի:

ԾԵՐԸ ԵՒ ԵՐԵԽԱՆԵՐԸ:

Օովի ափիը մանգալիո ծերը և երեխաները տեսան
մէկ փոքր նաւ ափումը կապած: Երեխաները կամեցան
նստել մէջը և ծովումը փոքր ինչ մանգալ: Խնդրեցին
ծերին, որ նա էլ նրանց հետ նստի նստակի մէջը: Ծե-
րը չէ թէ միայն չըհամաձայնեցաւ, այլ նրանց էլ ըս-
կսեց խրատել, որ թողնեն նստակի, որովհետեւ մէկ փոքր
ձանը կարողէ պատահել ծովումը: Երեխաները չըլսեցին
նրան, ասելով թէ ինչ որ կըլինի, կըլինի: Քանի ծերը
խրատումէր նրանց, նրանիք աւելի կատաղումէին և

անպատճառ ուղեցան փորձել; «Հաւատացէք ինձ, առ
սաց վերջը ծերը նրանց, նաւակը ծեր զլիսին լաւ բան
չե բերիլ, ես ձեղ համար եմ ասում, մի՛ անէք, լաւ
չէ; — «Դատարկ բաներ է, ասացին միասին երիտասարդ՝
ները, ի՞նչ էք լսում սրան:» Ասացին ու նստեցան նաւ
ւակի մէջը: Նաւակը հեռացաւ ծովի ափիցը: Եղանակ
առաջ շատ հոնդարտ էր, բայց յետոյ յանկած փոխ
վեցաւ, մեծ քամի վերկացաւ և ամպերով ծածկվեցաւ
երկինքը: Ալիքները խաղացնում էին նաւակը փոքր տախա-
տակի կտորի պէս: Երիտասարդները կամեցան յետ դառ-
նալ, բայց քամին ըլթողեց: Յանկարծ մէկ սաստիկ քա-
մի փչեց, նաւակը շուռեկաւ և երիտասարդները ջրի
տակովն էլան:

Առնետներ.

Մեծի ասած, պստկի լսած:

Մանելուց առաջ միաք արա՛, թէ ի՞նչպէս դուրս դաս:
Խելօքին մէկ, յիմարին քանի կուղես:
Ուին սապոնը, խեին խրանն ի՞նչ կանէ:
Հորթը որ կովի առաջն ընկնի, դայլը կուտէ:
Ով կրխաղայ, նա կըկաղայ:

Զի՞ն ՈՒ ԼՇԻ:

Մէկ անգամ ճանապարհին միասին գնումէին է-
շը և ձին, ձին անբեռը, բայց էշը մեծ ահազին բեռ-
նով, այնպէս որ խեղճ էշը հազիւ կարողանում էր ոտ-
ները փախել: «Ել չեմ կարող շարունակել, ասաց էշը
ձիուն, վերկընկնեմ, չեմ կարող համել տեղը:» Խեղճը
խնդրում էր, որ բեռնի մէկ մասը ձին շալակէ, բայց ձին
ականջ չարծց նրան և կոպիտ պատասխան տվեց իշխան,

թէ՞ “Կ՞նչպէս կարելի է իշխ բեռը շալակեմ” և ՚ի զուր
տեղը նեղանամ: Աեղջ էշն որ ուժիցն ընկաւ, վեր ըն-
կաւ և սատկեցաւ: Վերառան յետոյ տէրերն իշխ բե-
ռն էլ և սատկած իշխ կաշին էլ միասին բարձեցին
հարարտ ձիու վրայ: Նոր իմացաւ ձին իր վատ արար-
մունքը, բայց էլ ուշէր, օգնել չէր կարելի:

ԱՌԱՋՆԵՔ.

Լաւ ձին իր պատիւը կաւելացնէ, վատ ձին
մայթրախը:

Էշը դադէ, ձին ուտէ:

ԹԱՆԿԱԳԻՆ ԽՈՏ:

Երկու ջահէլ աղջկերը մէկ մէկ մրգով լիքը քը-
թոց ուսերուն զրած իրանց զիւղեցը բերում էին քա-
ղաք ծախելու: Մէկ աղջկայ անունն էր Մարիամ, միւ-
սինը թագուհի: Մարիամը քինթ ու պառւնդը վեր թու-
ղած շուտ շուտ ախ էր քաշում, բայց թագուհին ու-
րախ ուրախ ծիծաղում էր և հանաքներ էր անում:

“Զարմանումեմ, ասաց Մարիամը թագուհուն, որ
որու այլպէս ուրախ ես, քո բեռն էլ իմ քթոյի պէս
ծանր է ու զու էլ ինձանից շատ ուժով չես. ասա
ինդրեմ ի՞նչպէս ես զիմանում ու հետն էլ ութախ ու-
րախ ծիծաղում:”

— Ե՞ս իմ քթոյումն մէկ այնպիսի խոտ ունեմ պա-
հած, որ մա հեշտացնում է ամեն զժուար բան, պա-
տասխան տվեց թագուհին: Դ

“Այդ շատ թանկագին խոտ է, ասաց Մարիամը, ես
էլ ուղումեմ թեթեացնել բեռս, ինդրեմ՝ այդ խոտի
անունն ինձ էլ սովորացրու:” Դ

Թագուհին պատասխան ուվեց. — այդ խոտի անունը Համբերութիւնէ, որից իմ սիրելի Մարիամ դու զուրկ ես:

Առաջներ.

Ով որ շատապի, նստի հանդչի:
Համբերութիւնը կեանք է:

Ա. Գ. Ռ. Ա. Ի. :

Արծիւը որ թուչունների թաղաւորնէ, բարձրիւթը թռաւ ոչխարների վրայ և մէկ գառը թոցրուց չանգերով: Այնտեղ մօտիկ ծառի վրայ նստած էր ագռաւը և տեսաւ այս բանը: Ագռաւը մտածեց ինքն իւրան, ինչի՞ այսպիսի փոքր դառը վեր առաւ արծիւը, մեծն էր տարել. արծիւների մէջ էլ երեխ յիմարներ են էլէլ: Հիմա թող ինձ մտիկտայ արծիւը և տեսնէ, թէ ինչովիսի գառն եմ թոցնում:

Այս խօսքերն ասաց, բարձրացաւ երկինքը, մտիկարեց դառներին և ամենից մեծն ու գեղեցիկն ընտրեց ու թռաւ վերելիցը նրա վրայ: Բայց այնպէս սաստիկ դիպաւ այն գառին, որ ագռաւի ոտները և թեկերը բռւլորովին խճճվեցան դառնի բոլժի մէջը, ոչ այս կողմը կարողացաւ շարժվել և ոչ այն կողմը: Մնաց մեղաց պատուհաս:

Եկան հօվիւները, բրդիցը դուրս հանեցին ագռաւը, թեկերը կարտեցին և տվին երեխաներին խաղացնելու: X

Առաջ.

Բանն արա՛, յետոյ պարծեցիր:

ԵՇՆ ՈՒ ԱՌԽԱԿՅ:

ՍԵԿ անդամ՝ էշը պատահեցաւ սոխակին և ասաց
նրան, թէ ՞ ևս լսելեմ, պատռական բարեկամ՝ որ զու-
շատ լաւ ես երգում, խնդրեմ մէկ ինձ մօտ երդէ՛, տես-
նեմ հաւատալո՞ւ է ժողովուրդի գովասանքը թէ չէ՞:

Սոխակը լսեց իշխ խօսքերին և սկսեց երդել զե-
զեցիկ ձայնով։ Ծվաց ու շվացրուց հաղար տեսակ, եր-
բեմն բարձր ձայնով և երբեմն հանդարաւ Ամենքն ըս-
կսեցին լսել նրա քաղցր երգին զարմացած, քամին կանգ-
նեցաւ, հովիւների ուշըը գնաց նրան լսելով։

Վերջացրուց երդը։ Էշը բարձրացրուց իրա յի-
մար զլուխը և ասաց. — ՞ վատ չէ՛, սուտ չեն էլել ասում,
որ չես ձանձրացնում լսողներիդ։ Միայն մէկ բան կայ,
սիրելի, որ եթէ դու մեր արլարի հետ ծանօթանաս և
նրանից էլ փոքր ինչ սովորիս երգելը, ևս քեզ հաւատա-
ցնումեմ, որ քո հատն երգող էլ աշխարհի երեսին
մէկը չէր լինի։ Նեղացաւ խեղճ սոխակը, շուտով
թռաւ ծառիցը, որ էլ չըտեսնէ իր անխղճմանք
դատաւորին։

ԱԲԱՅՆԵՐ.

Էշն ի՞նչ զիտէ, նուշն ի՞նչ է՛:

Իշի քացուցը բեդամաղ մի՛ լինիլ։

ԱՂՈՒԵՆ ՈՒ ԿՈՒԻՆԿՅ:

Աղուէն ու կռունկը բարեկամացան և շատ սի-
րումէին միմեանց։ Աղուէսը կամեցաւ պատի՛ տալ իր
բարեկամին և հրաւիրեց մէկ անգամ կռունկին իրանց
տուն։ Գնաց կռունկն աղուէսի մօտ։ Աղուէն և վելէր
կերակուրը և ածելէր մէկ տափակ ամանի մէջ։ Աօտ

բներեց և ասաց կռունկին, “Կեր, սիրելի բարեկամ, այնապէս լաւ եփելիմ”, որ իրհաւանիս: Ո կռունկը շատ չարշարվեցաւ, բայց իհարկէ ինչ կարողէր վեր առնել իր մեծ և երկար կտուցով այն տափակ ամանից: Խեղջը մնաց քաղցած: Բայց աղուէսը, գլուխը քաշ գցած, կերաւ բոլորը: — Խնդրեմ ներես, ասաց վերջն աղուէսը կռունկին, սրանից աւելի ուրիշ կերակուր չունիմ: Շնորհակալեմ, եղբայր, ինչի՞ ես նեղանում: Խնդրեմ եգուց էլ ինձ մօտ համեցէք ճաշի:

Միւս օրը գնաց աղուէսը կռունկի մօտ ճաշուածելու: Կռունկը նմանապէս խորամանկութիւն էր բառնեցրել: Ծփելէր կերակուրը և ածելէր մէկ նեղ բերնաւնի ամանի մէջ: — Համեցէք, ասաց կռունկն աղուէսին, կեր, բարեկամ, պատուական կերակուր է: Շատ չարշարշվեցաւ աղուէսը, բայց ոչինչ չըկարողացաւ հանել այն խորն ամանից: Իսկ կռունկը, գլուխը քաշ գցած, ուտումէր կերակուրը: Երբ որ վերջացրուց ուտելը, ասաց աղուէսին: — Ներէ, եղբայր, սրանից աւելի ուրիշ կերակուր չունիմ:

Նեղացաւ աղուէսը և բարկացած գնաց տուն: Նա երեխ չէր իմացել, որ ասած է, թէ կարասին ինչ ձայն որ կրտաս, նա էլ այն ձայնը կըհանէ:

ԱԹԱԽՆԵՐ.

Ինչ կասես, այն կըլսիս:

Ինչ կըցանես, այն կըհնձես:

Վանաշը տանտիրոջ էշն է:

Հարժեանիդ մէկ կով ուզէ, որ Աստուած քեզերկուսը ասյ:

ՄԵՐԻՆ ՈՒ ԵՐԵԽԱՆԵՐԻ Հ:

Յովսէին երկու որդի ունէր, մէկը տասներկու տարեկան էր, միւսը տասնուշորս տարեկան։ Մէկ անգամ՝ հարեաններն առաջին նրան, թէ նրա որդիքը ծիծաղում են մէկ պառաւ կնոջ վրայ։ Հայրը բարկացաւ նրանց վրայ և հասկացրուց, որ լաւ չէ պառաւների ու ծերերի վրայ ծիծաղելը։ Որդիքը խոստացան էլ չանելու։ Բայց մէկ քանի ժամանակից յետոյ երեխաները մուացան իրանց խոստամանքը և պատահ չելով մէկ ծերունուն սկսեցին նրան ծաղրել։ Հայրն իմացաւ այս բանը և սկսեց հոգս քաշել իր երեխաների թեթևամտութիւնն ուղղելու վրայ։ Շուտով հասաւ նոր տարին։ Տարեմուտի օրը որդիքն եկան, շնորհաւորեցին հօրը նոր տարին և ցանկացան նրա համար բաղդաւորութիւն և երկար կեանք։ — Յրդիք, ասաց Հայրը ևս չեմ ուզում երկար ապրիլ, լաւ է շուտով մեռնեմ, որովհետեւ վախենումեմ որ ծերանամ, այն ժամանակն ինձ էլ կըծաղրեն վատ երեխաները, ինչպէս դուք մօտ ժամանակներումն ծաղրումէիք մէկ ծեր մարդուն։ Երեխաները կարմրեցան ամօթից և ըստիսէին ինչ անել։ Նրանք շատ սիրումէին իրանց հօրը, հասկացան իրանց յիմարութիւնը և այնուհետեւ ծաղրելու փոխանակ միշտ յարգում էին ծեր մարդկանցը։

Ա.Ա.Ա.

Ծերանաս, ծերի զաղըն իմանաս։

ՄԱՐՄԻՆԻ ԱՐԱՏՆԵՐԻ ՎՐԱՅ ԶԲՊԵՏՔԻ ԾԻՆԱԳԻՒՅԻ

Գայանէն շատ հանդարտ և աշխատասէր աղջիկ էր, միայն խեղճի աջքերը շիլ էին և այն պատճառով

Էլ սրայ վրայ շատ էին ծիծաղում ուրիշ աղջկերը,
մանաւանդ մէկը, որի անունն էր Մարթան
իրան շատ գեղեցիկ էր կարծում և մէկ օր ծաղրելով
հարցրուց Գայանէին.— Ինչի՞ դու ինձ վրայ ուղիղ չես
մտիկ տալիս, երեխ չես սիրում ինձ: Դայանէն հասկաւ
ցաւ, որ իր վրայ ծիծաղում էր Մարթան և հանդարտ
կերպով պատասխան տվեց նրան, թէ ես չեմ կարող
իմ մարմնի բնական պահասութիւններն ուղղել, միայն
կաշխատեմ ուղղել իմ միւս պահասութիւնները:

Եռուուվ Մարթան ծաղիկ ընկաւ և սաստիկ հիւ
անդ էր: Բայց երբ որ առողջացաւ, խեղճին էլ չէր կա-
րելի ճանաչել. նրա բոլոր երեսը չեչատացել էր:

Հիւանդութենից յետոյ, երբ որ Մաթան առաջին
անդամ եկաւ ուսումնարան, չէր կարողանում ամօթից
համարձակ դէս ու դէն մտիկ տալ և անդադար ձեռով
ծածկում էր երեսը:

Մէկ իր նման չար երեխայ մօտեցաւ և ասաց:
— Ինչի՞ ես լալիս ու երեսդ ծածկում:

Մարթան հասկացաւ, որ իր վրայ ծիծաղում է,
սկսեց զորդ լաց լինիլ, բայց ոչ թէ ծաղկատար լինելու
պատճառով, այլ միտք բերեց, որ մէկ օր ինքն էլ այդ-
պէս ծաղրում էր Գայանէին շիլ աչք ունենալու համար:

ԱՅԱԾՆԵՐ.

Քոսին ով տնապ անէ, լաւ միրուք պիտի ունենայ:

Երկնքի պարտքը գետնին չի մնալ, գետնի պարտ-
քը երկնքին:

Մինչև չըգայ յետինը, չի յիշուիլ առաջինը:

Ե Ն Ե Ր :

Լօնդոնումը շները շատ պատիւ ունին, որովհետեւ այնտեղի շները շատ օգուտ են բերում մարդուն հրդեհների ժամանակը: Արտեղ տանը կրտկ կպչի ու սկսի այրվել, մէկ էլ տեսնես զնուորներից առաջ տուն վաղեցան շներն ու սկսում են դուրս կրել այնտեղից ամեն կենդանի բան, ինչոր պատահի նրանցը այրվող սենակներումը: Դուրս են բերում երեխաներին, փոքր շըներին, կատուներին, հաւերին, խողերին և այրվելուց ազատում են: Մէկ անդամ պատահեցաւ, որ հրդեհի ժամանակը մէկ այդպիսի ազատող շուն ներս մտաւ այրվող սենակը, որի մէջ մէկ փոքր շուն, դուրս գալու ձանապարհը ըստանելով, շշկվելով ու ահից դողդողում: Մեծ շունն իսկոյն բռնեց փոքր շան վզեցն ու դուրս քաշեց, կրակիցն ազատեց, չնայելով որ փոքր շունն իր ահիցն անդադար կծում էր իր ազատողին:

Զմիցերիայումը Սենդուտարդ սարի վրայ էլ կան մէկ ուրիշ տեսակ շներ: Այն սարի վրայ համարեա թէ միշտ սառուցն ու ձիւնն անպակաս է լինում և մեծ վնասներ է տալիս այն սարի վրայ անցկենող ձանապարհողներին: Այնտեղ մէկ հիւրանոց կայ շինած և նրա տէրը շատ շներ է պահում, ձանապարհորդներին օգնութիւն հասցնելու համար: Շների վզե վրայ կախ է արած գիւնով լիքը շիշ, և որովհետեւ շատ հեշտութենով վազվզում են այս շներն այն սարի նեղ ու ծուռը ձանապարհներով, անդադար գտնում են ձնումը թաղված մարդկանց: տալիս են դինին, ձանապարհորդներն ու շքի են գալիս և ազատվում են սառչելուցը:

Մէկ անդամ այն շներից մէկը նեղ ձանապարհի

վրայ տեսնում է ձնումն ընկած մէկ վեց տարեկան երեսայի: Խեղճը սառել էր համարեա թէ և քիչ էլ որ մընար, ցրտիցն ու քաղցածութենիցն անպատճառ պէտք է մեռել էր: Շունը մօտ է գնում երեխային և սկսում է լիզել նրա սառած ձեռները: Երեխան փոքր ինչ ուշքի է գալիս, ուզումէ վերկենալ, բայց չէ կարողանում և ընկնումէ շան մէջքի վրայ: Շունը կանգնումէ և սպասումէ մինչեւ որ երեխան նստում է նրա մէջքի վրայ ու շան մաղերիցը բռնում է: Շունը մեծ զգուշութենով տանումէ նրան հիւրանոցը և այսպէս աղատում է նրան մանիցո:

ԱՌԱԾՆԵՐ.

Շանը քանի քար զցես կըհաջի:

Շունն իրանց տանը դոչաղ կլինի:

Շան կաղալուն մի' հաւատալ:

Շան հետ եղբայրացիր, փայտը ձեռիցդ վեր մի' զցիլ:

Շներն իրար հետ կովում են, գայլի դէմ միանումեն:

Շունը շան միսը կերաւ, սակոռը շըդէն զցեց:

Բ Ա Դ Ե Բ :

Գէնորգը մոխէ էր տալիս բարձր և տեսաւ որ բաւական վայրենի բաղեր են թռչում երկնքումը:

Գէնորգն ասաց հօրը — հայր, մեր տանու բաղերը չեն կարող սրանց պէս թռչիլ:

ՀԱՅՐ. — Զէ, չեն կարող :

Գէնորգ. — Ո՞վէ տալիս այս վայրենի բաղերին կերակուր:

ՀԱՅՐ. — Իրանք են գտնում իրանց համար կերակուր:

Գէնորգ. — Բայց ձմեռն ինչ են անում:

ՀԱՅՐ. — Զմեռը դալիս է թէ չէ, վայրենի բաղերը
զնում են տաք երկիրներ և յետոյ գարնան ժամանակը
յետ են դալիս մեզ մօտ:

ԳԵՈՐԳ. — Յետոյ մեր բաղերն էլ ինչի՞ չեն կարու-
ղանում դրանց պէս լաւ թռչիլ և ինչի՞ սրանք էլ չեն
զնում ձմեռը տաք երկիրներ:

ՀԱՅՐ. — Այն պատճառով, որ տանու կենդանինե-
րըն իրանց ուժը կորցրել են և կոպտացել:

ԳԵՈՐԳ. — Ինչի՞ են այդպէս դառել:

ՀԱՅՐ. — Ահա՛, ասեմ քեզ պատճառը. այս տանու
բաղերը տեսնում են, որ մարդիկն են սրանց համար հո-
գում և կերակուր են տալիս, իրանք էլ չեն աշխատում
իրանց համար, իրանց ուժը չեն գործածում և սրանից
է, որ դրանք այդպէս կոպտացել են: Արանից զու տես-
նում ես, որ մարդիկն էլ իրանց ձեռով պէտք շինեն
իրանց գործերը: Աւրիշի ձեռով, ասած է, փուշ քաղէ:
Եւ այն երեխաները, որոնք որ ուրիշի օգնութեանն են
մնում և իրանք չեն աշխատում իրանց ձեռով շինել
իրանց համար իրանց բանը, միշտ թոյլ կըլինին, ոչ ուժ
կունենան և ոչ մեծ խելք ու գիտութիւն:

ԳԵՈՐԳ. — Չէ՛, հայր, այդ լաւ բան չէ: Ես կաշխա-
տեմ ինքս իմ ձեռով շինել իմ ամեն բաները, ինչ որ
կարող եմ, եթէ չէ, վատ կըդայ բանս, կըկորցնեմ իմ
շնորհքներս այնպէս, ինչպէս որ այս տանու բաղերը կոր-
ցրել են թռչելու շնորհքը:

ԱԹԱԺՆԵՐ.

Աւրիշի ձեռով փուշ քաղէ՛:

Աւրիշի կերի վրայ մի՛ նստիր:

Անբանը հաց ուտելիս առողջ է, բանելիս՝ հիւանդ:
Հաց ու պանիր, կեր ու բանիր:

ԾԻՇԵՌՆԱԿՆԵՐ:

ԱՆՆԱ: Սիրելի մայր իմ, մեր ծիծեռնակը, տես,
կը եկելէ. հերու էլ սա չը այստեղ է

ՄԱՅՐ. Դա էր: Բայց դու տեսա՞ր ինչքան մոծակ-
ներ էլ էին թռչում այստեղ:

ԱՆՆԱ. Տեսայ, ի՞նչպէս չէ, բայց ևս ծիծեռնակնե-
րի վրայ եմ խօսում, մայր իմ, դուք մածակների վրա
ինչ փոխեցիք բանք:

ՄԱՅՐ. Այն պատճառով, որ եթէ մոծակները շո-
լինեին, ծիծեռնակներն էլ չեին գալ այստեղ:

ԱՆՆԱ. Ուրեմն թռչունները գալիս են մեզ մօտ
ո՞յն ժամանակը, երբ որ նրանց համար այստեղ պատ-
րաստ է կերակուրը:

ՄԱՅՐ. Այդպէս է. բայց ո՞վ սովորցրեց թռչուննե-
րին ամառը գալ մեզ մօտ, ձմեռը գնալ տաք երկիր-
ները: Ո՞վ տվեց ծիծեռնակին այնքան շնորհը, որ սա
կարողանումէ ամեն տարի գտնել իրա բունը:

ԱՆՆԱ. Իհարկէ, մայր իմ, այդ բաներն Աստուած-
է սովորցրել դրանց:

ՄԱՅՐ. Աստուած ամեն անասունին շնորհը է տվել:
Երբ որ դու տեսնես, որ ծիծեռնակները գալիս են այս-
տեղ, միտդ բեր, որ Աստուած մինչեւնրանց դալը պատ-
րաստումէ նրանց համար կերակուր: Մարդկանց հա-
մար էլ նմանապէս Աստուած է հոգում: Սինչեւ քո աշ-
խարհ գալը Աստուած քեզ համար կաթը պատրաս-
տեց իմ ծծերի մէջ, որ դու անկերակուր չըմեաս: Ի՞նչ-
պէս ես կարծում, ո՞նց պէտքէ վճարես Աստուծուն
քո պարտը:

ԱՆՆԱ: Ես ոչինչ չունիմ, մայր իմ, ի՞նչ կարողի՞մ

պատիւ չունենք, ինչաեղ էլ դնումենք, ամեն տեղեց
դուրս են անում. թէ մեծի և թէ փոքրի աչքի փուշն
ենք: Մեծ մեծ տներումը թագնում են քաղցր կերակուր-
ները մեզանից, խրճիթներումն էլ աւելի սաստիկ թշնամի-
ներ ունենք, սարդերը որ խճռումն մեր ուները և մեզ
սպանում: Գնանիք, մեղրաձանձ, գնանիք, այնտեղ ասումեն
ամենքն էլ բարդաւոր են, մենք էլ բարդաւոր կը լինիք:

— **Ա**ստուած բարի ծանսապարհ տայ ձեզ, պատաս-
խան տվեց նրանց մեղրաձանձը, ես այստեղ էլ բարդա-
ւոր եմ: Մեծ մարդիքն էլ ու փոքրերն էլ սիրումեն ինձ և
պատվումեն իմ տված մեղրի և մօմի համար: Դուք գը-
նացէք ուր որ կամենաք, բայց ես կասեմ ձեզ. որ դուք
ոչ մէկ տեղ պատիւ չէք ունենալ մարդկանցից, որով-
հետեւ մէկ բանի պէտքական չէք, ամէն տեղ միայն
սարդերը կուրախանան ձեզանով: X

ԱՌԱԾՆԵՐ.

Յապոպն ինքը հոտած է, հենց դիտէ իրա բունն է
հոտած:

Ինձ տես, քեզ լաց, որտեղ ես, զայիմ կաց:
Քարն իր տեղը ծանը կը լինի:
Զանգակի ձայնը հեռուից լաւ է դալիս:

ՏԱՅ ՈՒ ՍԱՌՆ ԱՐԻԻՆ ՈՒՆԵՑՈՂ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ:

X **Ա**մեն կենդանի արիւն ունի, միայն մէկ քանիսի
արիւնը կարմիր է, միւսներինը սպիտակ և կամ դեղնա-
գոյն: Մարդու, անաստունների, թռչունների և ձկների
արիւնը կարմիր է, բայց եթէ կտրես բգեզը կամ որ-
դունքը, կը տեսնես որ սպիտակ ջրի պէս բան դուրս և
կաւ. այդ սպիտակ ջուրը նրանց արիւնն է:

պատիւ չունենք, ինչաեղ էլ դնումենք, ամեն տեղեց
դուրս են անում. թէ մեծի և թէ փոքրի աչքի փուշն
ենք: Մեծ մեծ տներումը թագնում են քաղցր կերակուր-
ները մեզանից, խրճիթներումն էլ աւելի սաստիկ թշնամի-
ներ ունենք, սարդերը որ խճռումն մեր ուները և մեզ
սպանում: Գնանիք, մեղրաձանձ, գնանիք, այնտեղ ասումեն
ամենքն էլ բարդաւոր են, մենք էլ բարդաւոր կը լինիք:

— **Ա**ստուած բարի ծանսապարհ տայ ձեզ, պատաս-
խան տվեց նրանց մեղրաձանձը, ես այստեղ էլ բարդա-
ւոր եմ: Մեծ մարդիքն էլ ու փոքրերն էլ սիրումեն ինձ և
պատվումեն իմ տված մեղրի և մօմի համար: Դուք գը-
նացէք ուր որ կամենաք, բայց ես կասեմ ձեզ. որ դուք
ոչ մէկ տեղ պատիւ չէք ունենալ մարդկանցից, որով-
հետեւ մէկ բանի պէտքական չէք, ամէն տեղ միայն
սարդերը կուրախանան ձեզանով: X

ԱՌԱԾՆԵՐ.

Յապոպն ինքը հոտած է, հենց դիտէ իրա բունն է
հոտած:

Ինձ տես, քեզ լաց, որտեղ ես, զայիմ կաց:
Քարն իր տեղը ծանը կը լինի:
Զանգակի ձայնը հեռուից լաւ է դալիս:

ՏԱՅ ՈՒ ՍԱՌՆ ԱՐԻԻՆ ՈՒՆԵՑՈՂ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ:

Ամեն կենդանի արիւն ունի, միայն մէկ քանիսի
արիւնը կարմիր է, միւսներինը սպիտակ և կամ դեղնա-
դոյն: Մարդու, անաստանների, թռչունների և ձկների
արիւնը կարմիր է, բայց եթէ կտրես բզեզը կամ որ-
դունքը, կը տեսնես որ սպիտակ ջրի պէս բան դուրս է-
կաւ. այդ սպիտակ ջուրը նրանց արիւնն է:

ԱԵԿ քանի կենդանիների կարմիր արիւնը տաք է լինում, միւսներինը սառը: Մարդու, ոչխարի, ձիու, գաղանների և թռչունների արիւնը տաք է: Գորաերի և ձկների արիւնը կարմիր է, բայց սառն է: Սպիտակ արիւնն էլ միշտ սառն է լինում:

Տաք արիւն ունեցող կենդանիները կարողեն ցըւտումն էլ ապրել, միայն մէկ քանիսն աւելի ցրտին չեն կարողանում զիմանալ: Գուք տեսնում էք, որ ձմեռը մեր երկիրներումը չեն մնում ծիծեռնակները, սոխակաները և կոռւնկներն այն պատճառով, որ սրանք ցու րտ չեն սիրում, նրանք ձմեռը զնում են աւելի տաք երկիրներ: Այնպիսի թռչուններ էլ կան, որոնք որ լաւ դիմանումն ցրտին, օրինակ՝ ագռաւները, ծաերը և կաքաւները:

Սառը և կարմիր արիւն ունեցող կենդանիները, օրինակ՝ օձերը և գորաերը չեն կարող ապրիլ ցրտումը: Այս կենդանիները ցրտի սկզբումը պառկումն հողումը, քարի տակը, կամ իրանց բնի մէջը և սառչումն: Վարնան ժամանակը տաքանումն և էլի կենդանանում: Սպիտակ արիւն ունեցող կենդանիները ձմեռը բոլորն էլ մեռնում են: Միայն մեղաւները կարողանում են զիմանալ ձմեռը, իհարկէ այն պատճառով, որ մարդիքն աշխատում են նրանց տաք տեղ պահելու: Ճանձերը, մոսծակները և բղէզները ձմեռը մեռնում են: Բայց զիտեք թէ ինչ տեղից են առաջ գալիս յետոյ: Ահա՛ լսեցէք: Ազդ կենդանիներն իրանց մեռնելուց առաջ ձու են դընում լաւ ապահով տեղերումը, քարերի տակը, ծառերի արմատի մօտ կամ թաղումն զեանի մէջը: Գարնան ժամանակն այդ ձուերից նոր կենդանիներ են առաջ գալիս:

ԻՆՉՈՎ, ԵՆ ԶԱՆԱԶԱՆՎՈՒՄ ԲՈՅՍԵՐԸ ԿԵՆԳԱՆԻՆԵՐԻՑ:

Քոյսերն ինչտեղ որ ցանկելես կամ անկելես, այնա
տեղ էլ մնում են մինչև չորանալը և իրանց աեղը չեն
կարող փոխել, մինչև մարդ չըվերառնէ և մէկ ուրիշ
տեղ չըտանէ: Բայց կենդանիները կարող են իրանց կամ-
քով փոխել իրանց տեղը, մարդիքն ու անասունները
մանենդալիս, թռչունները թռչում են, ձկները լող են
տալիս և որդունքները սողում:

Չին շարժում է իրա ոաները, ականջները, պոչը,
երբ որ կամենու մէ, նմանապէս և միւս կենդանիները կա-
րողանում են շարժել իրանց անդամները: Ծառի ծիւ-
զերն և տերեւներն էլ շարժվում են, բայց միայն այն ժա-
մանակը, երբ որ քամին փչում է, իսկ եթէ չէ, անշարժ
կան իրանց համար: Իրա կամքով ծառը չի կարող շար-
ժել ոչ իր ծիւզերը, ոչ տերեւները, ոչ ծաղիկները և ոչ
արմաար:

Կենդանիները լսում են մարդու ձայնը, բայց ծառ-
ուը և խոտը չէ, կենդանիները տեսնում են աչքով. բոյ-
սերը, աչք չունենալու պատճառով, ոչինչ չեն տեսնում:

Քոյսերն էլ կենդանիների պէս չեն կարող անկե-
րակուր ապրել, միայն նրանք իրանց կերակուրը ծծում
են արմատով և տերեւներով. կենդանիներն էլ կերակրով
են ապրում, միայն կենդանիներն ոչ արմատ ունին և ոչ
տերեւներ. նրանք կերակուրը բերանն են գնում, ծա-
մում են ատամներով և յեայ այն կերածը մարսումէ
ատամօքսը. բայց բոյսերն ոչ բերան ունին, ոչ ատամներ
և ոչ ստամոքս:

ԻՆՉՈՎ, ԵՆ ԶԱՆԱԶԱՆՎՈՒՄ ԲՈՅՍԵՐԸ ՀԱՆՔԵՐԻՑ:

Հանքերը սրանք են՝ հողը, քարը, երկաթը, ոսկին, արծաթը, պղինձը և աղը: Ի՞նչով են զանազան գումայիս բաները բոյսերից: Վերառնենք մէկ ծառ. և մէկ էլ քարի կտոր:

Ծառը բումումէ, մեծանումէ, բայց քարը կայ ինչպէս էլէլ է. չէ մեծանում: Ծառի վրայ ամառը տերեներ, ծաղիկներ և պտուղներ են դուրս դալիս, բայց քարի վրայ այդպէս բան ոչ մէկ ժամանակ չէք աեսնիլ: Ամառ ձմեռ մէկ տեսակ է քարը:

Ծառի տերել նման չէ ճիւղերին, արմատը նման չէ ծաղիկներին և ծաղիկները նման չեն պտուղներին. բոլորն էլ զանազան են: Բայց վերառ, կոտրէ՛ քարը, կըտեսնես, որ ամեն կտորն էլ քար է և նման է այն մեծ քարին, որից կոտրվել է: Ծառը որ կտրես ամառը, միջեց հիւթ է դուրս դալիս, քարը որ կոտրես, ոչինչ չէ դուրս դալիս միջեցը: Ծառը որ կոտրես, կամ արմատով հանես տեղիցը, կըսկսի չորանալ. յետոյ չորացած ծառը որ անկես հողումը, էլ չի ծաղկի, կըփտի: Բայց որ քարը վերառնես իրա տեղիցը և ինչտեղ ուղենաս տառնես, էլի այն քարը կըլինի, ամեննեին չի փոխվիլ: Արանից երեսումէ, որ ծառն ապրումէ, բայց քարը չէ, և որովհետեւ չէ ապրում, կեանք չունի, մեռնել չէ կարող. մեռնումեն միայն ապրող բաները:

Քարի պէս են նմանապէս հողը, երկաթը, ոսկին, արծաթը, պղինձը և աղը:

Ա. Բ Ե Գ Ա Կ :

Երկու երեխաներ՝ Տիղբանն ու Աւհակը բարձրացան մէկ սարի զլուխ և խոտի վրայ պառկած արեգա-

կի վրայ դատողութիւն էին անում։ Այնաեղ քահանայի որդին էլ, որ ուսումնարանումն աշակերտ էր, մօտ գնաց և լսումէր նրանց խօսակցութեանը։ — Չէ, ես լսու զիտեմ, ասաց Տիգրանը, որ այստեղից մինչև արեգակը քսան վերստէ։ Սահակը չէր համաձայնում, թէ պինչ պէս կարելի է, որ այդքան հեռու լինի։

Քահանայի որդին, որ այս բաները սովորելէր, ծիս ծաղելով ասաց — Ի՞նչէք կարծում, արեգակը մեծ է թէ վորքը։ Սահակն առանց մտածելու ասաց, մէկ թխած հացի չափէ։ — Չէ մէկ տան չափ կըլինի, ասաց Տիգրանը։

« Դուք երկուսդէլ չըդիտէք, ասաց քահանայի որդին, արեգակը մեր երկրիցն էլ շատ ու շատ մեծ է։ Նրկու երեխաներն էլ զարմացան։ — Ուրեմն ինչի՞ այնապէս փոքր է երեւում, ասաց Տիգրանը։ »

— Այն պատճառով, որ նա մեղանից շատ հեռու է, ասաց քահանայի որդին։ Եթէ թնդանօղի զուլլան, որ ինչպէս շուտէ թռչում, թռչելով գնար այս մեր երկրից դեպի արեգակը, էլք կըքաշէր այդ Ճանապարհորդութիւնը քսան տարին։

Երկու երեխաներն էլ բերանները բաց մնացին։ Ապա լուսինն ինչքան աւելի մեծ կըլինի, զլուխը թափալով ասաց Սահակը։

— Ի՞նչի՞ ես այդպէս կարծում, ասաց քահանայի որդին։ Լուսինն այն պատճառով է մեզ մեծ երեւում, ուրովհետեւ նա արեգակի պէս հեռու չէ մեղանից։ Յետոյ քահանայի որդին սկսեց սրանցը պատմել ինչ որ գիտէր արեգակի և լուսի վրայ։

ԽԵԼՈՔ ՃԻՃԱԿԻ:

ԱԵԿ սարդափումն օ՛՛ռուքից քաշ էր արած մէկ մէծ
կտոր կօլօլ պանիր, որ միները չուտեն, բայց միների
փոխանակ պանրի մէջն արդէն որդունքներն էին բռւն
դրել; Այդ որդունքներից մէկը շատ խելօք էր: ԱԵԿ օր
դա ուղեց իմանալ թէ այն պանիրը, որի վրայ ինքն զը-
անվումէր, ինչ ձեւ ունէ: Սարդափում կային էլլ քաշ-
արած մէկ քանի հատ պանիրներ ու սրանք բոլորն էլ
կօլօլ էին, բայց որդունքներն այնպէս կարծեցին, թէ ի-
րանց պանիրը տափակէ, որովհետեւ երբ որ պանրի երեւ-
սըն էին դուրս գալիս, նրանցն այդպէս էր թվում: այդ
պատճառով էլ խելօք որդունքը ճանապարհ ընկաւ,
սկսեց զնալ մէկ կողմը դրուստ և մէկ քանի օրից յե-
տոյ դիմացի կողմիցը եկաւ էլլ այնտեղ, որտեղից որ
ճանապարհ էր ընկել:— « Չիմա ես դիտեմ, ասաց որ-
դունքը, որ մեր պանիրը կօլօլէ: Ես ճանապարհին միշտ
զնումէի ուղիղ և ուղղակի յետ եկայ էլլ այնտեղ, որ-
տեղից էլ որ դուրս էի եկել. թէպէտ երբեմն տեղաեղ
պատահեցան ինձ փոսիր, որ մենք փորել ենք ու կերել,
երբեմն էլ պատահումէին ինձ փոքրիկ սարեր, մեր դուրս
կրած փշանքներից դոյացած, բայց այդ փոսերն էլ ու
սարերն էլ, համեմատելով պանրի մէծութեան հետ, ոչ
ինչ են ու պրանիցէ, որ մեր պանրի ձեւը չէ փոխվում»

Այն սարդափումը քաշէրարած մէկ կանթեղ, որ
գիշերները վառ էր լինում: Երբ որ մեր խելօք որդունքը
յայտնեց իրա դիւտը միւս որդունքներին, որա ընկեր-
ներից մէկը նմանապէս ուղեց ճանապարհորդութիւն ա-
նել, որ դրուստ իմանայ պանրի կօլութիւնը: Այս
իրա դիտաւորութիւնը յայտնեց խելօք որդունքին

— ’Իղուր կըլինի այդ ճանապարհորդութիւնը, պատասխան տվեց նա, եթէ ուղումես իմանալ մեր պանարի կօլոլութիւնը, ահա՛, մարիկ տնւր այն շուաքին, որ պատի վրայ է, այդ մեր պանրի շուաքն է. տես շուաքը կօլոլ է, ահա՛, երբ որ այս սարգափի տէրը դայ ու ծըրագը դէս ու դէն տանէ, դու մտիկ տնւր, որ կողմից էլ լինի ճրադի լոյսը, մեր պանրի շուաքն էլի կօլոլ կըլինի. ուրեմն դուրս է զալիս, որ ինքը պանիրն էլ կօլոլ է: Ես շատ ժամանակ է, որ վարառւրդ եմ անում: Աէկ զիւշեր սարգափի տէրը ներս եկաւ այստեղ՝ ձեռին մէկ թեփշի. այդ թեփշու շուաքն երբեմն կօլոլ էր, երբեմն տափակ, երբեմն նման էր լինում մէկ բարակ խազին, նաև յելով, թէ ինչպէս ունէր բռնած ձեռին: Այս բանը թեփշու տափակութենիցն է: Բայց մեր պանրի շուաքը միշտ մնումէ կօլոլ, ուրեմն մեր պանիրն ինքն էլ կօլոլ է ինչպէս ձմերուկը կամ ինչպէս մէկ գունա: Այս բոլոր աեղեկութիւնները շուտով միւս որդունքների հետաքրքրութիւնը շարժեցին, նրանք էլ սկսեցին ուշք ու մաքով քննել և շուտով էլի նոր տեղեկութիւններ ստացան իրանց պանրի գնտաձև լինելու մասին: Օրինակ, նրանք վարառւրդարին, որ երբ իրանք մօտ են գնում թոկին, որից կախ էր արած պանիրը, թոկը երկարանումէր, իսկ եթէ հետանումէին, թոկը կարծ էր թրփում: Նմանապէս տեսան, որ սարգափումը վառած կանթեղը չէ թէ բոլոր պանիրն էր լուսաւորում, այլ միայն պանրի մէկ կողքը. իսկ երբ որ սարգափի տէրը ծրագը դէսուղին էր տանում, այն ժամանակ ճրագի լոյսը մէկ քանի որդունքներն առաջ էին աեւնում, միւսները ուշ: Այս բոլոր տեղեկութիւններից նրանք հասկացան, որ իրանց բնակարանը — պանիրը գնտաձև է:

ՏԱՐՈՒԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ:

ՈՐԴԻՆ. Ինչի՞, հայր իմ, ամառն արեգակն այցրումէ մեզ, իսկ ձմեռը՝ չէ. երեխ ամառն աւելի մօտիկ է մեզանից արեգակը:

ՀՕՅՔ. Չէ, որդի՛, ձմեռն աւելի մօտիկ է մեզանից արեգակը, քան թէ ամառը, բայց նրա հեռու և մօտիկութենից չէ կախած, բանը նրա դրութիւնն է երկընաքումը: Վերան ձմեռուայ մէկ պարզ կէսօրին, կըտեսնես որ ամառուայ արեգակն աւելի բարձր է կանգնած երկնքումը, քան թէ ձմեռուանը. բայց քանի որ բարձր է արեգակը, այնքան նրա ձառագայթները մեզ վրայ դրուստեն ցած գալիս և այդ պատճառով աւելի շոգ է լինում: Այս բանը դու կաբողես վարառութ անել ամեն առաւօտ և իրիկուն. ուրովհետեւ այդ ժամանակներն այնքան չեն այրում մեզ ձառագայթները, ինչքան Ճաշի ժամանակ, երբ ուղղակի ցած է գալիս մեզ վրայ լոյն ու աւելի շոգ է լինում: Բացի զբանից ամառն արեգակն աւելի վտղ է գուրս դալիս և ուշ ներս մոնում, ուրեմն աւելի շատ ժամանակ տնի երկիրը տաքացնելու: Այդպէս ահա ինչքան բարձր է արեգակը մեզ վրայ կանգնած, ինչքան աւելի ուղղիղ են թափում մեզ վրայ նրա ձառագայթները և ինչքան երկար է նա մեզ լուսաւորում իրա ծագելուց սկսած մինչև մայր մանելը, այնքան աւելի տաքութիւն է տալիս արեգակն ու այնքան աւելի շոգ է լինում:

Չմեռն արեգակն աւելի մօտէ դէպի մեզ. այս պատճառով էլ նրա ձառագայթները փովում են և ուղղակի չեն վեր դալիս մեզ վրայ ինչպէս ամառը և չեն կարու-

զանում՝ ամառուայ պէս տաքացնել երկիրը։ Բացի սըրանից, ձմեռն արեգակն ուշէ ծագում և վաղ մայր մտնում։ Հաղիւ թէ մէկ աեղ նոր սկսումէ տաքացնել, որ ահա ստիպված է թողնել ու մայր մտնել, այս ինքն երթալ ուրիշ երկիրները տաքացնելու։ Այս պատճառով էլ ձմեռը կարծ ու ցուրտ օրերեն լինում։ Այդ պէս ահա ինչքան մօտէ մեզ արեգակը, ինչքան շատ են փուլում նրա ձառագայթներն ու ինչքան կարծ ժամանակ են նրանք լուսաւորում երկիրը—այնքան աւելի ցուրտ է լինում մէր երկրումը։

Դու վարառուրդ կըլինես արած, որ ամառուայ տաքութիւնը յանկարծ չէ փոխվում, ձմեռուայ ցուրտ դառնում։ Այլ ձմեռուայ ցրաից յետոյ կամաց կամաց օրերը տաքանումեն և յետնույետը մօտիկանումեն ամառուայ տաք օրերին։ Ամառուայ տաք օրերն էլ յետնույետը սառնանալով դառնումեն ձմեռուայ օրեր։ Զըմեռուայ ցուրտ օրերից դէպի ամառուայ տաք օրերն անցկենալուն ասումենք Գարուն, իսկ ամառուայ շուգերից դէպի ձմեռուայ ցուրտն անցկենալուն ասումենք Աշուն։ Զորս Ժամանակները՝ Գարունը, Ամառը, Աշունը և Զմեռը կազմումնեն մէկ ամբողջ տարի և ասվումեն տարուայ չորս եղանակներ։

ԱՄԱՌՈՒԱՆ ՇՈՒԵՐԻ

Ամառուան շող օրերից մէկն էր։ Երեխան քրտինքը սրբելով լաց էլաւ ու գանգատվեց մօրը, որ շողից զժուարանումէ մինչև անդամ շունչ քաշել։

— Թէ ինչի՞ն է հիմա այսպէս շող, ի՞նչ է որա օգուար, ես քեզ մէկ ուրիշ ժամանակ կասեմ, պատասխան

ավեց մայրը, բայց հիմա այսքանը զիտացիր, որ նա, ով որ հրամայումէ այսպէս շող լինիլ, նրա անուննէ Աստաւած և այդ բարի Հայրն այնպիսի բան չէ անում, որ մեզ համար վատ լինի: ո

Երեխան լռեց, հաւատալով մօր ասածին, որով հետեւ մայրը նրան միշտ ճշմարիտ բաներ էր սովորցրել: Երեխան միայն աշխատումէր առանց տրանջալու համբերութենով տանել ամառուայ շողը:

Անցկացաւ օգոստսս ամիսն ու շողերն էլ վերջացան: Աշնան հովորերը կասես թէ հրաւիրումէին եւ բեխային դէպի այդին: Այգումը մրգերը հասել էին ու խաղողի քաղելու ժամանակն էր:

Երեխան չափիցը դուրս ուրախութեան մէջն էր, երբ տեսաւ կարմրած խնձօրները, ու ու սպիտակ խաղողի ճթերը, դեղնած ու կարմրած գեղձերը, ու թըզերն ու հասած տանձերը:

— Մայր իմ, ինչպիսի գեղեցիկ մրգեր է խվել մեզ Աստուած: Ի՞նչպէս բարի է նա, ինչքան սիրում է նա մեզ: ո

“Սիրելիդ իմ, միայ բեր ինչպէս մէկ ամիս առաջ շողերի ժամանակը զունեղանումէիր, թէ ինչի՞ է շոգ, ահա այն քեզ նեղացնող շողերն էին, որ այս պառող ներին ավին այս գեղեցիկ քաղցրութիւնը և գոյնը: Ահա շողերի տված օդաւար: ո

Ա. Ա. Ա.

Սենք ենք շտապում, Աստուած չէ շտապում:

ԱՐԵԳԱԿԻ ՓԱՅԼՈՒՄՆ ՈՒ ԱՆՁԲԵՒԲԻ:

“Ա՞յս երանի թէ միշտ փայլէր արեգակը, ասում
էին մեկ օր երեխաները, երբ որ դուրսն ամողած էր և
անձրեւ էր գալիս: Արեխաների ցանկութիւնը շուտով կա-
տարվեցաւ. երկու ամիս շարունակ երկնքումն ամազ չե-
րեաց. շոզից գաշտերն ու այգիներն սկսեցին չորանալ,
վերջապէս այն դիւղի փոքրիկ աղբեւրն էլ, որից որ ջուր
էին խմում, նա էլ սկսեց ցամաքիլ: Արեխաներն ի-
րանց ծնողների հետ միասին յուսահատութեան մէ-
ջըն էին:

“Տեսէք, ասաց մայրը, ահա! անձրեն էլ այնքան օգա-
տաւէտէ լինում, որքան և փայլուն արելք: ո

ԱԹԱՅ.

Ամեն բանն իրա տեղն ունի:

ԵՒՏՆ ՈՒ ԵՐԵՒԱՆ:

Մէկ ցուրտ օր սաստիկ քամի եր դուրսը, երկնա-
քումը մեկ թռչուն չէր երեսում, ամենքն իրանց ըներն
էին մասել: Մէկ փոքրիկ ծիտ ցրախցն ու քամուցը նեւ
զայած ու ճանապարհը կորցրած, եկաւ նստեցաւ Ստեփան-
իսնենց տան պատուհանի առաջը: Ամեն մարդ, ովոր
տեսնէր կըխղճար ու խեղճ թռչունին ձեռից եկած օգա-
նութիւնը կտար, բայց Ստեփանն ընդհակառակը, ոչ
միայն չըդթաց թռչունի վրայ, այլ տեսնելով թէ ինչ
նեղ գրութեան մէջն է ու հեշտ բռնելու է, բռնեց ու
սկսեց հեան այնպէս խաղալ, ինչպէս կտառն մկան հետ:
Ծիտն սկսեց ծվծվալ, դէս ընկնիլ, դէն ընկնիլ, վերջը
շունչը ավեց և փայտի պէս չորացաւ:

Աէկ քանի օրից յետոյ Ստեփանը մտաւ անտառ-
ոը, որ իրանց տանից հեռու չէր, սկսեց փոքր ինչ գլ-
նալ անտառի մէջն ու յանկած երբ որ ուզեց յետ
դառնալ, ճանապարհը կորցրեց։ Ողբան աշխատում էր
վազելով դուրս գալ մութն անտառից, այնքան աւելք
խորն էր մտնում և իրանց տանից հեռանում։ Կամաց
կամաց սկսեց մութն ընկնիլ ու ցրտիլ։ Ստեփանը դէս-
ուզէն էր վազում, լաց էր լինում, բարձր գոռումէր, բայց
բոլորն անօգուտ անցկացաւ։ Այս ժամանակ մօտովը մէկ
գիւղացի էր անցկենում։ սա լսելով երեխայի ձայնը՝ ե-
կաւ, վեր առաւ կիսասառչիլ Ստեփանին, փաթաթեց
իրա շորերումը և տարաւ նրա հօր մօտ։

Լան կըլինէր եթէ Ստեփանի հետ էլ այնպէս վար-
չէր գիւղացին, ինչպէս Ստեփանը վարվեցաւ ծափ հետ-

ԲԱՐԻ ՀԱՅԲ:

Աէկ բարի մարդ թողելէր իրա կինն ու որդիքը
գիւղումը և ինքը դնացելէր մեծ քաղաքումն էր կենում,
այն տեղից ուղարկումէր նրանց համար ապրուսոր։ Սէկ
անգամ հայրն ուղարկեց իրա ընտանիքի համար մէկ
հակը զանազան թանգաղին բաներով լիէր, մէջն էլ մէկ
նամակ էր դրել։ Նամակումը գրած էր, թէ «Սիրելի որ-
դիք, միշտ խոնարհ և բարի էլէք և շուտով կրդաք ինձ
մօտ։ Ռւրախացէք, որովհետեւ այն տունը, որնոր պատ-
րաստումը ձեզ համար այստեղ, աւելի մեծ և թանգ-
աղին պարզեներով լիքն է։»

Որդքերանցը շատ ուրախացրուց այս նամակը և
ստացած պարզեներն ու խօնք տվին մէկզմէկու, որ կա-

տարեն իրանց հօր կամքը: “Ի՞նչ ուրախութիւն կըլինի,
ասացին երեխաները, մեր բարի հօր տեսնելը:”

Երեխաների մայրը լսումէր այս բաները: “Նա առ
աց իրա որդքերանցը, թէ Կիմ սիրելի զաւակներ, դուք
զիտէք, որ մեր Արկնաւոր Հայրն էլ ձեր հօր պէսէ վարա-
վում մեզ հետ: Իհարկէ մենք մարդիքս դեռ չենք
տեսնում Աստուծուն, բայց Նա տալիսէ մեզ ամեն օր
իրա սպարգեները՝ արեգակը, լուսինը, ասաղերը, ծաղիկ-
ները և պտուղներն ու սրանով ցոյց է տալիս Նա մեզ
իրա սէրը: Աստուածաշունչն էլ մեր Ստեղծողի մեզ մօտ
զրած նամակն է: Այդ նամակով Աստուած մեզ յայտ-
նումէ իրա կամքը և խոստանումէ մեզ արքայութիւն:”

“Ուրեմն սիրենք Աստուծուն, կատարենք նրա հրա-
մանները և միշտ արքայութիւնը միաներս բերելով ու-
րախանանք:”

ԱՌԱՋՆԵՐ.

Աչքէն հեռու, սրտէն էլ հեռու:

Ինքն այստեղ չէ, իրա փայ Աստուածն այստեղ է:

ԵԿԵՂԵՑԻ:

Երբ որ մէկ գիւղն ես մտնում, ամեն բանիցն ա-
ռաջ ի՞նչ ես տեսնում: —Եկեղեցին: Եկեղեցին ամեն
աներից բարձր է շինած այնպէս, որ նրա զանգակատունը
շատ հեռուից կարողես ականել: Եկեղեցին միւս անե-
րից մեծ է և նրանցից հեռու է շինած, նա միւս անե-
րի նման չէ: Ոչ մէկ տուն չէ մտնում գիւղի բոլոր ժո-
ղովուրդը, բայց եկեղեցումն ամեն մարդ տեղ ունէ մե-
ծըն էլ, փոքրն էլ, հարուստն էլ, աղքատն էլ, հիւանդն
էլ և առողջն էլ: Ամենքը հաւասար են Աստուծու առաջը:

Քեզ երեխայ ժամանակին եկեղեցումն են մկրտել՝ եկեղեցումը կը պահակին քեզ, երբ որ մեծանաս: Երբ որ մեռնեօն նմանապէս եկեղեցին կրտանեն քեզ և եկեղեցու մօտ կը թաղին քեզ: Եկեղեցու մօտ են լինում թաղած նմանապէս քո հայրը, մայրը և պապերդ:

Ուրիմն եկեղեցին և հասարակ աները միենոյն չեն: Հասարակ տանը դու կարողես բարեկամ էլ ունենալ, թշնամի էլ: Բայց եկեղեցումը Աստուծու տանը, թշնամիներդ էլ հանումնեն իրանց սրտից ոխը և ատելու թիւնը, մառահումնեն չարութիւնը և բարեկամանումնեն քեզ:

ՀԱԻՍԱԲՄՈՒԹԻՒՆ:

Կռապաշտների թագաւորը կանչեց իրա մօտ մէկ քրիստոնեայ եպիսկոպոս և հրամայեց նրան, որ թողնէ իր հաւատը և կուռք պաշտէ: Եպիսկոպոսը խոնարհութենով պատասխան տվեց նրան, թէ աթադաւոր, ևս չեմ կարող կատարել ձեր հրամանը: Բարկացաւ թագաւորը և գոռաց նրա վրայ, թէ աբնչպէս կրհամարցակվես ինձ ընդդիմանալ, դու չես խմանում, որ քո կեանքն իմ ձեռին է, ևս այս բոպէիս կը սպանել տամ քեզ: Ա

«Գիտեմ, պատասխան տվեց եպիսկոպոսը, որ այդ բանը կարողէք անել, բայց խնդրումեմ առաջ լսեցէք խօսքիս և յետոյ վճռեցէք դործը: Ասենք թէ քո հաւատարից ծառաներից մէկն ընկնի թշնամու ձեռը և նրան հարկադրեն, որ քեզ թշնամութիւն անէ, բայց քո ծառան իրա հաւատարմութիւնը ըթողնէ և թշնամիներդ այդ բանի համար հանեն նրա շորերը և որկը դուրս անեն ծաղրելով, երբ որ այն ծառան քեզ

մօտ գայ, ի՞նչպէս կըհանդիպիս զու նրան, չե՞ որ կը-
տաս նրան լաւ շորեր ու թշնամուդ էլ կըպատժես:

— “ Իհարկէ, պատասխան տվեց թագաւորը, այդպէս
կըլինի: Բայց այս գործի հետ ի՞նչ կազ ունէ աստծոց: ”

Այն ժամանակն եպիսկոպոսը հանդարտ կերպով
ասաց նրան, թէ ՞թագաւոր, զու կարողես իմ այս աշ-
խարհի շորերը հանել, բայց իմ թագաւորը կըտայ ինձ
այն աշխարհումն աւելի լաւ շորեր: Ի՞նչ ափսոսալու է
այս աշխարհի շորերս, քեզ լինի, եթէ կուզէս, իլէ՛ ին-
ձանից, ես ուրախ էլ կըլինեմ: ”

Թագաւորը զզջաց ու ասաց եպիսկոպոսին, թէ
“ զնա՞, պաշտէ քո Աստուածը, ես չեմ զիազում այս
աշխարհի շորերիդ, ազատ ես: ”

ԱՌԱՋՆԵՐ.

Աստուած կանչողը մաղբուն չի մնալ:

Աստուած պահած գառը դայլը չի ուտիլ:

ՄԱՐԴՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ:

Ակ հայր իրա որդքերանցը պատմեց այս առա-
կը, թէ մէկ թագաւոր ուղարկել էր իրա թագաւորու-
թեանը պատկանած կղզին կառավարելու համար մէկ կու-
սակալ: Այս կուսակալը շատ տարի կառավարելուց յետոյ
պէտք է զնար իրա թագաւորի մօտ հաշիւ տալու: Այն
բարեկամները, որոնց վրայ սա աւելի յոյս ունէր, տեղիցն
էլ չըշարժվեցան, չըգնացին նրան գոնեայ մինչև նաւը
ճանապարհ զցելու: Միւս բարեկամները, որոնք սրան միշտ
ասումէին, թէ ամեն տեղ պատրաստ են նրա հետ գնալու,
գնացին հետը մինչև նաւը. բայց այն բարեկամները, որոնց
վրայ շատ քիչ յոյս ունէր, գնացին նրա հետ մինչև թա-
գաւորի պալատը և այնտեղ խօսեմէին նրա կողմը և

բարեխօսութիւն էին անում թագաւորի առաջ նրա համար: Որդիքը չըհասկացան այն առակի զօրութիւնը: Հայրը յետոյ մեկնեց նրանց, թէ այս աշխարհումը մարդս երեք տեսակ բարեկամներ ունէ և նրանցը ձաւնաչումէ միայն այն ժամանակը, երբ որ այս աշխարհից պնումէ միւս աշխարհ Աստուծուն հաշիւ տալու: Մարդու առաջին բարեկամը փողն է և կայքը, այս բարեկամներն մարդու հետ չեն գնում բոլորովին: Միւս բարեկամներն ազգականներն են և ծանօթները, որոնք որ ծանապարհ են զցում մարդուն մինչև գերեզմանատունը: Երրորդ տեսակ բարեկամները մարդու բարի գործներն են, որ գնումնն հետն ու Երկնաւոր Թագաւորի առաջ բարեխօսութիւն են անում մարդու համար:

Ա.Ա.Ա.

Մարդ այնպիսի բան պիտի անէ, որ մէկ անունն այստեղ թողնէ, մէկն էլ այնտեղ տանէ:

ՃՇՄԱՐԻՏ ԲԱՐԵԴՈՒՇՈՒԹԻՒՆ:

Սէկ գիւղի քահանայ երկար ժամանակ քահանայութիւն էր անում և իր եկեղեցու եկամուտից յետ էր զցել հարիւր մանէթ: Նա ուզում էր այն փողերովը նոր սկիհ առնել, որովհետեւ հին սկիհը բոլորովին հնացել էր և էլ յարմար չէր Քրիստոսի սուրբ արիւնն ու մարմինը մէջը պահելու: Քահանան շուտով ճանապարհ ընկաւ դէպի քաղաք և քաղաքումը սկիհի դուքանը հարցուփորձ անելիս մէկ տան բակիցը ձայներ լսեց ու կամեցաւ իմանալ, թէ ինչք համար են գոռում, գոչում: Մտաւ տուն, տեսաւ որ պօլիսիայի աստիճանաւորը կանգնած մուրճը (չաքուճը) ձեռին

ծախում է սեղանի վրայ դարսած մէկ խեղճ՝ մարդոք պղնձները, ամանննրը, շորերը և տան զանազան հարկաւոր բաները: Խեղճ՝ մարդը կանգնած էր դռան առջեր և լաւ լով մարիկ էր տալիս այն բաների ծախելուն: Քահանան դնաց այն մարդու մօտ և քաղցր ձայնով ասաց նրան, թէ սինչի՞ ևս ծախում քո տան կարդն ուսարդը: ո

— Ու թէ ևս ևմ ծախում, տէր հայր, պատասխան տվեց խեղճը, այլ պօլիցիան է ծախում, որովհետեւ տան տէրս գանգատ էր գնացել ինձ վրայ: Այս երկու տարի է ինչ որ հիւանդ պառկած էի և չէի կարողանում փող աշխատել, պարտքի տակն ընկայ և այդ պատճառով ծախումն իմ տան սարգնու կարգը պարտքերս վճարելու համար: Բայց ինչ պէտք է անեմ յետոյ, միայն Աստուած գիտէ: ո

• Քահանան ասաց այն ըստէին պօլիցիականին, թէ ս համբերեցէք, ինչքան է պարտական այս մարդը: ո

— Հարիւր ու հինգ մանեթ ու երեսունու հինգ կոպէկ: ո Քահանան հանեց ջեպիցը սկիհի հարիւր մանեթը և իրա փողեցն էլ աւելացրուց պակասն ու տվեց այն խեղճ՝ մարդու պարտատիրոջը:

Խեղճ՝ մարդը վեր առաւ իրա տան կարգնուսարգը և արտասունք թափելով շնորհակալութիւն արաւ քահանային:

Յետ դառաւ քահանան իրանց դիւղը և պատմեց իրա ժողովողին այս անցըը, վերջն էլ աւելացրուց, թէ վնաս չունէ, ևս առաջուայ պէս հին սկիհումը կըպահէմ սրբութիւնը: Ես կարծումեմ, որ ախոռումը ծընած մեր Աստուծուն աւելի դուրեկան կրինի մեր աշխած բարերարութիւնը, քան թէ Նրա մարմինը և աշխիւնը պահելու համար նոր ոսկէ սկիհի առնելը:

ԵՐԳԵՐ:

1

Լուսացաւ լուսացաւ,
Լուսն է բարին,
Ծիտն է ծառին,
Հաւն է թառին:

Ծոյլ մաքդկանց քունն է տարի:
Աշխատաւոր վեր կաց բանիդ,
Երկնքի գըռներն բաց էր,
Ոսկէ աթոռըն դրած էր,
Քրիստոս վըրէն նըստած էր,
Լուսաւորիչն կանգնած էր,
Ոսկէ գըրիչն բըռնած էր,
Մեծ ու պըստիկ գըրում էր,
Մեղաւորներն լալում էին,
Արդարներն խաղում էին:

2

Արեգակ արեգակ դուս արի,
Հերն ու մերդ էկիլ է,
Օսկէ բլիթ բերիլ է,
Պատի ծակը դրիլ է,
Մուկն էկիլ է տարիլ է,
Կատուն էդնէն վազիլ է,

Գոմշի վուտը կոտրիլ է,
Աղամանը վեթիլ է:

3

Եգուց կիրակի է,
Կոկոմ քաղելու է,
Կոկոմ քաղեմ դէղին տամ,
Դէղին մէ ինձ գառը տայ,
Գառը տանեմ Աստծուն տամ,
Աստուած ինձ մէկ ախաղէր տայ:
Ախաղէր ախաղէր ես քու շուն,
Գօտիկի ծէրին աբրեշում:
Սբրէշում չպի կաղ ըլի,
Սուփրի ծէրին սազ ըլի:

4

— Ինչու կուլսս դուն, դառնիկ:
« Խիստ ծեծ կերայ ես, մարիկո: »
— Ո՞լ ծեծեց քեզ, դառնիկ:
« Մէկ ծեր կախարդ մը կընիկո: »
— Ըստո՞ր ծեծեց քեզ դառնիկ:
« Ծառին տակը իս, մարիկո: »
— Ինչով ծեծեց քեզ, դառնիկ:
« Մէկ պասխօնով մը մարիկո: »
— Ո՞ր տեղդ զարկեց քեզ, դառնիկ:
« Ոտւլներուս, իմ մարիկո: »
— Ինչպէս լացիր դուն, դառնիկ,
« Մէ՛, մէ՛, մէ՛, մէ՛, իմ մարիկո: »

5

Մեղնից շատ առաջ կար մի թաղաւոր,
Հոգւով դեռ արի, զիսով ալեսոր.
Ենծ ծով էր պատել նորա աշխարհը՝
Ուկի ասացին գիտունք այն դարը:
Աւնէր նա երկու մատաղչաս աղջիկ,
Մինը խխտ տըգեղ, միւսը գեղեցիկ.
Մի օր տըգեղը ասաց միուսին,
«Երթանք ծովի ափ, քուրիկ միասին՝»
Միրունը զընաց առաջից տրտում,
Տըգեղը եանից ոխ պահած սրտում.
Հազիւ թէ ծովի ափին էր հասած,
Իր սիրուն քըրոջ դլորեց նա ցած:
Կանչեց կիսամեռ սիրունը ջըրից
«Քուրիկ իմ, քուրիկ, փրկէ՛ ինձ մահից,
Ես ունիմ տանը գեղեցիկ մանեակ,
Ա՛ռ էն քեզ լինի, պարգևէ՛ ինձ կեանք» . . .
— Էն առանց քեզէլ կարող եմ ստանալ,
Ինձնից փրկութիւն դու բնաւ մի՛ յուսալ:—
«Քուրիկ, թէ այդ էլ քեզ չէ բաւական,
Կուտամ քեզ ոսկի պըսակ պատուական»
— Էն առանց քեզէլ կարող եմ ստանալ,
Ինձնից փրկութիւն դու բնաւ մի՛ յուսալ:—
«Քուրիկ, մի՛ թողնիլ դու ինձ անտէրունչ,
Քեզ սիրուն վիսաս կուտամ անտրտունչ:»
Տըգեղի սիրող դարձել էր ժէռ քար,
Քոյջը խնդիրը թողեց անկատար:
Զկնորսը ծովը ձըգեց մեծ ուռկան,
Քըռնից մարմինը սիրուն աղջկան»

Զըսիցը հանեց, զըսից ափի մօտ,
Յատ ծաղիկ ցանեց վըրան ու շատ խոս:
Մի աշուղ անցաւ, տեսաւ աղջկան,
Լացեց ու տռաւ, գըրեց ուսի վըրան.
Տարաւ իրա տուն այդ անդին զիւտը,
Չորացուց նորա մարմնու դիմ հիւթը:
Գեղեցիկ տաւիդ շինեց ոսկերից,
Քաղցրաձայն լարեր հիւսեց մարդից.
Երբ օր ամեն բան պատրաստեց կարգին,
Գնաց արքունիք տաւ իղը ձեռքին.
Երբ մըտաւ դահլիճ շըքեղ դարդարած,
Տեսաւ տըգեղին վիսի մօտ կանդնած.
Բացեց բերանը, լարերին խիեց,
Հիւրերի առջև քաղցրաձայն թրդեց.
«Հնչէ, իմ տաւիդ, հնչէ համարձակ,
«Հարազատ քոյրը խըլեց իմ վեսան.
«Վրտէ ժողովուրդ, լըսէ անխոռով,
«Հարազատ քոյրը զըլորեց ինձ ծովու.
Միւս օր դահլիճք խարոյկ շինեցին
Մահապարտ քըրոջ մէջը դլորեցին:
Հուրը պըլալաց, աղջիկը կանչեց.
«Իմ մեղաց համար Աստուած ինձ պատժեց.

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵՆԻՑ ՔԱՂՈՒԱԾ:

ՀԱՅԿ:

Մենք Հայերս սրանից 4000 տարի առաջ մէկ
նախահայր կամ մեծ պատ ունէինք, որի անունն էր
Հայկ: Դա շատ քաջ մարդ էր ու Շշմարիտ Աստուած էր
պաշտում և որովհետեւ այն ժամանակվայ թաղաւոր
Բէլն ուզում էր իրան Շշմարիտ Աստուածու տեղ պաշ-
տել առաջ սրա համար էլ մէր պատ Հայկը ժողովեց իր
որդքերն առ թռուներին ու եկաւ Արարատ սարի
մօտ բնակուեցու: Թաղաւորն իմանալով, որ Հայկն իրան
Աստուածու տեղ չէ ուզում պաշտել, բարկացաւ, միծ
զօրք ժողովեց ու եկաւ Հայկին հնապանդեցնելու. բայց
Հայկն իր որդիերանցովն ու թռուներովը դուրս գնաց
նրա դէմ պատերազմելու կուտի ժամանակը Հայկը գրա-
ցեց նետը, թաղաւորի դոշի պղնձէ տախատակը, վահա-
նը, ծակվեցաւ ու նետը խրվեցաւ նրա սրառմը: Խա-
յոյն մեռաւ այն ուժեղ թաղաւոր Բէլը և նրա զօրքն
էլ տեսնելով իրանց տիրոջ մեռնիլը՝ փախաւ զնացի-
րանց երկիրը: Հայկն այդ պատերազմի դաշտումը մէկ
քաղաք շինեց, անունը զրեց Հայք և մեռած թաղա-
ւորի մարմինը մէկ բարձր տեղ թաղեց, որ ամենքն էլ
տեսնեն և միտք բերեն Հայկի քաջութիւնը: Մեր աշ-
խարհը Հայկի անունով Հայատան ասվեցաւ և մենք
էլ նրա թռուներս ասվամենք՝ Հայ: Հայկը մէկ թռուն

ունէր անունը Շարայ, դա սաստիկ շատակեր մարդ էր
և այս պատճառով էլ Շարան իրա տնով աեղով զնաց
Հայաստանի պտղաւետ երկրումը բնակուեցաւ։ Նրա կա-
ցած երկրի անունն իրա անունով Շիրակ ասվեցաւ։ Շի-
րակին հիմի Շորագեալ ենք ասում։ Մինչև հիմի էլ սու-
վորութիւն կոյ, որ Հայաստանումը շատակեր մարդա-
կանցը ասում են, թէ “եթէ քո փորը Շարայի փորն է,
մեր ամբարները Շիրակոյ կամ Շորագալի ամբարները
չեն”։

ԱՐԱՅ ԳԵՂԵՑԻԿ:

Ասորեստանի թագուհի Շամիրամը լսելով, որ մեր
թագաւոր Արան շատ զեղեցիկ մարդ էր, մարդ ուզար-
կեց բարեխօսելու, որ իրան ուզէ։ Բայց Արան շըկամե-
ցաւ։ Շամիրամը բարկացաւ ու մաքումը զրեց ուժով
Արային իր մարդ շինել։ զօրքով եկաւ Հայաստան, որ
Արայի հետ կռվե, յաղթէ ունրան բռնէ. թագուն էլ
հըսամայեց իր զօրքին, որ պատերազմի ժամանակն աշ-
խատեն Արային շըսպանել ու կենդանի բերեն իրա մօտ։
Բայց կռուի ժամանակն Արան բարկացած կատաղած
այնպէս վրայ վաղեց իր թշնամուն, որ Շամիրամի զին-
ւորները շըմանացելով սպանեցին Արային։ Շամիրամը
հրամայեց, որ մեռածների մէջը գտնեն Արայի մարմի-
նը։ Քերել տվեց մարմինը և վրէն լաց ելաւ ու յուսա-
հասած յետ զնաց Հայաստանիցը։ Շամիրամը Հայաս-
տանումը Վանայ ծովի մօտ մէկ բարձր տեղ բերդ ու
քաղաք շինեց մեծ մեծ պալատներով ու պարտէզնե-
րով և այնտեղ բնակվում էր ամառը։ Քաղաքի անու-
նը կոչուեցաւ Շամիրամակերտ, որ մինչև հիմի էլ կայ
և Շամիրամակերտի փոխանակ Վան քաղաք է ասվում։

Վ. Ա. Հ. Ա. Գ. Ե:

Սիդրան թագաւորի որդքերանց մէկի անուշ
նը Վահագն էր: Վահագն այնքան զարմանալի քաջու-
թիւններ էր անում, որ այն ժամանակվայ կռապաշտ
չայերը Վահագնին իր քաջութեան համար Աստուած
համարեցին ու Վրաստանումն էլ Վրացիքը նրա անու-
նով արձաններ շինեցին ու պաշտեցին: Փողովուրդը
պատմում էր, թէ Վահագն վիշտակների հետ կռվելէ,
ու յաղթելէ ու էլի շատ երեկի քաջութիւններ է առ-
քել: Հայաստանումը հին ժամանակվայ աշուղները Վա-
հագնի վրայ շատ երգեր շինեցին ու երգելով ման էին
դալիս ու երգերի մէջ ասում էին, իրու թէ Վահա-
զըն կրակի միջեցնէ ծնել, նրա մազերը կրակի պէս էին
փայլում ու աչքերն արեգակի նման:

Ա. Բ. Գ. Ա. Բ :

Աբգարը Հայոց թագաւոր էր Արշակունեանց ազ-
գից: Արա ժամանակները Հրէաստանումը մեր Փրկիչ Յի-
սուս Քրիստոսը քարոզումէր և հրաշքներ էր անում:
Աբգարը Քրիստոսի հրաշքները լսելով, նամակ ուղար-
կեց Նրուսաղէմ Քրիստոսին, որի մէջ ասում է, թէ
«Ես լսեցի, որ Դու կոյքերին աչք ես տալի, կաղերին՝
ամը, ամեն տեսակ հիւանդներին լաւացնումես ու էլի
շատ երեկի հրաշքներ ես անում», այս պատճառով ես
Քեզ Ճանաչումնմ Աստուած ու Աստուծու որդի: Խնդ-
րումնմ Քեզ, որ գաս ինձ էլ առողջացնես, որովհետե-
կս եօթը տարի է, որ հիւանդ եմ: Բացի այդ լսեցի, որ
Հրէաները քեզ ուզում են չարչարել, արի՝ ինձ մօտ,

քո մէկ պղախիկ ու գեղեցիկ քաղաք ունիմ Նդեսիայ առ
նունով, սա երկուսիս էլ բաւական է:

Քրիստոսն Եղեսիա զնալը չըկամեցաւ ու Արգարի
ուղարկած նամակին պատասխան գրեց, թէ “Ես ինքս
չեմ կարող դաշ, բայց երբ որ երկինքը համբառնամ,
իմ համբարձումից յետոյ, քեզ մօտ կուղարկեմ իմ
աշակերտներից մէկին, քեզ առողջացնելու”:
Քրիստոսն այս նամակի հետ ուղարկեց Արգարի համար կտաւի
վրայ հանված իր պատկերը, դաստառակը:

Քրիստոսի համբարձումից յետոյ, Նրա հրամանով
թաղէոս տռաքեալը, որ Քրիստոսի աշակերտներից մէկն
էր, եկաւ Արգարին քարողեց, բժշկեց ու մլրտեց թէ
թաղաւորին, թէ պաշտամականներին ու թէ միւս քա-
ղաքի բնակիչներին: Կուռքերը դէն ածին ու ամենքն
սկսեցին քրիստոնէական սուրբ հաւատը դաւանել: Թա-
ղէոս տռաքեալը թաղաւորի հրամանով ման էր դալին
Հայաստանի ամեն կողմերն ու մլրտում էր ժողովրդին
ու զօրքին:

Արգար թաղաւորը Հռովմայեցւոց կայսերը նամակ
գրեց ու խնդրում էր, որ նա Քրիստոսին չարչարող Հը-
րէաններին պատժէ: Բացի այդ նա Ասորեստանի և Պար-
թէ ազգի թաղաւորներին էլ նամակներ գրեց և Հը-
րաւիրում էր նրանցը քրիստոնէութիւնն ընդունելու,
բայց դեռ նրանց պատասխանը չըստացած վախճանեցաւ:
Այսպէս Հայոց թաղաւոր Արգարն այն ժամանակվայ
թաղաւորներից առաջինն էր, որ քրիստոնէական հա-
ւատն ընդունեց և այս պատճառով էլ կոչվում է սա
Անդրանիկ Քրիստոնեայ թաղաւոր:

ԱՐՏԱՇԵՍ ԵՐԿՐՈՐԴԻ:

Արտաշես Երկրորդի ժամանակն Ալանաց թաղաւորը կօվկասի բնակիչների հետ միասին Հայերի դէմ կռիւ բաց արաւ։ Արտաշեսը հայ զօրքով դուրս զընաց նրա դէմ ու ջարդեց նրանցը։ Թշնամին անց կացաւ քուռ գետն ու միւս ափումը վեր եկաւ։ Հայերն էլ նրանց դէմուդէմը ջրի այս կողմը։ Ալանաց թաղաւորի որդուն Հայերը գերի էին տարել, այս պատճառով Ալանացիքը շատ խնդրեցին Արտաշէսին, որ գերուն յետ տայ, բայց Արտաշէսը չէր համաձայնում։ Այն ժամանակն Ալանաց թաղաւորի աղջիկ Սաթինիկն եկաւ գետի ափն ու Արտաշէսին շատ խելօք խօսքերով համազեց, որ նա իր գերի եղբօրը բաց թողնէ։ Արտաշէսն այնքան հաւանեց Սաթինիկն, որ շուտով սիրահարվեցաւ նրա վրայ և պսակվեցաւ էլ։ Արտաշէսի Սաթինիկի հետ պսակվելու վրայ այն ժամանակվայ մեր աշուղները գեղեցիկ խաղ շինեցին ու միշտ երգում էին, թէ «Արտաշէս թաղաւորն իր գեղեցիկ ու ծիռ վրայ նստեցաւ ու արծուի պէս կտրեց գետն, անցկացաւ ու այնտեղ Ալանաց աղջկան ծիռ վբայ նստացնելով, ջրի այս կողմը դուրս բերեց ու հարսանիքի ժամանակը շատ ոսկի բաժանեց թաղաւորն ու թաղուհին էլ շատ մարգարիտ բաշխեց ժողովրդին։ Քառասուն ու մէկ տարի թաղաւորութիւն անելուց յետոյ Արտաշէսը մեռաւ ու մէծ հանդէսով թաղվեցաւ։ Նրա դաղաղը ոսկոցն էր, տեղաշորը և շորերը ոսկով էր զործած, զլսին թաղը, զէնքը ոսկով զարդարված, նըրաւ դէմուդէմն էր շարված, զագաղի չորս կողմն իր սրջիքն ու աղջականներն էին պատել ու նրանց հետ էլ

բոլոր թագաւորական նախարարներն էին իրանց զօրւ քով։ Զօրքն այնպէս էր շարված, ինչպէս պատերազմ զնալիս Հանդէսի առաջը գնում էին երաժշտները, յետոյ սև հագնված սկաւոր կանայք ու նրանց յետեւ իցը անթիւ ժողովուրդն էր դնում։ Այսպիսի փառաւոր հանդէսով թաղեցին Արտաշէսին ու նրա զերեզմանի վրայ նրա սիրեկաններից և ազգականներից շատերն իրանց ձեռով սպանեցին իրանց զլուխը։

ԱՐՏԱԿԱՐԱԿԻ ԵՐԿՐՈՐԴԻ:

Արտաշէսից յետոյ Հայոց թագաւոր նստեցաւ Նըրա որդի Արտաւազզը։ Հայոց աշուղները սրա վրայ էլ պատմումեն այս զըոյցը։ Անը որ Արտաշէսի զերեզմանի վրայ նրա սիրուցը շատերն իրանցը սպանեցին, այն ժամանակն Արտաւազզը հօրը զանդատելով տասց, թէ դու զնալուդ ժամանակը բոլոր աշխարհը հետդ տառար ու ես աւերակների վրայ ինչպէս թագաւորութիւն անեմ։ Արտաշէսը մեռած ժամանակը սրան անիծեց ու առաց, թէ երբ որ դու որսի զնաս, քեզ քաջերը (դեկերը) բռնեն ու Մասիս սարը տանեն, այնտեղ բռնված մնաս ու էլ լոյս չըտեսնեսո՞։ Այս պատմութիւնն աշուղները հիմնում էին այն բանի վրայ, որ Արտաւազզը մէկ անդամ, երբ Մասիս սարի վրայ որս էր անում, ցնորսվեցաւ ու ծին դէս ու դէն քշելով մէկ խուրը փոսի մէջ ընկաւ ու կորաւ։

Հին ժամանակվայ պառաւներն էլ պատմում էին, թէ Արտաւազզը մէկ այրի մէջ շղթայով կապած է ու երկու շուն շղթան լիզելով ու զումեն կտրել, որ Արտաւազզը դուրս գայ ու աշխարհին վերջը տայ. բայց

դարբինները իրանց դազգահի վրայ երկաթ ծեծելով
Արտաւազի շղթաները նորից պնդացնումեն:

ՏՐԴԱՏ ԹԱԴԱՒՈՐԸ ԵՒ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉԸ:

Հայոց Խոսրով թագաւորը մէկ անդամ որս էր
ղնացել: Որսի ժամանակն Անակ անունով մէկը, Պար-
սից թագաւորից գրաւված լինելով, խփեց թագաւո-
րին, սպանեց ու փախաւ: Հայերն Անակի յետելցը հա-
սան, իրան էլ սպանեցին ու նրա տուն ու տեղն էլ քար-
ուքանդ արին ու որդքերանցն էլ կոտորեցին, ողջ մը-
նաց միայն նրա փոքր որդի Գրիգորը, որին իր ծծմցը
Սովիսն կարողացաւ թագուն փախցնել Կեսարիայ: Խոս-
րովի մահից յետոյ Հայաստանի մէջ շատ խառնակու-
թիւններ էլան, այս պատճառով էլ մեր թագաւորի
որդի Տրդատին Հայ նախարարներից մէկը տարաւ Հռովմ
ու այնտեղ կայսեր դրանը մեծացնումէր: Տրդատն այս-
տեղ իր երիտասարդութեան ժամանակը շատ քաջու-
թիւններ արեց և ճշմարիտ, որ ինքը շատ ուժով տր-
ղամարդ էր: Մէկ անդամ Գոթաց թագաւորը մեծ զօր-
քով Հռովմի վրայ կոխւ եկաւ ու Հռովմայեցւոց կայ-
սերն ասպազրեց, թէ մեր զօրքերի միմեանց հետ կովե-
լու փոխանակ, արի՝ մենք երկուսս կովենք և ովոր յաղ-
թէ, նա լինի տիրող: Կայօրն ինքը չէր կարող կովել
Գոթաց թագաւորի հետ և իրա տեղ իր մեծամեծ-
ների խորհրդովը Տրդատին հրամայեց կովիլ: Տրդատը
կայսեր շորեր հագած ձին քշեց ու գնացչսկնց կովիլ
Գոթաց թագաւորի հետ, յաղթեց նքան, կապեց ու
կայսեր առաջը բերեց: Այս քաջութեան համար կայս-
ուը Տրդատին թագաւորական զգեստ հազցրուց, թագ

գրեց դլիսին ու շատ զօրքով Հայաստան ուղարկեց, որ
իր երկրի թագաւորութիւնն անէ:

Անակի որդի Գրիգորն երբ որ մեծացաւ, իմացաւ,
որ իր հայրը Հայոց թագաւորի սպանողն է էլել, ու
զեց իր հօր յանցանքն իրանից վեր առնել, այս պատ-
ճառով գնաց Հռովմ ու Տրդատին ծառայումէր: Տըր-
գատը Հայաստան գալիս Գրիգորին էլ հետը բերեց ու
երբ որ եկան Նրիզայ անունով գիւղը, այսաեղ Տըրդա-
տը կուռքերին երկրպագութիւն տվեց ու Գրիգորին էլ
հրամայեց մի և նոյնը կատարել. բայց Գրիգորը Քրիս-
տոնեայ էր ու այս պատճառով չըհամաձայնեցաւ թա-
գաւորի հրամանը կատարելու: Տրդատն առաջ խրատ-
ներով ու քաղցրութենով, յետոյ վախացնելով ու սպառ-
նալիքներով աշխատեց Գրիգորին թողնել տալ իր քը-
րիստոնէութիւնը, բայց բոլորն իզուր անցկացաւ: Այն
ժամանակ թագաւորը անտանելի տանջանքներ տվեց
Գրիգորին, բայց սուրբ Գրիգորն աղօթք անելով, Աս-
տուծու վրայ յոյս գնելով, դիմացաւ այդ չարչարանք-
ներին ու ամենեին չըկամեցաւ կուռքերին երկրպա-
գութիւն տալ:

Այս ժամանակ թագաւորն իմացաւ, որ Սուրբ
Գրիգորն իր հօր սպանողի որդին է, այդ պատճառով
աւելի բարկացած հրամայեց, որ Սուրբ Գրիգորին տա-
նեն զցեն Խոր վիրապի, փոսի մէջ, որ մահապարտնե-
րի համար էր շինած ու մէջն օձերով ու կարիճներով
լիքն էր: Ամենքը կարծումէին 'ի հարկէ, որ այս վի-
րապումը նա կըմեռնի, բայց Սուրբ Գրիգորն այս տեղ
մօտ տասն ու հինգ տարի մնաց կենդանի: Մէկ քրիս-
տոնեայ կնիկ Աստուծու հրամանով ամեն օր թագուն

հացեր բերում, վիրապումը յած զցում ու նրան կերակրում էր:

Սուրբ Գրիգորի վիրապը զցելուց տասն ու հինգ տարի էր անց կացել, որ Տրդատը Հոխիսիմեանք անունով սուրբ կոյսերին քրիստոնէութեան համար նահատակել տվեց ու մէկ քանի օրից յետոյ ինքը որս զընալու ժամանակը ցնորվեցաւ ու սաստիկ հիւանդացաւ: Տրդատի հետ էլ շատ իշխաններ ցնորվեցան: Յագաւորի քոյրը դիշերը մէկ քանի անդամ երազումը տեսաւ, որ հրեշտակն իրան ասում էր, թէ միմիայն Գրիգորը կարող է բժշկել ձեզ, հանեցէք նրան վիրապից: Աչ ովչէր հաւատառմ, որ Սուրբ Գրիգորն այնքան տարի օւձերի մէջ կենդանի մնացած լինի, բայց երբ որ գնացին ու ձայն տվին, տեսան որ կենդանի է: Խակոյն հանեցին Սուրբ Գրիգորին վիրապից, լաւ շորեր հազցըին ու մեծ պատւով Վաղարշապատ քաղաքը բերին: Երբ որ քաղաքին մօտկացան, թագաւորն ու բոլոր հիւանդ իշխաններն առաջ եկան ու Սուրբ Գրիգորն Աստուծուց խնդրելով նրանց յաւերը հանդարտացրուց: Յետոյ լսելով սուրբ կոյսերի նահատակելը, գնաց ժողովեց նրանց մարմինները, բերեց, թալեց ու նրանց գերեզմանների վըրայ երեք հատ եկեղեցի շինեց: Այս շինութիւնների մէջ ինքը Տրդատ թագաւորն էլ օգնում էր: Պատմումեն, որ թագաւորը եօթն օրվայ Ճանապարհ գնաց ու Մասիսի սարիցն ու թը հատ մեծ մեծ քարեր ուսին զըրած բերեց այն եկեղեցերու շինութեան համար: Սուրբ Գրիգորը թագաւորի և նախարարների գարձ գալը տեսնելով աղօթք արեց ու բշժկեց ամենքին, մկրտեց նրանցն ու սկսեց կոքատունները կործանելով, ամեն տեղ էլ քրիստոնէութիւնը տարածել:

Տրդատն իր վերջի տարիքը ճգնաւորի կեանք վառ
ընց ու սուրբերի կարգումը դասվեցաւ ու Սուրբ Գր
րիգորն էլ Հայոց ազգը Քրիստոնէութեան լուսովը պայ-
ծառացնելու համար Լուսաւորիչ կոչուեցաւ:

ՀԱՅՈՅ ՏԱՌԵՐԻ ԳՏՆԵԼԸ:

Վամշապուհ անունով Հայոց թագաւորի ժառ
մանակը Հայոց կաթողիկոսը Սահակն էր: Սահակը սուրբ
մարդ էր և շատ աշխատում էր Հայաստանը պայծառա-
ցնելու համար: Այդ ժամանակները դեռ Հայոց տառեր
չը կար, Հայերն Ասորոց ու Յունաց տառերով էին գրում
մեր թագաւորական դիւնանատներումք: Սահակ կաթո-
ղիկոսն ուզեց որ այս բանին մէկ Ճար անէ, այդ պատ-
ճառով բոլոր եպիսկոպոսներին ժողովեց ու Սուրբ Մես-
րոպ վարդապետի հետ միասին խորհուրդ արին այս
մասին ու վճռեցին, որ Մեսրոպը գնայ Սիծագետք եր-
կիրը Դանիիէլ անունով եպիսկոպոսի մօտ, որովհետեւ
առումէին, թէ սա հին Հայոց տառերի ձևն ունէր:
Բայց Մեսրոպը Դանիիլի մօտ հասած ժամանակը տե-
սաւ, որ այն տառերը բոլորովին յարմար չեն մեր լե-
զուի համար, այդ բանիցն էլ յայտը կտրեց: Սուրբ Մես-
րոպն Աստուծու օգնութեանը դիմեց ու ազօթքի ժա-
մանակը տեսիլը տեսաւ, որի մէջ մէկ աներեւոյթ ձեռը
Հայոց տառերի ձևերը ցոյց տվեց Մեսրոպին: Զարթե-
ցաւ թէ չէ, իսկոյն այն տառերը թղթի վրայ գրեց: Աը-
ռամշապուհ, մեր հայոց թագաւորի, հրամանով Մես-
րոպը Հայաստանումն ամեն տեղ ուսու մնարաններ բաց
արաւ ու Հայոց տառերով կարդալ սովորցրեց ու վեր-
ջը շատ հայ երեխաներին ուղարկեց Հռովմ ու Աթէնք,

այն ժամանակվայ երևելի քողաքները, բարձր դիտու-
թիւններ սովորելու ու ճշմարիտ, որ այդ ուղարկած
Հայերը վերջը Հայաստանի համար պարծանը գառան
իրանց շնորհալի աշխատութիւններովը։ Սուրբ Մեսրո-
պը վերջը Վրաց ու Աղուանից համար էլ տառեր գտաւ։

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԻ:

Մեր Արշակունեաց թագաւորութեան վերջանա-
լուց յետոյ Հայաստանը Պարսից ձեռն ընկաւ։ Պարսից
Յազկերաւ թագաւորը կամենումէր բոլոր իր հպատակ
ողգերին կռապաշտ շինել։ Այս մոքով Հայոց զլիա-
ռոր իշխաններին ու նախարարներին կանչեց իրա մօտ
ու հրամացեց, որ քրիստոնէութիւնն ու բանան։ Հայոց
իշխաններն ՚ի հարկէ այդ բանին ընդդիմացան և այս
պատճառով էլ նրանցից մէկ քանիխը նահատակվեցան,
միւնները մութը բերդի մէջ վերջացրին իրանց կեանքը։
Հայ իշխանները տեսնելով եկեղեցին ու ազգը մեծ վը-
տանգի մէջ, երեսանց համաձայնեցան կատարել Յազ-
կերտի հրամանը։ Բայց Հայ իշխաններից մէկը, Վասակ
Սիւնեաց իշխանը, որ իր որդիքը զբաւ էր զբել Պար-
սից թագաւորի մօտ, սրտանց ու բացաւ Հայոց հաւա-
տը և Պարսիկներին էլ խոստացաւ, որ զոռով Հայերին
կռապաշտ կըշինէ։ Երբ Հայ իշխանները սրտով յետ
էին դալիս Հայաստան, նրանց հետն էլ եկան մեր երկիրը
շատ քուրմեր ու զօրք, որ Հայերի հաւատը փոխեն,
բայց իշխանները Հայաստան մասն թէ չէ, միայն Հա-
յերի հետ ու Պարսից քուրմերին ու զօրքին ջարդե-
ցին։ Բայց միայն սրանով չը վերջացաւ բանը։ Վասակ
Սիւնին, Պարսից զօրքի հրամանատարը, յետ եկաւ ու

Հայաստանը սկսեց քարուքանդ անել։ Աեր ազգին ու հաւատին հաւատարիմ իշխանները մօտ էլան իրանց զօրքովը և ուղեցան կամ մեռնիլ հաւատի ու ազգութեան համար և կամ աղատել Հայաստանը Վասակի չարութիւններից ու Պարսից բարբարոսութենից։ Քաջ Վարդան Մամիկոնեան իշխանը, Հայոց զօրքի հրամանատար դառաւ ու 66,000 զօրք ժողովելով բերեց Աւարայրի դաշտը Տղմուտ գետի ափերը։ Վեռնդ երեցն առաջի իրիկունը շատ սրտաշարժ ու հոգեորող ճառ ասաց զօրքին ու միւս օրը հանդիսաւոր պատարագից յետոյ ամենքը հողորդվեցան ու պատրաստվեցան պատերազմի համար։ Հոգեգալստի օրը ջարդը սկսվեց։ Պարսից զօրքը չորս անգամ մեր զօրքից աւելի շատ էր ու բացի որանից նրանք հետները շատ փղեր ունեին, որոնք մարդքերանից աւելի սաստիկ էին պատերազմում։ Բայց մեր փոքրիկ զօրքը շատ մեծ քաջութենով դէմ գնաց թշնամուն։ Այն օրն տնտպատճառ Հայերը կը յաղթէին Պարսից։ Բայց կռուի թունդ ժամանակը Վարդան Մամիկոնեանը Վասակի անհաւատարմութեան վրայ բարկացած այնպիսի քաջութենով առաջ վազեց ու սկսեց ջարդել Պարսից, որ մինչև անգամ ինքն էլ Հայոց հաւատի ու ազգութեան համար սպանվեցաւ։ Զօրքն իմանալով Վարդանի մահը, թէպէտ շարունակեց պատերազմը, բայց մէկ օրինաւոր հրամանատար չունենալով, չըկարողացաւ օգուտ քաղել այս կռուից ու այն օրվայ պատերազմը անորոշ մնաց, ոչ Հայերն էլան յաղթող, ոչ էլ Պարսիկները։ Մթնեց թէ չէ, մնացած Հայոց զօրքը դէս ու դէն քաշվեցաւ ու իրանց բերդերումը ժողովեցան։ Այն օրը Հայերից 1036 հոդի մեռան, ու

քոնք Հայոց ազգի համար պարծանք դառան: Վարդան
Մամիկոնեանի հետ միասին նահատակվեցան այն օրը
շատ ուրիշ քաջ իշխաններ մեր Հայոց ազգից, ինչպէս
Խորեն Խարխուռունին, Արտակ Պալունին, Տաճատ Գըն-
ժունին, Հմայեակ Գիմաքսեանը, Ներսէհ Քաջբերունին,
Վահան Գնունին, Արսէն Ընծայեցին, Գարեգին Արու-
անձտեանը և շատ ուրիշները: Հայոց ազգը դրանց իրա-
համար պարծանք է համարում և մեր եկեղեցին էլ
միշտ տօնում է այդ պատերազմումը մեռնողներին, ինչ-
պէս սուրբ և հաւատի համար ելած նահատակներին
ու սրանցը բոլորին էլ Վարդան Մամիկոնեանցի անու-
նով; Վարդանանց քաջ նահատակների պատուաւոր տնունն է տալիս:

Իսկ Վասակ Սիւնեցի Խարդախ և ուրացող իշ-
խանն իր արդար հատուցումը ստացաւ ելի այս Պար-
սիկներից, որոնց համար ուրացաւ իր ազգը և սուրբ
հաւատը: Դա Պարսից թագաւորից պատժվեց ու բեր-
դումը փախլով անարդ մահով մեռաւ ու Հայոց ազ-
գի նզովքի տակն ընկաւ: Այսպէս է միշտ ուրացողների
վիճակը:

Պարսիկներն երկար ժամանակ ելի Հայոց նեղու-
թիւններ էին տալի ու Հայոց մնացած երեելի մարդ-
կանցը և գլխաւորապէս քաջ հոգեորականներին գե-
րի տարան ու նրանցն էլ Պարսկաստանումը նահատա-
կեցին: Այդ նահատակների մէջ երեելի էր սուրբ Ղե-
ւոնդ երեցը, որի անունով դրանք էլ զեռնդեան
նահատակների մէջ մեր անուաննեցան ու մեր ազգը, դրանց
նրախորիքն էլ Ճանաչելով, Վարդանանց պէս տօնումէ:

ԱՇԽԱԴՐՄԱՆ:

Բազրատունեաց ազգից Աշոտ Երբորդ անունով
թագաւորը բալոր թշնամիներին Հայաստանից դուրս ա-
րաւ և աշխատումէր մեր երկիրը խաղաղութեան մէջը
պահել. օտար ազգերն այնպէս վախենումէին սրանից,
որ զանազան պարզեներ ուղարկելով ցոյց տվին նրան
իրանց սէօրք: Մեր նախարարներն էլ, Աշոտին սիրելով,
ուղեցան թագաւոր օծել տալ. այդ հանդէսի համար
էլ հրաւիրեցին Աղուանից Փիլիպպոս թագաւորին ու
նրանց կաթուղիկոսին: Անի մայրաքաղաքի մէջը ժողով-
վեցան 40 Հայ եպիսկոպոսներ, բոլոր իշխաններն ու Աշ-
շոտին մեծ փառաւոր հանդէսով թագաւոր օծեցին:
Աշոտն ամեն կերպ աշխատումէր, որ ժողովուրդը խեղ-
ճութենից դուրս գայ ու թշնամիներից ապահովացնե-
լու համար շատ բերդեր շինեց: Անի մայրաքաղաքն էլ
պարսպով պատեց ու մէջը նոր բերդ շինեց: Այս ժա-
մանակները մեր Անի մայրաքաղաքը շատ ծաղկեցաւ ու
մեծացաւ, այնպէս որ ասումն մէջը մէկ միլիոն բնա-
կիչ է էլել և հազար ու մէկ եկեղեցի: Աշոտ թագա-
ւորն իր գանձն աղքատներին բաժանեց և այն աստի-
ճանի ողորմած էր, որ առանց աղքատների հաց չէր ու-
տում: Ամեն օր քաղաքի մէջ էլած կոյրերին ու կա-
ղերին հաց էր տալիս ու ամենի կարիքը հոգումէր: Շատ
քաղաքներումն աղքատանոյներ շինել տվեց և այդ Աս-
տուածահաճոյ շինութիւնների համար ռոճիկ կտրեց
ու ինքը միշտ այցելութիւն էր գնում և երբեմն էլ մին-
չե անդամ ինքն էր աղքատներին ծառայում: Այսպի-
սի աղնիւ դործերի համար մեր ազգն էլ դրան արժա-
նաւոր պատուանուն տվեց, Ողորմած անուաննելով:

ԱԵԽՈՆ ԵՐԿՐՈՐԴ ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹՍԳԱՒՈՐԸ:

Երբ որ անթիւ թշնամիների ձեռովլ Հայաստանը
քարուքանդ էր լինում ու մէկ կողմից մեր Բագրատու-
նեաց թագաւորութեան ցեղը վերջացաւ, միւս կողմից
Հայերն անաէր մնալով սկսեցին դէս ու դէն ցրվել ու օ-
տար երկիրները գնալ, որ գոնէ իրանց կեանքը ազա-
տեն, Հայերի մէկ մեծ մասն էլ գնաց Տաւրոսի լեռնե-
րի կողմը Կիլիկիայ ասած երկրումը բնակվեցաւ և այն-
աեղ Հայերը նոր թագաւորութիւն կազմեցին ու Ռու-
բէն առաջին թագաւորի անունով Ռուբէնեանց թա-
գաւորութիւն ասվեցաւ: Ռուբէնեանց ցեղիցն էլած թա-
գաւորներից երեւելի է մանաւանդ Լեռն Բ. անունով
թագաւորը: Արա առաջին գործն էլաւ իր երկրից թըշ-
նամիների գուրս անեն ու շատ օտար երկիրներին էլ
տիրելով, հարեւան երկիրների վրայ այնպիսի ահ ու
դող զցեց, որ ամենքն սկսեցին վախենալ ու պատվել
նրան: Այս ժամանակ Եւրոպայի քրիստոնեայ թագա-
ւորները մեծ զօրքով դալիս էին Երուսաղէմ Քրիստոսի
սուրբ գերեզմանը Թուրքերի ձեռիցն ազատելու, մեր
Լեռն թագաւորն էլ զրանցն ամեն կերպ օգնութիւն էր
Հասցնում թէ զօրքով և թէ նրանց զօրքի համար
ամեն հարկաւոր բաներն ու դարկելով: Արա երախտիքը
չըմուանալու համար Հռովմի: պատն իր եպիսկոպոսի ձե-
ռով թագաւորական թագ ուղարկեց մեր Լեռնի հա-
մար: Բոլոր Հայ եպիսկոպոսները, Եղիսանները ու զօրքը
մօտ էլան Ախա անունով մայրաքաղաքումը և այստեղ
մեծ եկեղեցու մէջ Հայոց կաթողիկոսը մեծ հանգէսով
Լեռնին թագաւոր օծեց: Լեռնն արժանի էր այն պա-
տուին: Նա ինչպէս որ քաջ զօրավար էր ու անթիւ

պատերազմներումը միշտ յաղթումէր թշնամիներին, նմանապէս խչպէս մարդ՝ շատ բարեպաշտ ու ողորմած թագաւոր էր: Մէկ կողմից իր երկրումը բերգեր էր շինում, միւս կողմից խեղջերի ու թշուառների համար աղքատանոցներ: Ամենի հետ քաղցրութենով էր փարվում և արդար ու ողորմած դատաստան անում: Մեր Հայ յերը դրան շատ սիրումէին, բայց ափսոս, որ միշտ այդպէս խելօք ու մանաւանդ յաջողակ թագաւորներ քիչ են լինում աշխարհի վրայ: Կևոնը մեռնելիս տղայ ժառանգ չունենալով իր թագաւորութիւնը յանձնեց իր տամնուվեց տարեկան ջապէլ (իղաքելայ) աղջկանը: Բայց Հայերը նոր մէկանց թշնամիների խաղալիք դառան ու մէկ քանի ժամանակ շարունակվելուց յետոյ մեր Ռուրէնեան թագաւորութիւնն էլ վերջացաւ ու Հայերն անտէր ու տիրական ցրվեցան աշխարհի ամեն կողմերը:

ՀԱՅՈՑ ԱՅԺՄԵԱՆ ՎԻՃԱԿԸ:

Մեր թագաւորութիւնները վերջանալուց յետոյ շատ ցաւալի դրութեան մէջն էր Հայաստանը: Այն վայրենի աղգերը, որ Ասիայի խորը տեղերիցն եկան ու տակըն ու վերեւ արին Եւրոպան, բոլորն էլ համարեա թէ Հայաստանի վրայ անց կացան, որովհետեւ մեր երկիրը Ասիայից Եւրոպայ անցկենալու դուռն է: Ով եկաւ քանչեց ու աւերակ դարձրուց մեր մեծ մեծ քաղաքները, ով եկաւ արիւնով ներկեց մեր դաշտերը ու հազարաւոր գերիներով տարաւ, ոչնչացրուց ու մէկ ժամանակաւ վայ տասը, քսան միլիոնաւոր ժողովուրդը քիչ մնաց, որ բոլորովին անհետանայ աշխարհի երեսից: Պէտք է զարմանալ, որ դոնեա մենք հիմի մնացել ենք կենդանի:

Հայերի տեղն ուրիշ ազգ լինէր այնքան նեղութիւնները կը ելուց յետոյ հիմի վաղուց կորած կը լինէր։ Բայց Հայերը կենդանի են, որովհետեւ չընայելով իրանց դառը վեճակին ու հաւատի համար կրած նեղութիւններին էլի հաստատ մնացին իրանց սուրբ հաւատին ու լեզուին։ Հայերը ստիպված էին իրանց կեանքը դանեա ազատելու համար տունը տեղը թողնել ու գնալ ուրիշ երկիրներ, որ տեղ իրանց հաւատի հալածողներից ազատ մնային։ Այսպէս Հայերը հիմի տարածված են աշխարհի ամեն կողմերը, բայց զի՞մաւորապէս երեք մեծ տէրութիւնների ձեռի տակն են։

Հայերի այժմեան թիւը հասնումէ մօտ $4\frac{1}{2}$ միլիոնի, որոնցից մօտ $2\frac{1}{2}$ միլիոնը գտնվում է հիմի Օսմանցւոց թագաւորութեան ձեռի տակը։ Այս վերջին տարիներումը Սուլթանը սիրեց Հայերին ու դրանցը շատ իրաւունքներ տվեց։ Ազգային գործերը և նմանապէս զատաստանն իրանց ձեռով անելու իրաւունքն այն տեղի Հայերին յահճնեց։ Յոյս կայ, որ հիմի Օսմանցի Հայերն աշխատեն իրանց մէջ լուսաւորութիւն տարածելու երբ որ լուսաւորութիւն և զիտութիւն ստանան։ Ի հարկէ իրանք էլ խեղճ ու աղքատ չեն լինիլ, այլ փոքր ինչ հեշտութենով կրծարեն իրանց օրական հացը։

Հայերի միւս մեծ մասը, որ մօտ $1\frac{1}{2}$ միլիոնի է, հասնում, Ռուսաց մեծ կայսերութեան ձեռի տակն է։ Մեր Ռուսաց թագաւորն իրա բոլոր հպատակների հետ հաւասար սիրումէ մեզ ու այն ամեն իրաւունքները տված ունէ, ինչոր վայելումէ իր աղգը։ Այս բոպէիս հազարաւոր Հայեր տէրութեան ծառայութեան մէջն են ու շատերն իրանց խելքովն ու քաջութենով բաւական ա-

ռաջ են զնացած։ Յօտիկ ժամանակներս Ռուսաց թագաւոր Աղէքսանդր երկրորդը, որն որ աշխարհօւմը յայտնի է իրեւ ամենաբարի ու ողորմած թագաւոր, ազատեց իր տէրութեան մէջն էլած բոլոր ճորտերին։ Յաւդաւորի այս ողորմած հրամանովը Վրաստանի մէջ էլած Հայ ճորտերն էլ, որ թէպէտ քիչ են թւով, ազատութիւն ստացան ու այն պատճառով էլ միշտ պէտք է շնորհակալ լինինք այժմեան մեր թագաւորից ու Խընդրենք Աստուծուց, որ նրան երկար կեանք տայ ու կարողութիւն աւելի լաւ ու օդատաէտ զործեր անելու, որ իր ազգի հետ մենք էլ լուսաւորած ազգերի հետ խառնվենք ու այնպիսի կեանք վայելինք, ինչպէս որ կը վայելէ օրինաւոր մարդուն։

Հայերի վրայ երեք մասն էլ, որ մէկ քանի հարիւր հազար հոգի կը լինի, Պարսից թագաւորութեան ձեռի տակն է։ Բայց հիմի որովհետեւ տէրութիւնն էլ դէռ չէ լուսաւորված ու իր ազգն էլ խեղճ ազդ է, այդ պատճառով այնուեղի Հայերն էլ յետ են մնացած Ռուսաստանի ու Օսմանցւոց Հայերից։

Բայց ՚ի այդ երեք սերութիւններից, Երոպայի, Ասիայի, Ափրիկայի և մինչեւ անգամ Ամերիկայի զանազան մեծ քաղաքներու մը կան բաւական Հայեր, որոնք վաճառականութիւնով են պարապում։ Բայց որ աեղ կուզէ լինին Հայերը, դրանք միշտ իրանց հաւատին ու լիզուին հաստատ ֆնալով չեն կորչիլ աշխարհի երեսից։

Մեր ազգն իր իշխանութիւնը կորցնելուց յետոյ, էջմիածնումը նոտող Կաթողիկոսին շանաշումէ իւրեւ հագեսոր գլուխ ու տէր Հայոց ազգի։

ԵՐԳԵՐ:

1.

Օիծեռնակ, ծիծեռնակ,
Դու գարնան սիրուն թըրունակ.
Դէպի ուր ինձ ասա,
Թըրունես այդպէս արազ:
Ա՛խ, թըրոիր, ծիծեռնակ,
Ծընած տեղըս Աշտարակ,
Անդ շինիր քո բունը,
Հայրենի կտուրի տակ:
Դու պատմէ՛ թէ ինչպէս,
Աստ անտէր ու խեղճ եմ ես,
Միշտ լալով, ողբալով,
Կեանըս մաշուել, եղել կէս:
Ինձ համար ցերեկը,
Մութէ շըջում արեզը,
Գիշերը թաց աչքիս,
Գունը մօտ չի գալիս:
Անդ հեռու ալեռը,
Հայր ունիմ սըդաւոր,
Որ միակ իւր որդուն,
Սպասում է օր է օր:
Երը տեսնես դու նորա՝
Ինձնից շատ բարե արա՛,
Ասա՛ թող նըստի լայ,
Իւր անբաղդ որդու վըայ:

Ասիր որ չել բացուած,
Թառամեցայ միացած,
Ես ծաղիկ զեղեցիկ՝
Հայրենի հողից գըկած:
Դեհ սիրուն ծիծեռնակ,
Հեռացիր, թոփր արագ
Դէպ ՚ի Հայոց երկիրը,
Ծնած տեղս — Աշտարակ:

2.

Հեռացել եմ իմ մայրենի աշխարհից,
Սերս բարեկամք անջատած են ինձանից.
Թառամում եմ ես այս օտար երկրումը,
Մենակ բըսած ծաղկի նըման դաշտումը:
Կամաց կամաց տարիները անցնում են,
Մեղ նորոգած դարուն, ամառ դարձնում են.
Միայն իմ խեղճ կեանքը չ'ունի ոչինչ նոր,
Ինձ երեկը կըրկնըւումէ միշտ այսօր:

Ասպարիզիս նեղէ ձամբան ու փշոտ,
Խեղճութիւնս համարում են ինձ ամօթ,
Իմ վիճակին կարեկցութիւն մարդ չ'ունի,
Ադա, ասում են, իր կեանքումը դարդ չ'ունի: —
— Ես դարդ ունիմ, դարդը մեծէ ու պէս պէս,
Բայց չեն տեսնում ձեր աչքերը կարծատես, —
Երբ ես մտայ անհիւրնկալ այս աշխարհ,
Քանի բոպէ բաղդը ժըպտաց ինձ պայծառ:
Հա, ասացի դարձելէ իմ անիւր,

Արացելէ իմ վաս բաղդի չար թիւը:
Յանկարձ՝ փչեց անտուժելի . . .
Թառամեցուց վարդ, մանուշակ մայխին,
Այսպէս չորցուց իմ նազելի հասակը,
Իմ անողորմ, անադորոյն վիճակը:

Ան, մօտեցիր օրհասական օր մահուան,
Բեր քու հետը սև հող ու նեղ դերեզման,
Թող սառ լինի իմ նոր տանը յատակը,
Ծանրը քարէ վրէս ծածկած վերմակը:

Բայց ախ, երբ որ կ'անցնի ամիս ու տարի,
Կըմամռոտի գերեզմանը այն քարի,
Հետքը անդամ չի մնալու իմ խաչին,
Իմ անունը, իմ յիշատակ — կրկորչին,

Բայց կ'ուզէի թողնել այստեղ մի արձան,
Որ դարէ դար մընար ամուր, անկործան,
Ես երգեցի երգ ոլորուն ու անոյշ,
Իմ քընարի ձայնն էր մեղմիկ ու քնքոյշ,
Մի՞ թէ այնքան անդութ կ'լինի Լետա դետ,
Որ անունըս անդամ կ'անէ նա անհետ:

3

Վայրենի՛ լեզու, մայրենի բարբառ,
Ախորժ, ընտանի իմ հողու համար՝
Առաջին դու խօսք, ականջիս հասած.

Դու սիրոյ քաղցրիկ առաջին յօղուած.
Վանկական լեզուիս թոթովանք տըկար,
Հընչումէս իմ մէջ դու միշտ անդադար:

Գրեղեցիկ լեզու, հրաշալի լեզու,

Այդ ինչպէս քաղցըրը հընչումես ինձ դու-
կամիմ աւելի քաջ ծանօթանալ

Քո ձոխ գանձերին, հոգւով հայանալ.

Աւես թէ ահա գանչում էին ինձ,

Պատեր ու հայրեր խոր գերեղմանից:

Հընչիր դու հընչիր այժմ և յաւիտեան,

Մայրենի լեզու, բարբառ սիրական.

Արի՛, բարձրացիր հնութեան փոշուց,

Դու իմ Հայ լեզու, մոռացած վազուց.

Ըզգեցիր նոր կեանք սուրբ գրուածներով,

Որ ամենայն սիրտ վառվի քո սիրով:

Ամեն տեղ վշումէ Ասառւծոյ շռւնչը,

Սուրբ է այս' միւս, այլ ձե ու ոճը,

Բայց թէ աղօթել, գոհանալ պէտք էր,

Իմ սըրտի սէրը յայտնել արժան էր,

Իմ երանական մոտածութիւնքը —

Ապա կրիսոսեմ իմ մօրըս խօսքը:



ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻՑ:

Դ Ի Ր Ք Ծ Ն Դ Ո Յ :

Գ.Լուիս Ա. 1—29:

՚ Իսկզբանէ արար Աստուած զերկին և զերկիր: Եւ
երկիր էր աներեւոյթ և անպատճաստ, և խաւար ՚ի վե-
րայ անդնդոց և Հոգի Աստուածոյ ըրջէր ՚ի վերայ ջրոց:
Եւ ասաց Աստուած «եղիցի՛ լոյս, և եղև լոյս: Եւ ե-
տես Աստուած զլոյմն զի բարի է և մեկնեաց Աստուած
՚ի մէջ լուսոյն և ՚ի մէջ խաւարին: Եւ կոչեաց Աստ-
ուած զլոյմն տիւ, և զխաւարն կոչեաց գիշեր, և եղև
երեկոյ և եղև վաղորդեայն՝ օր մի: Եւ ասաց Աստուած
եղիցի՛ հաստատութիւն ՚ի մէջ ջրոցդ, և եղիցի մեկ-
նիլ ՚ի մէջ ջուրցդ և ջուրց, և եղև այնպէս: Եւ արար
Աստուած զհաստատութիւնն, և անջրապետեաց Աստ-
ուած ՚ի մէջ ջրոյն, որ էր ՚ի ներքոյ հաստատութանն,
և ՚ի մէջ ջրոյն, որ ՚ի վերոյ հաստատութեանն: Եւ
կոչեաց Աստուած զհաստատութիւն երկին, և ետես
Աստուած զի բարի է, և եղև երեկոյ և եղև վաղոր-
դեայն, օր երկրորդ: Եւ ասաց Աստուած. ժողովեացին
ջուրցդ որք ՚ի ներքոյ երկնից ՚ի ժողով մի. և երեեսցի
ցամաքն, և եղև այնպէս, և ժողովեցան ջուրքն, որք ՚ի
ներքոյ երկնից ՚ի ժողովս իւրեանց, և երևեցաւ ցամա-
քըն: Եւ կոչեաց Աստուած զցամաքն երկիր և զժողո-
վըն ջուրցն կոչեաց ծովս և ետես Աստուած զի բարի է:

Եւ ասաց Աստուած բղիսեսցէ երկիր զբանջար խոտոյ,
սերմանել սերմն ըստ ազգի և ըստ նմանութեան. Տառ
պտղաբեր՝ առնել պտուղ ըստ ազգի իւրում. որոյ սեր-
մըն իւր ՚ինմին ըստ ազգի ՚ինմանութիւն ՚ի վերայ երկ-
րին և եղե այնպէս: Եւ եհան երկիր զբանջար խոտոյ,
սերմանել սերմն ըստ ազգի և ըստ նմանութեան, որ է
՚ի վերայ ամենայն երկրի. և փայտ պտղաբեր՝ առնել
պտուղ, որոյ սերմն իւր ՚ինմին ազգի ՚ի վերայ երկրի,
և ետես զի բարիէ: Եւ եղե երեկոյ. և եղե վաղորդեայն
օր երրորդ: Եւ ասաց Աստուած եղիցին լուսաւորք ՚ի
Հաստատութեան երկնից ՚ի լուսաւորութիւն ՚ի վերայ
երկրի. և մեկնել ՚ի մէջ տունջեան և ՚ի մէջ զիշերոյ,
և եղիցին ՚ինշանս, և ՚ի ժամանակս, և յաւուրս,
և ՚ի տարիս: Եւ եղիցին ՚ի լուսաւորութիւն ՚ի հաս-
տատաւութեան երկնից ծագել յերկիր և եղե այն-
պէս: Եւ արար Աստուած զերկուս լուսաւորսն զմեծա-
մեծս, զլուսաւորն մեծ յիշանութիւն տունջեան, լու-
սաւորն փոքր՝ յիշխանութիւն զիշերոյ և զաստեզս: Եւ
եդ զնոսա Աստուած ՚ի հաստատութեան երկնից, լու-
սատու լինիլ յերկիր: Եւ իշխել տունջեան և զիշերոյ,
և մեկնիլ ՚ի մէջ լուսոյն և ՚ի մէջ խաւարին, և ետես
Աստուած զի բարի է: Եւ եղե երեկոյ և եղե վաղորդ-
եայն, օր չորրորդ: Եւ ասաց Աստուած, հանցեն ջուրք
զեռունց շնչոց կենդանեաց, և թռչունս թեւաւորս ՚ի
վերայ երկրի ըստ Հաստատութեան երկնից և եղե այն-
պէս: Եւ արար Աստուած կէտս մեծամեծս, և զամե-
նայն շունչ զեռնոց կենդանեաց, զոր հանեն ջուրք ըստ
ազգի իւրեանց և զամենայն թռչունս թեւաւորս ըստ
ազգի, և ետես Աստուած զի բարի են: Եւ օրհնեաց զնու-

սաւ Աստուած, և ասէ աճեցէք, և բազմացարուք, լցէք
ոջուրսդ որք ՚ի ծովս, և թռչունքդ բազմացին ՚ի վե-
րայ երկրի: Եւ եղեւ երեկոյ, և եղեւ վաղօրդեայն օր հինգ-
երորդ: Եւ ասաց Աստուած, Հանցէ երկիր շունչ կեն-
դանի ըստ ազգի չորքոտանի, և սովունս, և դադանս
երկրի ըստ ազգի, և եղեւ այնպէս: Եւ արար Աստուած
զգազանս երկրի ըստ ազգի, և զանասունս ըստ ազգի,
և զամենայն սովունս ըստ ազգի իրեանց և ետես Աս-
տուած զի բարի են: Եւ ասաց Աստուած, արացուք
մարդ ըստ սպատկերի մերում՝ և ըստ նմանութեան, և
իշխեսցէ ձկանց ծովու և թռչուց երկնից և անտանոց,
և ամենայ երկրի, և ամենայն սովոնց, որք սովին ՚ի վե-
րայ երկրի: Եւ արար Աստուած զմարդն ՚ի պատկեր իւր
ըստ սպատկերի Աստուծոյ արա զնա, արաւ և էգ արար
զնոսա: Եւ օրհնեաց զնոսա Աստուած՝ և ասէ, աճեցէք
և բազմացարուք՝ և լցէք զերկիր, և տիրեցէք դմա, և
իշխեցէք ձկանց ծովու, և թռչուց երկնից և ամենայն
անտանոց, և ամենայն երկրի և ամենայն սովոնց, որք
սովին ՚ի վերայ երկրի:

Գ Ի Ր Ք Ն Ե Ն Գ Ո Յ :

Գլ. թ. 1—4, 7—10 և 15—25.

Եւ կատարեցան երկինք և երկիր և ամենայն զարդ
նոցա: Եւ կատարեաց Աստուած յաւուրն վեցերորդի
զգործս իւր՝ զօր արար: Եւ օրհնեաց Աստուած զօրն
հօթներորդ, և սրբեաց զնա, զի ՚ինման հանգեաւ յա-
մենայն գործոց իւրոց՝ զոր սկսաւ առնել Աստուած: Եւ
ստեղծ Տէր Աստուած զմարդն հող յերկէ, և փշեաց

յերեսս նորա շունչ կենդանի, և եղև մարդն հոգի կեն-
դանի: Եւ տնկեաց Աստուած զդրախտն յեզեմ ընդ ա-
րելք, և եղ անդ զմարդն զոր ստեղծ, Եւ բուսոյց և ս
Տէր Աստուած յերկրէ զամենայն ծառ զեղեցիկ՝ ի տե-
սանել՝ և քաղցր՝ ի կերակուր. և զծառն կենաց՝ ի մէջ
դրախտին, և զծառն զխտելոյ զգիտութիւն բարւոյ և
չարի: Եւ էառ Տէր Աստուած զմարդն, զոր արար, և եղ
զնա՝ ի դրախտին փափկութեան, զործել զնա և պա-
հել: Եւ պատուիրեաց Տէր Աստուած Ադամայ՝ և ասէ
յամենայն ծառոց որք են՝ ի դրախտին ու անլով կերի-
ցէք: Բայց՝ ի ծառոյն զխտութեան բարւոյ և չարի մի՛
ու տիցէք, զի յորում աւուր ու տիցէք՝ ի նմանէ՝ մահու-
մեռանիցիք: Եւ ասաց Տէր Աստուած, ոչէ բարւոք մար-
դոյդ միայն լինիլ, արասցուք դմա օգնական ըստ զման:
Եւ ստեղծ ևս Տէր Աստուած զամենայ գաղանս վայրի,
և զամենայն թռչունս երկնից, և էած զնոսա առ Ա-
դամ, տեսանել զինչ կոչեսցէ վնոսա, և ամենայն շնչոց
կինդանւոյ, զինչ և անուանեաց Ադամ, այն անուն է
նորա: Եւ կոչեաց Ադամ անուանս ամենայն անասնոց,
և ամենայն թռչնոց երկնից, և ամենայն գաղանաց վայ-
րի, բայց Ադամայ ոչ գտու. օդնական նման նման: Եւ
էարկ Տէր Աստուած թմրութիւն՝ ի վերայ Ադամայ, և
ննջեաց, և էառ մի՝ ի կողից նորա և ելից ընդ այնու-
մարմին: Եւ շինեաց Տէր Աստուած զկողն զոր էառ յԱ-
դամայ՝ ի կին, և էած զնա առ Ադամ: Եւ ասէ Ադամ,
այս այժմիկ ոսկը յոսկերաց իմաց, և մարմին՝ ի մարմ-
նոյ իմմէ, սա կոչեսցի կին, զի յառնէ իւրմէ առաւ: Վա-
սըն այնորիկ թողցէ այր զհայր իւր և զմայր իւր, և
երթիցէ ղհետ կնոջ իւրոյ: Եւ եղիցին երկուքն՝ ի մար-

մին մի. և էին երկոքեանն մերկ՝ Աղամ՝ և կի՞ն իւր,
և ոչ ամաչէին:

Գ Ի Ր Ք Ծ Ն Ն Դ Ո Յ :

Պլուլս գ. 1—24:

Եւ օձն էր իմաստնագոյն քանի դամենայն դազաւ
նըս որ 'ի վերայ երկրի, զօր արար Տէր Աստուած, և աւ
սէ օձն ցկին. զի՞ է զի ասաց Աստուած, թէ յամենայն
ծառոց որք իցեն 'ի ներքս ՚ի դրախտի այդր՝ մի՛ ուտիւ
ցէք: Եւ ասէ կի՞նն ցօձն, 'ի պտղոյ, ծառոց դրախտիդ
կերիցուք: Բայց 'ի պտղոյ, որ է 'ի մէջ դրախտին, ասաց
Աստուած, մի՛ ուտիցէք 'ի նմանէ, և մի հաւալ լինիցիք՝
զի մի՛ մեռանիցիք: Եւ ասէ օձն ցկինն, ոչ եթէ մաւ
հու մեռանիցիք: Զի զիաէր Աստուած, թէ յորում
աւուր ուտիցէք 'ի նմանէ, բանայցն աչք ձեր, և լինիւ
ցիք իբրև զԱստուածս, ծանաչել զբարի և զչար: Եւ եւ
ակս կի՞նն, զի բարի էր ծառն 'ի կերակուր, և հաճոյ ա-
չաց հայելոյ, և գեղեցիկ՝ 'ի տեսանել, և էառ 'ի պտղոյ
նորա, և եկեր, և ետ առն իւրում ընդ իւր և կերին:
Եւ բացան աչք երկոցունցն, և զիտացին զի մերկը էին,
և կարեցին տերեւս թզենւոյ և արարին իւրեանց սփա-
ծանելիս: Եւ լուան զձայն զդնալոյ Տեառն Աստուծոյ 'ի
դրախտի անդ ընդ երեկս և թաքեան Աղամ և կի՞ն
իւր յերեսաց Տեառն Աստուծոյ՝ 'ի մէջ ծառոց դրախտին:
Եւ կոչեաց Տէր Աստուած զԱղամ, ասէ ցնա ո՞ւր ես:
Եւ ասէ, լուայ զձայն քո 'ի դրախտի աստ և երկեայ,
քանզի մերկ էի և թաղեայ: Եւ ասէ ո՞ պատմեաց թէ
թէ մերկ ես, բայց թէ 'ի ծառոյն, յորմէ պատու իրեցի

քեզ անտի և եթ չուտել, կերե՞ր արդեօք՝ ՚ինմանէ՛:
Եւ ասէ աղամ՝ կինս զօր ետուր ընդիս՝ սա ետ ինձ ՚ի
ծառոյց անտի և կերի՛: Եւ ասէ Տէր Աստուած ցկինն,
զե՞նչ գործեցեր զայդ, և ասէ կինն, օձն խաբեաց զիս
և կերի՛: Եւ ասէ Տէր Աստուած ցօձն. փոխանակ զի աւ
րարեր դու զայն, անիծեալ լիջիր դու յամենայն աւ
նասնոց և յամենայն գաղանաց երկրի, ՚ի վերայ լանջաց
և որովայնի քոյ գնասցիս, և հող կերիցես զամենայն
աւուրս կենաց քոց: Եւ եղից թշնամութիւն ՚ի մէջ
քոյ և ՚ի մէջ կնոջդ, և ՚ի մէջ զաւակի քոյ և ՚ի մէջ
զաւակի դորա, նա սպասեսցէ քում զլիսոյ, և դու սպաս
սցես նորա գարշապարի: Եւ ցկինն ասէ, բաղմացու
ցանելով բաղմացուցից զտրտմութիւնս քո և զհեւ
ծութիւնս, տրտմութեամբ ծնցիս որդիս, և ասէ այր քո
դարձ քո, և նա տիրեսցէ քեզ: Եւ ցԱղամ ասէ, փու
խանակ զի լուար ձայնի կնոջդ քոյ և կերեր ՚ի ծառոյց
անտի, յորմէ պատուիրեցի քեզ անտի միայն չուտել,
և կերեր ՚ինմանէ, անիծեալ լիցի երկիր ՚ի գործս քոյ,
տրտմութեամբ կերիցես զնա զամենայն աւուրս կենաց:
Փուշ և տատակ բուսուսցէ՝ քեզ, և կերիցես զբանա
ջար վայրի: Գրտամբք երեսաց քոյ կերիցես զհաց քո
մինչեւ դարձցիս յերկիր, ուստի առար, զի հող էիր և
՚ի հող դարձցիս: Եւ կոչեաց Աղամ զանուն կնոջ իւրա
ոյ կեանս, զի նաէ մայր ամենայն կենդանեաց: Եւ արար
Աստուած Աղամայ և կնոջ նորա հանդերձս մաշկեղենս,
և զգեցոյց զնոսա: Եւ ասէ Տէր Աստուած, ահա Աղամ
եղիւ իբրև մի ՚ի մէնջ՝ զիտել զբարի և զչար, և արդ՝
գուցէ ձգիցէ զձեռն, և առնուցու ՚ի ծառոյն կենաց,
ուտիցէ. և կեցցէ յաւիտեան: Եւ էհան արձակեաց դնա

Տէր Աստուած՝ 'ի դրախտէ անոի փափկութեան՝ զոր-
ծել զերկիր՝ ուստի առաւ։ Եւ էջան զԱղամ, և բնա-
կեցոյց յանդիման դրախտին փափկութեան և հրամա-
յեաց քրօբէից և բոցեղէն սրոյ շուրջանակաւ պահել
զնանապարհս ծառոյն կենաց։

Գ Ի Բ Ք Ծ Ն Ն Դ Ո Ց։

Գլուխ ի՛բ. 4—15.

Եւ եղեւ յետ բանիցս այսոցիկ, փորձեաց Աստ-
ուած զԱրրահամ՝ և ասէ ցնա, Արրահամ, Արրահամ,
և նա ասէ ահաւասիկ եմ։ Եւ ասէ ցնա, առ զու զոր-
դիդ քո զսիրելի, զոր սիրեցեր զիսահակ, և գնա՛ զու
յերկիր բարձր և հանցես զդա անդ յողջակէս 'ի վերայ
միայ լեռանց՝ յորոց ասացից քեզ։ Եւ յարեաւ Արրա-
համ ընդ առաւօտն, համետեաց զէշ իւր, և էառ
ցնդ իւր երկու ծառայս, զիսահակ զորդի իւր. և պա-
տառեաց փայտ յողջակէզ՝ յարեաւ և գնաց, և եկն 'ի
աեզին, զոր ասաց նմա Աստուած։ Եւ յաւուրն երրոր-
դի համբարձ Արրահամ զաչս իւր և ետես զտեղին 'ի
չեռաստանէ։ Եւ ասէ Արրահամ ցպատանիս իւր, նըս-
տարուք դուք այդր հանդերձ իշով, և ես և պատան-
եակս երթիցուք մինչեւ ցանդր, և երկիրպազցուք և
դարձցուք առ ձեզ։ Եւ էառ Արրահամ զփայտ ողջա-
կիզին, և եդ 'ի վերայ իսահակայ որդւոյ իւրոյ, և էառ
'ի ձեռն զհուրն և զսուր, և գնացին երկոքեան 'ի մի-
ամին։ Եւ ասէ իսահակ ցԱրրահամ ցհար իւր, հայր
և նա ասէ, զի՞է որդեակ. և նա ասէ ահա հուր և
ահա փայտ, ուր է ոչիսար յողջակէզ։ Եւ նա ասէ, Աս-

տուած տեսցէ իւր յողջակէզ որդեակ, գնացին երկու-
քեան ՚ի միասին: Եւ եկին ՚ի աեղին, զոր ասաց նմա Աս-
տուած, անդ շինեաց սեղան Արրահամ, և եդ ՚իվերայ
զփայտն, և կապեաց զլսահակ զորդի իւր, և եդ զնա
՚ի սեղանն ՚ի վիրայ փայտին: Եւ ձգեաց Արրահամ զձե-
ռն առնուլ զսութն և զենուլ զորդի իւր: Եւ կոչեաց
զեա հրեշտակ Տեառն յերկնից և ասէ, Արրահամ Ար-
րահամ, և նա ասէ ահաւասիկ եմ:

Եւ ասէ, մի՛ միսեր զձեռն քո ՚ի պատանեակդ, և
մի՛ ինչ առներ զմա, զի այժմ զիտացի թէ երկիւղած
և զու յԱստուծոյ, և ոչ խնայեցեր յորդիդ քո սիրե-
լի վասն իմ: Համբարձ Արրահամ զաջս իւր և ետես,
և ահա խոյ մի կախեալ կայր զծառոյն Յարեկայ զեղ-
ջերաց, և գնաց Արրահամ և էառ զխոյն և էհան զեա
յողջակէզ փոխանակ Խասհակայ որդւոյ իւրօյ: Եւ կո-
չեաց Արրահամ զանուն տեղւոյն այնորիկ Տէր ետես,
զի ասիցեն ցայսօր ՚ի լերին յայնմիկ Տէր երեկցաւ:

Գ Ի Բ Ք Ա Ռ Ա Կ Ա Յ Յ :

Գլուխ Գ. 1—35.

Որդեակ՝ զօրէնս իմ մի մօռանար, և զբանս իմ
պահեսցէ ոիրտ քո: Զի ընդ երկայնութիւն կենաց և
ամք կենդանութեան, և խաղաղութիւն յաւելցին քեզ:
Ազորմութիւն և հաւատք ՚ի քէն մի պակասեսցին, արկ
զնոսա ընդ պարանոց քոյ և զրեա՛ զնոսա յընդարձա-
կութիւն սրտի քոյ: Եւ գտցես չնորհս, և խորեաց զբա-
րիս առաջի Տեառն և մարդկան: Լեր յուսացեալ ՚ի Տէր

յամենայն սրտէ քումմէ, և յիմաստութիւն քո մի՛ հըւ
պարտանար, յամենայն ճանապարհս քո ծանիր զնա զի
ուղիղ արասէ զշաւիղս քո, (և ոտն քոյ մի՛ գայթա-
կղեսցին) Մի լինիր իմաստուն յաչս անձին քոյ, այլ եր-
կիր 'ի Տեառնէ, և խոտորեաց յամենայն չարութենէ:
Ապա բժշկութիւն եղիցի մարմնոյ քում և դարման
սոկերաց քոյց: Պատուեա՛ զՃէր 'ի քոյոց արդար վաստա-
կոց, և հան նմա պտուղ 'ի քոց արդարութեան ար-
մանեաց: Զի լցցին շտեմարանք քո լիութեամբ ցորենոյ և
հնձանք դինեաւ քով առաւել ևս բղիսեսցին: Որդեակ՝
մի՛ լքանիր 'ի խրատու Տեառն և մի՛ լուծանիր յան-
դիմանեալ 'ի նմանէ: Զի զոր սիրէ Տէր՝ խրատէ, տան-
ջէ զամենայն որդի, զոր ընդունի: Երանեալ է այր որ ե-
ղիտ զիմաստութիւն և մահկանացու որ ետես զհան-
ձար: Զի լաւ է զվախճան զայն զտանել, քան զզանձս
ուկոյ և արծալթոյ: Պատուականագոյն է քան զակա-
նըս պատուականս և ոչինչ է չար, հակառակ կացցէ նմա,
յայտնի է ամենեցուն, որք մերձին առ նա, և ամենայն
ինչ որ պատուական է չարժէ զնա: Զի երկայն աւուրք և
ամք կենաց 'ի յաջմէ իւրմէ, յահեկէ իւրմէ փառք և մե-
ծութիւն, 'ի բերանոյ նորա բղիսի արդարութիւն, զօրէնս
և զողորմութիւն 'ի լեզուի իւրում կրէ: Ճանապարհք նո-
րա, ճանապարհք բարեաց, շաւիղք նորա խաղաղութեամբ:
Փայտ կենաց է ամենեցուն, որք պատսպարին 'ի նմա, և
որք յենուն 'ի նա, իրիւ 'ի Տէր հաստատութեամբ: Աս-
տուած իմաստութեամբ հիմունս էարկ երկրի, պատրաս-
տեաց զերկինս խորհրդով: Յւ հանձարով իւրով զան-
գունդս պատառեաց, և ամսլք հոսեցին զանձրէ: Որդ-
եակ՝ մի՛ լքանիր, ողահեա զիսորհուդո իմ և զիմաստու-

թիւն։ Զի կեցցէ անձն քո, և շնորհը իցեն՝ ՚ի վերայ սպա-
րանոցի քում, եղիցի բժշկութիւն մարմնոյ քում և
չարման ոսկերայ քոց։ Զի գնասցես յուսով խաղաղու-
թեան յամենայն ճանապարհս քո և ոտն քո ոչ գայթա-
զղեսցի։ Զի եթէ նստիցիս՝ աներկիւղ իցես, և եթէ
ննջիցես՝ քաղցր ՚ի քուն լիցիս։ Եւ երկիցես ՚ի զարհու-
րանաց ՚ի վերայ հասելոց ամբարշտաց և յարշաւանաց
՚ի վերայ եկելոց։ Զի Տէր եղիցի ՚ի վերայ ամենայն ճա-
նապարհաց քոց և հաստատեսցէ զոտն քո, զի մի սա-
սանեսցի։ Մի՛ յապաղիր բարի առնել կարօտելոյն, յոր-
ժամ ձեռնհաս իցես օդնել նմա։ Մի ասիցես թէ երթ՝
և եկեսջիր և վաղիւ տաց։ Զի կարող ևս իցես բարի
առնել, քանզի ոչ գիտես, զինչ վաղիւն ծնանիցի քեզ։
Մի՛ նիւթեր բարեկամի քում չարիս, որ յեցեալ և
յուսացեալ իցէ ՚ի քեզ։ Մի՛ թշնամասէր լինիր մար-
դոյ ՚ի տարապարտուց, զի մի՛ չար ինչ գործիցէ քեզ։
Մի՛ ստանար նախատինս յարանց չարաց և մի՛ նախան-
ձիր ընդ Ճանապարհս նոցա։ Քանզի պիղծէ առաջի Ցեառն
ամենայն անօրէն և ընդ արդարս ոչ հաղորդին։ Անէծք
Տեառն ՚ի տունս ամբարշտաց, յարկը արդարոց օրհնին։
Տէր ամբարտաւանից հակառակ կայ, տայ շնորհս
խոնարհաց։ Զփառս իմաստունք ժառանգեսցեն, իսկ ամ-
բարիշտք բարձրացուցին զանարդանս։

Գ Ի Բ Ք Ա Ռ Ա Կ Ա Յ :

Գլուխ Ժ. 1—32.

Որդի իմաստուն ուրախ առնէ զհայր, որդի ան-
միտ արտմութիւնէ մօր։ Ոչինչ օդնեսցեն գանձք անօ-
րինաց, այլ արդարութիւն փրկէ ՚ի մահուանէ։ Ոչ սո-

վամահ առնէ Տէր զանձն արդարոյ, բայց գիեանս ամբարշտաց կործանեսցէ: Աղքատութիւն զայր խոնարհեցուցանէ. ձեռք ժրաց մեծացուցանեն: Որ ջանայ ստութեամբ, նա արածէ զհողմ՝ նոյն խկ ինքն հետեւի հաւուց թուցելոց: Որ ժողովէ ներհնձում, որդի խմաստուն է. այլ որ ննջէ յամարայնի՝ որդի պատկառանաց: Որդի խրատեալ խմաստուն եղիցի և անմիտն ՚ի ծառայութիւն վարեսցի. ապրեցաւ ՚ի խորշակէ որդի խմաստուն, խարշակահարլինի յամարայնի որդի անօրէն: Որհնութիւն Ցեառն ՚ի զլուխս արդարոց, զբերանս ամբարշտաց ծածկեսցէ սուգ տարաժամ: Ցիշատակ արդարոց հանդերձ գովութեամբ, և անուն ամբարշտաց շեջցի: Խմաստունն սրտիւ ընկալցի զպատուիրանս և ցովն շրթեամբք գայթակղելով կործանեսցի: Որ գնաց միամտութեամբ՝ գնաց յուսով, իսկ որ թիւրէ պճանապարհս իւր՝ յայսնի եղիցի: Որ ակնարկէ ակամք նենգութեան, ժողովէ արանց զպատմութիւն, իսկ որ յանդիմանէ համարձակութեամբ, առնէ զիսազազութիւն: Աղբիւր կենաց յԱստուծոյ բերան արդարոց, զբերան ամբարշտի ծածկէ կորուստ: Ատելութիւն գրգռէ զհակառակութիւն և զամենեսին որք ոչն հակառակին, ծածկէ սեր: Որ ՚ի շրթանց իւրոց բղլսէ զիմաստութիւն, իբրեւ գաւազանաւ հարկանէ զայր անմիտ: Խմաստունք ծածկն զիմաստութիւն, բերան յանդուզն մերձէ ՚ի բեկումն: Որտացուած մեծատանց քաղաք ամուր և բեկումն ամբարշտաց աղքատութիւն: Գործք արդարոց կեանս առնեն՝ և պտուզք ամբարշտաց մեզք: ԶՃանապարհս կենաց պահէ Տէր, խրատ առանց յանդիմանութեան մուլքէ: Ծածկեն զթշնամութիւն շրթունք արդարք, իսկ

որք 'ի վեր հանեն զբամբասանս, անզգամք են: Շատառաւ
խօս լինելով ոչ զերծցիս 'ի մեղաց, եթէ խնայես 'ի շըր-
թունս քո, իմաստուն լինիս: Արծաթ ընտիր է լեզու
իմաստնոյ. սիրա ամբարշտի նուաղեսցի: Երթունք ար-
դարոց ձանաշեն զբարձունս, իսկ անզգամք 'ի կարօ-
տութեան սատակեսցին: Օրհնութիւն Տեառն 'ի ղլուխս
արդարոց և նոյն մեծացուցանէ և ոչ ևս յաւելանայ տրտ-
մութիւն 'ի սիրա նորա: Ծիծաղելով գործէ անզգամն
զշարիս, իսկ իմաստութիւն առն նիւթէ զհանձար:
Նկորստեան շրջի ամբարիշան, ցանկութիւն արդարոց
ընդունելի է: 'Ի յանցանել մրրկի եղծանի ամբարիշան,
և արդարոյն խոյս տուեալ կեցցէ յաւիտեան: Որպէս
տղոխ ատամանց վնասակար է և ծուխ աչաց, նոյնպէս
և անօրէնութիւն, որոց նովաւ վարին: Երկիւղ Տեառն
յաւելու զաւուրս, ամք ամբարշտաց նուազեսցին: Ցեր-
կարի արդարոց ուրախութիւն, յոյս ամբարշտաց կորիշ-
ցէ: Ամրութիւն արդարոց երկիւղ Տեառն, և խորտա-
կումն այնոցիկ, որք գործիցեն զշարիս: Արդարն յաւի-
տեան ոչ սասանեսցի և ամբարիշաք մի բնակեսցին յեր-
կրի: Յերան արդարոցն բղխէ զիմաստութիւն, լեզու ա-
նիրաւի սատակեսցի: Երթունք արանց արդարոց կաթեն
շնորհս, բերան ամբարշտաց կործանի:

ՍՐԲՈՅ ԱԽԵՏԱՐԱՆԻՍ ՅԻՍՈՒԽԻ ՔԲԻՍՏՈՍԻ

որ ըստ մատթէոսի:

Գլ. Ա. 18—25:

Եւ Յիսուսի Քրիստոսի ծնունդն էր այսպէս խօ-
սեալ զմայր նորա Մարիամ Յովսէփու՝ մինչև եկեալ

առ միմեանս՝ գտաւ յղացեալ՝ ի Հոգւոյն Սրբոյ; Եւ Յօս
սէփի այր նորա քանզի արդար էր, և ոչ կամեցաւ ա-
ռահել զնա, խորհեցաւ լռելեայն արձակել զնա: Եւ մին-
դեռ նա զայս ածեր մտաւ՝ ահա հրեշտակ Տեառն ՚ի
տեսլեան երեւցաւ նմա և ասէ, Յօսէփի որդի Դաւթի,
մի՛ երկնչիր առնուլ առ քեզ զՄարիամ կին քո, քանզի
որ ՚ի նմայն ծնեալ է, ՚ի Հոգւոյն Սրբոյ է: Ծնջի որդի և
կոչեսցես զանուն նորա Յիսուս, զի նա փրկեսցէ զժո-
ղովուրդ իւր ՚ի մեղաց իւրեանց: Այլ այս ամենայն եղե, զի
լոցի՝ որ ասացաւն ՚ի Տեառնէ ՚ի ձեռն Եսայեայ մարդա-
րէի: Ահա կոյս յղասցի, և ծնցի որդի և կոչեսցեն զա-
նուն նորա կմմանուէլ, որ թարդմանի ընդ մեզ Աս-
տուած: Եւ զարթուցեալ Յօսէփի ՚ի քնոյ անտի, արար
որպէս հրամայեաց նմա հրեշտակ Տեառն: Եւ էառ յին-
քըն զկինն իւր: Եւ ոչ գիտէր զնա, մինչեւ ծնաւ զոր-
դին իւր զանդրանիկ, և կոչեաց զանուն նորա Յիսուս:

ՍՐԲՈՅ ԱԿԵՏԱՐԱՆԻՍ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

որ ըստ մատթէոսի:

Գլ. Գ. 1—17:

Յաւուրմն յայնոսիկ գայ Յօհաննէս մկրտիւ քա-
րոզէլ յանապատին Հրէաստանի: Եւ ասել, ապաշխար-
հեցէք զի մերձեալ է արքայութիւն երկնից: Զի սա՛ է՝
վասն որոյ ասացաւ ՚ի ձեռն Եսայեայ մարդարէի, որ ասէ,
ձայն բարբառոյ յանապատի, պատրաստ արարէք զՃա-
նապարհս Տեառն, և ուղիղ արարէք զշանդերձ ՚ի ստեղյ ուղտու-
թ զօտի մաշկեղէն ընդ մէջ իւր, և կերակուր նոար էր

մարախ և մեղք վայրենի: Յայնժամ ելանէին առ նա առ
մենայն Երուսաղէմացիք, և ամենայն Հրէատան, և առ
մենայն կողմն յորդանանու: Եւ մլրտէին ՚ինմանէ ՚ի յոր
դանան, և խոստովան լինէին զմեղս իւրեանց: Եւ տես
սեալ զբազումս ՚իսադուկեցւոցն և ՚ի վարիսեցւոց եւ
կեալս ՚ի մլրտութիւննորա, ասէ ցնոսա, ծնունդք իժից՝
ո եցոյց ձեզ փախչել ՚իբարկութենէն՝ որ գալցնէ Ա. Ա.
բարիք այսուհետեւ պտուղ արժանի ապաշխարութեան:
Եւ մի՛ համարիցիք ասել յանձինս՝ թէ ունիմք մեք
հայր զԱբրահամ. ասեմ ձեզ, զի կարողէ Աստուած՝ ի
քարանցս յայսցանէ յարուցանել որդիս Աբրահամու:
Զի աւասիկ տապար առ արմին ծառոց դնի, ամենայն ծառ,
որ ոչ առնէ զպտուղ բարի, հատանի և ՚ի հուր ար-
կանի: Ես մլրտեմ զձեզ ջրով յապաշխարութիւն, բայց
որ զինի իմ գայ՝ հզօրագոյնէ քան զիս. և ես չեմ բա-
ւական բառնալ զկօշիկս նորա, նա մլրտեսցէ զձեզ՝ ՚ի
Հոգին Սուրբ և ՚ի հուր: Որոյ հեծանոցն ՚ի ձեռին իւր-
բում, և սրբեսցէ զկալ իւր, և ժողովեսցէ զցորեանն
՚իշտեմարանս իւր, և զյարդն այրեսցէ անշէջ հրով:
Յայնժամ գայ Յիսուս ՚ի Գալիլիէ ՚ի յորդանան առ Յօ-
հաննէս մլրտիլ ՚ինմանէ: Եւ Յօհաննէս արգելու զնա՝ և ա-
սէ, ինձ պիտոյէ ՚ի քէն մլրտիլ՝ և դուառ իս գաս: Պատաս-
խանի ետ Յիսուս և ասէ ցնա, թոյլ տուր այժմ, զի այսպէս
վայելէ մեզ լնուլ զամենայն արդարութիւն, և ապա թոյլ
ետ նմա: Եւ իբրև մլրտեցաւ Յիսուս, ել վաղվաղակի ՚ի
ջրոյ անտի, և ահա բացան նմա երկինք, և ետես զՀոգին
Աստուծոյ, զի իջանէր իբրև զաղաւնի, և դայր ՚ի վերայ
նորա: Եւ ահա ձայն յերկնից՝ որ ասէր, դա' է Որդի
իմ սիրելի, ընդ որ հաճեցայ:

ՄՐԲՈՅ ԱԽԵՏԱՐԱՆԻՍ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

որ ըստ մարկոսի:

ԳԼ. ԺԴ. 1—25.

Եւ էր զատիկ և բաղարջակեր, յետ երկուց աշուրց խնդրէին քահանայապետքն, և դպիլք՝ եթէ զիամրդ զնա նենգութեամբ կալեալ սպանանիցեն: Բայց ասէին թէ մի ՚իտօնի աստ, զի մի' խոռվութիւն լինիւցի ՚ի ժողովրդեանն: Եւ մինչ էր ՚ի բեթանիայ ՚ի տան Սիմօնի բորոտի բազմեալ, եկն կին մի որ ունէր շիշիւղոյ նարտեան ազնուի մեծագնոյ, և բեկեալ զշիշն, եհեղ ՚ի վերայ զլսոյ նորա: Եւ աշակերտքն զչարէին և ասէին, ընդէր եղեւ կորուստ իւղոյ այդորիկ: Մարդ էր զայդ իւղ վաճառել աւելի քան զերեք հարիւր դաշնեկանի, և տալ աղքատաց, և զայրանային նմա յոյժ: Եւ Յիսուս ասէ ցնոսա, թոյլ տուք դմա, մի' աշխատ տունէր, զի գործ մի բարի գործեաց դա յիս: Յամենայն ժամ զաղքատս ընդ ձեղ ունիք և յորժամ կամիք՝ կարող էք առնել նոցա բարիս, այլ զիս ոչ յամենայն ժամ ընդ ձեղ ունիք: Դա զոր ունէր, արար. յառաջագոյն խնկեաց զմարմին իմ ՚ինշան պատանաց: Ամեն ասեմ ձեղ, ուր և քարոզեսցի աւետարանս այս ընդ ամենայն աշխարհ, և զոր արար դա՝ խօսեսցի յիշաւտակ դորա: Եւ Յուղա խկարիօտացի մի յերկոտասանից անտի, դնաց առ քահանայապետն՝ զի մատնեսցէ զնա նոցա:

Յոքա իրրե լուան՝ խնդային և խոստացան տալ նմա արծաթ, և խնդրէր թէ զիամրդ պարապով մատնեսցէ զնա: Եւ յառաջնում աւուր բաղարջակերացն,

յորում զպասէքն զենուին, ասեն ցնա աշակերտքն, ուր չկամիս երթիցուք՝ պատրաստեցուք՝ զի կերիցես զզա-
ռովին: Եւ առաքէ երկուս յաշակերտաց անտի՝ և ասէ
ցնոսա, երթայը՝ ի քաղաք, և իրեւ մտանիցէք՝ ի քաղա-
քըն, պատահեսցի ձեղ այր մի, որ սափոր ջրոյ յուսն ու-
նիցի, երթայը զշետ նորա: Եւ յոր տուն մտանիցէ, ա-
սսս ջեք ցտանուտերն, վարդապետն ասէ՝ ուր են իջե-
անըն իմ, ուր աշակերտօքս ուտիցեմ զզատին: Եւ
նա ցուցցէ ձեղ վիբնատուն մի մեծ քարդարեալ, անդ
պատրաստեսջէք մեզ: Եւ գնացին պատրաստէլ աշա-
կերտքն նորա. Ֆկին՝ ի քաղաքն և գտին որպէս ասայն
նոցա, և պատրաստեցին զզատին: Եւ իրեւ երեկոյ և
զի գայ երկոտասանկուքն հանդերձ: Եւ իրրե բազմացան,
և զեռ ուտէին, ասէ Յիսուս. ամէն ասեմ ձեղ, զի մի
ոմք՝ ի ձէնջ մատնելոց է զիս, որ ուտէ քսկ լնդիս: Եւ
նոքա սկսան տրտմիլ՝ և ասել մի քստ միոջէ՝ միթէ Է-
թիցեմ և միւսն միթէ Էս իցեմ: Նա պատասխանի և ու
և ասէ ցնոսա մի յերկոտասանից այտի, որ միսեաց լն-
դիս՝ իսկաւառակդ: Այլ որդի մարդոյ երթայ՝ որպէս
գրեալ է վասն նորա, բայց վայ իցէ մարդոյն այնմիկ
յոյր ձեռն որդի մարդոյ մատնեցի, լաւ էր նմա՝ թէ
ձէր ծնեալ մարդն այն: Եւ մինչդեռ ուտէին՝ առեալ
Յիսուս հաց, օրհնեաց և եքեկ՝ ետ նոցա և ասէ, ա-
ռէք՝ այդ է մարմին իմ: Եւ առեալ բաժակ՝ զոհացաւ
և ետ նոցա, և արբին՝ ինմանէ ամենեքնան: Եւ ասէ
ցնոսա, այս է արիւն իմ նորոյ ուխտի, որ փոխանակ
բազմաց հեղանի:

ՄՐԲՈՅ ԱԽԵՏԱՐԱՆԻՍ ՑԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ

որ ըստ մատթէոսի:

Գլ. Իշ. 1—66

Խրե այգ եղև՝ խորհուրդ արարին ամենայն քահանայապետք և ծերք ժողովրդեանն վասն ջիսուսի սպանանել զնա; Կապեցին զնա, և առին զնացին և ետուն ՚ի ձեռս Պոնդացւոյ Պիղատոսի դատաւորի: Յայնժամ տեսեալ Յուդայի որ մատնեաց զնա՝ թէ պարտաւորեցաւ զղջացաւ, և դարձոյց զարծաթն առ քահանայապետսն և ծերս ժողովրդեան: Եւ ասէ՝ մեղայ զի մատնեցի զարիւն արդար, և նոքա տսեն, մեղ չէ փոյթ, դու գիտես: Եւ ընկեց զարծաթն ՚ի տաճարն՝ և զնաց և չոգաւ խեղդեցաւ: Խսկ քահանայապետիցն առեալ զարծաթն՝ տսեն, ոչ է արժան ընդունիլ զայդ ՚ի կորբանն, քանզի դինք արեան են: Խորհուրդ առեալ զընեցին այնու զագարակն բրտի ՚ի գերեզման օտարաց: Վասըն այնորիկ կոչեցաւ ազարակն այն՝ ազարակ արեան՝ մինչև ցայսօր: Յայնժամ լցաւ՝ որ ասացաւ ՚ի ձեւն Եւրեմիսյի մարդարեին՝ առին զերեսուն արծաթին զգինս վաճառելոյն, զոր առին յորդոցն խրայելի: Եւ ետուն զնա յագառակն բրտի, որպէս հրամայեաց ինձ Տէր: Եւ ջիսուս եկաց առաջի դատաւորին, էհարց ցնա դատաւորին՝ և ասէ, դու ես թագաւորն Հրէից, և ջիսուս ասէ, դու տսես: Եւ ՚ի չարախօսիլն նորա ՚ի քահանայիցն և ՚ի ծերոց, ոչինչ ետ պատասխանի, յայնժամ ասէ ցնա ցնա Պիղատոս, ոչ լսես՝ որչափ դոքա հակառակ քովկայեն: Եւ ոչ ետ նմա պատասխանի՝ և ոչ բան մի,

մինչև զարմանալ դատաւորին յոյժ։ Բայց ըստ տօնի
սովոր էր դատաւորին արձակել ժողովրդեանն կապեալ
մի, զոր կամէին։ Ունէին յայնժամ կապեալ մի նշանաւ-
որ՝ որում անուն էր Յեսու Քարաբրայ։ Իրու ժողո-
վեցան ասէ յնոսա Պիղատոս, զո՞ կամիք յերկուց ասաի,
զի արցակեցից ձեզ՝ զյեսու բարաբրայ, եթէ զջիսուս
զանուանեալն Քրիստոս։ Քանզի գիտէր թէ առնախան-
ձու մատնեցին զնա։ Եւ մինչդեռ նստէր յատենին, առ-
առքեաց առ նա կին իւր՝ և ասէ, չկայ ինչ քո և ար-
դարոյն այնորիկ, զի բազում անցը անցին ընդիմ այսօր
յանուրջս վասն նորա։ Խոկ քահանայապետքն և ծերք՝
հաւանեցուցին զժողովուրդն՝ զի խնդրեսցեն զբարա-
րայն և զջիսուս կորուսցեն։ Պատասխանի ետ դատաւ-
որն՝ և ասէ՝ յնոսա զո՞ կամիք, զի արձակեցից ձեզ
յերկուց այտի, և նոքա ասեն՝ զբարաբրայ։ Ասէ յնոսա
Պիղատոս, խոկ զի՞ արարից զջիսուս զանուանեալն Քր-
իստոս։ Ասեն ամենեքեան խաչեսցի, և նա ասէ, զի՞նչ
չար արար, և նոքա առաւել ևս աղաղակէին և ասէին
խաչեսցի։ Եւ տեսեալ Պիղատոսի՝ թէ ոչինչ օկնէ, այլ
առաւել խուվութիւն լինի, առեալ ջուր՝ լուաց գնե-
սըս առաջի ժողովրդեանն՝ և ասէ, քաւեալ եմ ևս յա-
րենէ արդարոյդ այդորիկ, դուք զիտասջիք։ Պատաս-
խանի ետ ամենայն առղովուրդն՝ և ասէ, արիւն դորս
՚ի վերայ մեր և ՚ի վերայ որդւոց մերոց։ Յայնժամ ար-
ձակեաց նոցա զբարաբրայն, և զջիսուս՝ դան հարեալ
ետ ՚ի ձեռս, զի խաչեսցի։ Յայնժամ զինուորք դատաւո-
րին առին զջիսուս յապարանս, և ժողովեցին ՚ի վերայ
նորա զամենայն զգունդն։ Մերկացուցին զնա և արկին
զնովաւ քղամիդ կարմիր։ Եւ բոլորեալ պսակ ի վշայ՝

նղին՝ ի զլուխ նորա, և եղեղն յաջոյ ձեռին նորա, ՚ի ծունը իջեալ առաջի նորա՝ կատակեին և ասէին, ողջ լեր թագաւոր Հրէից: Եւ թքեալ ՚ի նա՝ առնուխն զեւ զէգն՝ և ծեծէին զգլուխ նորա: Եւ յորժամ ձաղեցին զնա՝ մերկացուցին ՚ի նմանէ զքղամիդն՝ և աղուցին նմա զիւր հանդերձն և տարան զնա ի խաչ հանել: Եւ ելեալ արտաքս՝ դտին զայր մի կիւրենացի անուն Աբամօն, զնա կալան պահակ՝ զի բարձէ զիսաշն նորա: Եւ եկեալ ՚ի տեղին անուանեալ դոզդոթայ, որ է տեղի կառափելոյ: Ետուն նմա զինի ընդ լեղի խառնեալ և իբրեւ ծաշակեաց՝ ոչ կամէր ըմպել: Եւ հանեալ զնա ՚ի խաչ բաժանեցին զհանդերձս նորա վիճակաւ, զի լոցի բանն՝ որ ասացաւ ՚ի մարդարէին: Բաժանեցին զհանդերձս իմ յիւրեանս՝ և ՚ի վերայ պատմուանի խմոյ վիճակս արհանէին: Եւ նստեալ պահէին զնա:

Եւ եղին ՚ի վերայ նորա՝ գրեալ զվեսս նորա, թէ ոյս է Յիսուս թագաւորն Հրէից: Յայնժամ հանին ընդ նմա ՚ի խաչ երկուս աւազակս, մի յաջմէ նորա և մի յահակէ: Եւ որք անցանէինն հայհոյէին զնա, շարժէին զղլուխս իւրեանց: Եւ ասէին, վոյ որ քակէիր զտածարն և զերիս աւուրս շինէիր զնա՝ ապրեցո՛ զքեղեթէ որդի ես Աստուծոյ՝ էջ ՚ի խաչէդ: Նոյնաէս և քահանայապետքն ձաղէին հանդերձ զպրօքն և ծերօք՝ և ասէին: Զայլս ապրեցոյց՝ զինքն ոչ կարէ ապրեցուցաւնել, եթէ թագաւոր է Խրայէիլ՝ իջցէ այժմ ՚ի խաչէդ՝ և հաւատասցուք դմա: Եթէ յուսացաւ յԱստուծ, փրկեսցէ այժմ զդա՝ քանզի ասաց եթէ Աստուծոյ որպի եմ: Զնոյն և աւազակըն՝ որք խաչել էին ընդ նմա նախատէին զնա: Եւ ՚ի վեց ժամէ աւուրն խաւար եղեւ

՚ի վերայ ամենայն երկրի, մինչև յինն ժամ։ Եւ զի՞նն
ժամուն գոշեաց յիսուս ՚ի ձայն մեծ՝ և ասէ. է՛լի, է՛լի
լամասաբաքթահի. այսինքն է, Աստուած իմ, Աստուած
իմ ընդէր թողէր գլա։ Ոմանք յայնցանէ որք անդն
կային՝ իրրե լուան ասէին, զնզիայ կարդայ։ Եւ վաղ-
վաղակի ընթացաւ մի ոմն ՚ի նոցանէ՝ էառ սպունգ լւ-
քացախով՝ և յարեալ յեղեգան՝ եա ըմպել նմա։ Եւ
կէսքն ասէին, թող՝ տեսոցուք եթէ գայ Յդիա փրկել
զդա։ Եւ Յիսուս դարձեալ աղաղակեաց ՚ի ձայն մեծ և
արձակեաց զողին։ Եւ ահա վարադոյր տաճարին ցելաւ
յերկուս՝ ՚ի վերուստ մինչև ՚ի վայր, երկիր շարժեցաւ և
վէմք պատառեցան։ Եւ գերեզմանք բացան, և բազում
մարմինք ննջեցելոց սրբոց յարեան։ Եւ ելեալք ի գե-
րեզմանացն՝ յետ յարու թեան նորա մտին ՚ի քաղաքն
սուրբ, և երեեցան բազմաց։ Իսկ հարիւրապետն՝ և
որք ընդ նմա պահէին զՅիսուս՝ իրրե տեսին զշարժումն
և զեղեալոն՝ երկեան յոյժ՝ և ասեն. արդարեւ Աստու-
ծոյ որդի էր սա։ Եին անդ կանայք բազումք, կային ՚ի
հեռաստանէ և հայէին, որք եկին զկնի Յիսուսի ի գա-
լիիաէ պաշտել զնա։ Յորս էր մարիամ Մագդաղինացի
և Մարիամ Յակոբայ և Յօսեայ մայր և մայր որդւոցն Զի-
րեթիայ։ Եւ իրու երեկոյ եղեւ, եկն այր մի մեծառուն
Յարիմաթիայ՝ որում անունն էր Յօսէփ, որ աշակեր-
տացաւ իսկ Յիսուսի։ Սա մատուցեալ առ Պիղատու
խնդրեաց զմարմինն Յիսուսի, յայնժամ Պիղատոս հը-
րամայեաց տալ զմարմինն։ Եւ առեալ զմարմինն Յօսէփ
պատեաց սուրբ կտաւոք։ Եւ եղ ՚ի նոր գերեզմանի՝ զոր
փորեաց ՚ի վիմի և թաւալեցուցեալ կափարիչ դրան զե-
րեզմանին վէմք մի մեծ՝ և զնաց։ Անդ էր Մարիամ

Մազդաղինացի և միւս Մարիամն, նստէին հանդէպ զեւրեղմանին: Եւ ի վաղիւ անդը՝ որ է յետ ուրբաթուն, ժողովեցան քահանայապետն և փարիսեցիք առ Պիշտատոս: Եւ ասեն, Տէր յիշեցաք զի մոլորեցուցիչն այն ասէր, մինչ կենդանին էր, թէ յետ երից աւուրց յառնեմ: Արդ հրամայեա՛ զգուշանալ զերեղմանին մինչ ցերիս աւուրս, զուցէ եկեալ աշակերտքն ՚ի գիշերի զուղանայցեն գնա՝ և ասիցեն ժողովրդեանն՝ թէ յարեաւ ՚ի մեռելոց, և լինիցի յետին մոլորութիւնն չար քան զառաջինն: Ասէ ցնոսա Պիղատոս, ունիք զգօրականս, երթայք զգուշացարուք՝ որպէս և դիտէք: Եւ նորա երթեալ զգուշացան դերեղմանին և կնքեցին զվէմն հանդերձ զօրականօքն:

ՄՐԵՈՅ ԱԻԵՏԱՐԱՆԻՍ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ


որ ըստ մատթէոսի:

Գլ. Կլ. 1—20.

Եւ յերեկոյի շարաթուն յորում լուսանայր միւշաբաթին, եկն Մարիամ Մազդաղինացի և միւս Մարիամն տեսանել զգերեղմանն: Եւ ահա շարժումն մլծեղե, զի հրեշտակ ծեառն իջեալ յերկնից՝ մատուցեալ ՚ի բաց թաւալեցոյց զվէմն ՚ի զրանց անտի, և նստէր ՚ի վերայ նորա: Եւ էր տեսիլ նորա իրրե զփայլակն և հանդերձ նորա սպիտակ իրրե զձիւն: Եւ յաշէ անտի նորա խռովեցան պահատանքն և եղեն իրրե զմեռեաւը: Պատասխանի ետ հրեշտակն և ասէ ցկանայսն, մի՛ երկնչիք զուք, զիտեմ՝ զի զթիսուս զիսչեալն խնդրէք: Զէ՛ աստ, քանզի յարեաւ, որպէս ասացն, եկայք զաւդին՝ ուր կայր: Եւ վաղվաղակի երթայք ասացէք աս-


շակերտացն նորա թէ յարեաւ՝ և ահա յառաջանայ
քան զձեղ՝ ի գալիեայ, անդ տեսանիցէք զնա, ահա ա-
սացի ձեղ։ Եւ ելեալ վաղվաղակի ի գերեզմանէ անտի
ահիւ և խնդութեամբ բազմաւ՝ ընթանային պատմել
աշակերտացն։ Եւ ահա պատահեցաւ նոցա Յիսուս և
ասէ՝ աղջ էք, և նոքա մատուցեալ կալան զոսս նորա
և երկրպագին նմա։ Յայնժամ ասէ ցնոսա Յիսուս մի՛
երկնչիք երթայք ասացէք եղբարցն իմոց՝ զի երթիցեն
՚ի գալիեայ և անդ տեսցեն զիս։ Երբեւ նոքա գնացին,
ահա ոմանիք ՚ի զօրականացն եկին ի քաղաքն և պատմե-
ցին քահանայապետիցն զամենայն որ ինչ եղեն։ Եւ
նոքա ժողովեալ հանդերձ ծերօքն, խորհուդ առեալ՝
արծաթ յոյժ ետուն զօրականացն։ Եւ ասեն ասասջիք
եթէ աշակերտքն նորա եկեալ զիշերի, դողացան զնա
մինչ մեք ՚ի քուն էաք։

Եւ եթէ լուր լիցի այդ առ դատաւորն, մեք հաճեա-
ցուք զնա՝ և զձեղ անհոգս արասցուք։ Եւ նոցա առ-
եալ զարծաթն՝ արարին որպէս ուսան և ել համբաւս
այս ի հրէից մինչև ցայսօր։ Խոկ մետասան աշակերտ-
քըն գնացին ի գալիեայ, ՚ի լեառն ուր ժամադիր եղեւ
նոցա Յիսուս։ Երբեւ տեսին զնա՝ երկրպագին նմա, և
ոմանիք երկուացան։ Եւ մատուցեալ Յիսուս խօսեցա-
րնդ նոսա և ասէ, տուաւ ինձ ամենայն իշխանութիւն
յերկինս և յերկրի, որպէս առաքեաց զիս հայր և ես
առաքեմ զձեղ։ Գնացէք այսուհետեւ աշակերտեցէք
զամենայն հեթանոսս, մլրտեցէք զնոսա յանուն Հօր, և
Արդւոյ և Հոգւոյն Արբոյ։ Ուսուցէք նոցա պահել զա-
մենայն զոր ինչ պատուիրեցի ձեղ, և ահաւասիկ ես
ընդ ձեղ եմ զամենայն աւուրս, մինչ ՚ի կատարած
աշխարհի։



Այս զիրքը ծախվում է Թիֆլիսում գրավաճառ պ.
Աւետիք Ենթաճեանցի մօտ հատով առնողներին 40 կոսկե-
կով. իսկ գումարով առնողներին դիջումն կը լինի:





45
18

